

ՊԵՏՐԱՍԻ  
ԵՎԱՆԱԳԻՆ  
ԴՐԱԴԱՐԱՆ

Խ 40-45

Խ 40-45

ՀԱԿՈՅ ՊԱՐՈՒՅՐԱՆ

ՄԵՇԱՊԱՏԻՎ  
ՄՈՒԲՈՑԿԱՆՆԵՐԸ

ԳԵՂԱԿԱՆ ՀՐԱՄԱՆԱԳՐԱԳՐԱՆ

1956

891.99

Դ - 34

ОТДЕЛ  
ЦИФРАЛЬНОЙ ЛИТЕРАТУРЫ

891.99  
7-34

6 NOV 2011

ՊԵՏԱԿԱՆ ԵՋԱՆՈՂԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ

№ 43-45,

№ 43 45

ՀԱՐՄ.  
Զ-10552

Հ. ՊԱՐՈՒՅՐ

9/4

4001 ՄԵԾԱԳԱՏԻՎ,  
ՄՈՒՐՈՑՎԱՆԵՐԸ

ГЛ.Б. в Лигре  
Л. 1934 г.  
Акт № 251



ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՑՈՒԹՅՈՒՆ  
ՏԵՐԵՎԱՆ  
1934

17.07.2013

50174

ՀՈՎ ԽՈՅ 8-

Ա.

Հազար ութը հարյուր յոթանասուն...  
չեմ հիշե՛ք քանիին, աեպտեմբերի յերեսունը  
մեկին—ներեցե՛ք, յերեսունին պիտի ըսեյ՛,  
վասնղի սեպտեմբերն յերեսուն որ միայն  
ունի— յերկար և ընդարձակ թիկնոցի մը մեջ  
փաթթոված միջահասակ և գիրուկ մարդ մը,  
վոր Տրապիզոնի շոգենավեն նոր յելած եր,  
Ղալաթիո նավամատուցին վրա կայնած՝ նա-  
վակե մը յուր սնտուկները հանել կաշխատեր:

Կը սեսնեք՝ վորչափ պարզությամբ սկը-  
սա: Պատմությունս հետաքրքրական ընելու  
ջանքով և անկից քանի մը հարյուր որինակ  
ավելի ծախելու համար չըսի, թե նույն որն  
սաստիկ հով մը կար, թե տեղատարափ անձրև  
կուգար, թե խառն բազմություն մը հետա-  
քրքրությամբ դեպի ի Ղալաթիո հրապարակը  
կը վագեր, թե վոստիկանությունն աղջիկ մը  
ձերբակալած եր և այլն խոսքեր, վորովք վի-  
պասաններն կսկսեն միշտ իրենց վեպերը: Յես  
ալ կրնայի ըսել այս ամենը, բայց չըսի, վո-  
րովհետեւ նույն որն վոչ հով կար, վոչ անձրև,  
վոչ խոռն բազմություն և վոչ ձերբակալված  
աղջիկ մը:



39937-69

Պատ. խմբ.՝ Ա. Հայրյան, Տեխ. խմբ.՝ Տ.  
Խաչվանքյան, Սրբադրիչ Մ. Գևորգյան:  
Գլավէլիտ 8408 (բ), Պատգեր 163 Հրատ.  
2832, Տիրած 5000:

Պետհրատի տպարան - Յերեվան:

Հանձնված և արտադրության 24 I 1934 թ  
Ստորագրված և տպագրության 5 V 1934 թ

Արդ, առանց կասկածելու հավատացեք  
պատմությանս, վոր ժամանակակից դեպք մ'ե:

Այս ճամբորդն ոժտված եր զույգ մը խո-  
չոր և սև աչքերով, զույգ մը հաստ, սև և յեր-  
կար հոնքերով, զույգ մը մեծ ականջներով և  
զույգ մը քիթեր... չե՛, չե՛, մեկ քիթով, թե-  
պետ և բայց զույգ մը քիթերու տեղ կընար  
ծառայել. անոր մեծությունը սխալեցուց զիս:  
Ուներ այնպիսի նայվածք մը, վորուն յեթե  
պ. չ. Վարդովյան<sup>1)</sup> հանդիպեր յուր աչերով,  
կը հարցուներ այդ մարդուն. «Ի՞նչ ամսական  
կուզես՝ թատրոնիս մեջ ապուշի դեր կատարե-  
լու համար»:

Սնտուկներն և անկողինն, վոր քուրջի մը  
մեջ ներփակված եր, նավակեն հանելուն պես  
ճամբորդն քաշեց քսակն և նավավարին իրա-  
վունքը վճարելով՝ բեռնակիր մը կանչեց:  
Հինգ բեռնակիրներ ներկայացան իրեն: Տա-  
րակույս չկա, վոր յեթե հինգ կանչեր, քսան  
և հինգ պիտի ունենար յուր առաջեւ մայրա-  
քաղաքիս սովորությանը համեմատ:

— Վո՞ր կողմ պիտի յերթաք աղա, հար-  
ցուց բեռնակիրներեն մին՝ մեկ վոտքը սնտուկ-  
ներեն միույն վրա կոխելով:

\* ) Հակոբ Վարդովյանը 79, 80-ական թվական-  
ների անվանի գործիչ եր, դերասան, թատրոնական  
խմբերի կազմակերպիչ:

— Բերա, Ծաղկի փողոց թիվ 2, պիտի  
յերթամ, պատասխանեց խոշոր մարդը:

— Շատ աղեկ, հասկցա, Բերա, Ծաղկի  
փողոց... պատվական փողոց մ'ե, ըսավ հար-  
ցումն ընող բեռնակիրն և սնտուկ մը շալիե-  
լով սկսավ երթալ:

— Ծաղկի փողոցն յես ալ գիտեմ, ըսավ  
յերկրորդ բեռնակիրն և սնտուկին մեկն ալ  
ինք առնելուն պես՝ Բերայի ճամբան բոնեց:

— Յես ամեն որ կերթամ Ծաղկի փողոցն,  
ըսավ յերրորդն և մարդուն անկողինը գետնեն  
վերցնելն, կոնակին վրա առնելն ու վագելն  
մեկ ըրավ:

Այս գործողություններն այնքան արագու-  
թյամբ կատարվեցան, վոր մարդը շվարելով  
սկսավ չորս կողմը նայիլ՝ տեսնելու համար  
բեռնակիրներն, վոր բազմության մեջ անհայտ  
յեղած ելին:

— Ի՞նչ խայտառակություն ե աս, պոռաց  
վերջապես վոտները գետինը գարնելով, ո՞ւր  
տարին անկողինս և սնտուկներս, ատոնք  
ի՞նչ իրավունք ունին իմ անկողնուս և սնտուկ-  
ներուս խառնվելու, ի՞նչ աներես մարդ են  
յեղեր այս տեղաց մարդերը. ինչ վոր կը տես-  
նեն, կառնեն, կը տանին:

— Ծաղկի փողոցը մենք ալ գիտենք, ա-  
ղա՛, մեզի ալ բան մը տուր, վոր տանինք,  
ըսին մյուս յերկու բեռնակիրները:

— Ծաղկի փողոցն ալ գետնին տակն անց-

նի, դուք ալ, պատասխանեց մարդն, վորուն  
այտերն նեղութենե կարմրիլ սկսած էյին:

Յերկու բեռնակիրները խնդալով հեռա-  
ցան. և ճամբորդն ալ յուր սնտուկներուն յե-  
տեւն յերթալ կը պատրաստվեր, յերբ բարձ-  
րահասակ, թխադեմ, փոքր աչերով մարդ մը  
ուսերը տնկած, ձեռները շփելով և բռնազբոս-  
յալ ժպիտով մը մտտեցավ անոր և քաղաքա-  
վարական ձեռվ մը ձեռները բռնելով հարցուց.

— Դո՞ւք եք Արիսողոմ աղա, յե՞րբ յե-  
կաք, վո՞ր շոգենավով յեկաք, ի՞նչպես եք,  
ձեր յեղբայրն ի՞նչպես ե, ազգային գործերն  
ի՞նչպես են Տրապոն, Հացին գինը քա՞նի յե-  
հոն, անձրև յեկա՞վ այս որերս ձեր քաղա-  
քը... վայ, Արիսողոմ աղա, վայ...

— Յես եմ Արիսողոմ աղա, հիմա յեկա,  
տաձկի շոգենավով յեկա, շատ աղեկ եմ, յեղ-  
բայրս ալ աղեկ ե, ազգային գործերն ալ աղեկ  
են Տրապոն, Հացին գինը մեկ դահեկան ե.  
անձրև չեկավ այս որերս մեր քաղաքը, պա-  
տասխանեց փութով թիկնոցաբնակն՝ առանց  
ճանաչելու այս անձն:

— Ներեցեք, թողություն ըրեք, վոր  
չկրցի մինչև շոգենավ գալ զձեզ դիմավորելու  
համար: Ինձի գրված նր Տրապոննեն, վոր այս  
շարթու անպատճառ հոս պիտի գաք...

— Յես ատանկ բաներու չեմ նայիր:  
— Արդարեւ մայրաքաղաքս ինքինքը բախ-  
տավոր համարելու յե ձեզի պես պատվական

ազգային մը, չնորհալի յերիտասարդ մը, վոդ-  
ջամիտ մեկը...

- Սնտուկներս...
- Ազնիվ սիրտ մը, վեհանձն հոգի մը...
- Բեռնա...
- Հայրենասեր անձ մը...
- Կիրները...
- Ազգասեր, ուսյալ, կրթյալ...
- Սնտուկ...
- Դաստիարակյալ...
- Ներըս առին, տարին...
- Ազնվասիրտ, ազնուախոհ, ազնվաղեմ  
մեկը իր մեջ ունենալուն համար:
- Սնտուկներուս մեջ ատանկ բաներ չը-  
կան, պատասխանեց Արիսողոմ աղան քալել  
սկսելով՝ բեռնակիրները գտնելու համար:

— Թեպետե դուք զիս չեք ճանչնար, բայց  
յես ձեր գերդաստանը խիստ լավ կը ճանչնամ.  
ձեր զուսահոգի հայրն իմ լրագրույս բաժանորդ  
եր: Շատ բարի մարդ մ' եր, աղքատներուն  
վողորմություն կուտար, աղքատ աղջիկներ կը  
կարգեր և իրեն դիմողներուն բարություն կը-  
ներ: Ասանկ վողորմած մարդերը շատ ապրելու  
յեն, բայց, ի՞նչ ոգուտ, անդութ մահը միշտ  
բարիները կառնե և թող կուտա չարերն, վոր  
ազգին չարություն ընեն: Թողունք սակայն  
հիները և ուրիշ բանի վրա խոսինք: Շոգենա-  
վուն մեջ հանգի՞ստ եյիք:

— Շատ հանգիստ եյի, պատվականապես

կերա, խմեցի և պառկեցա, պատասխանեց Արիսողոմ աղան՝ քայլերն չուտ և մեծ առնել սկսելով:

— Յեթե հանդիստ չըլլայիք, վաղվան լրագրույս մեջ պիտի գրեյի և ընկերության ուշադրությունը պիտի հրավիրեյի, ըսավ խմբագիրն յետևեն վաղելով:

— Շնորհակալ եմ:

— Կաղաչեմ, ըսեք ինձի, քանի՞ տարեկան էք:

— Քառասուն:

— Վաճառական եք, կարծեմ:

— Այո... յեթե անցագիր պիտի չինել տաք, հարկ չկա, վասն զի հատ մը ունիմ:

— Զե, վաղվան թերթիս մեջ պիտի գրեմ, վոր առաջի որը Տրապանեն մայրաքաղաք յեկավ մեծապատիվ Արիսողոմ աղա յերեւելի վաճառականն, վոր յուր լեզվագիտությամբ և վաճառականական հմտությամբն ծանոթ և մեր ազգայիններուն: Տաճկերեն գիտեք կարծեմ:

— Վո՞չ:

— Ֆրանսերե՞ն:

— Վոչ:

— Անգլիերե՞ն:

— Վոչ:

— Գերմաներե՞ն:

— Վոչ:

— Վնաս չունի, յես լեզվագետ պիտի ըսեմ

ձեզի համար և ձեր վրայոք գովեստով պիտի խոսիմ:

— Ամեն Պոլիս յեկողներուն անունները ձեր թերթին մեջ կը գրե՞ք:

— Գրեթե ամենն ալ, յեթե ձեզի պես պատվավոր ազգայիններ ըլլան:

— Պոլիսն գացողնե՞րն ալ կը գրեք:

— Գրեթե կը գրենք, յեթե պատվավոր ազգայիններ ըլլան:

— Հատ լավ, իմ անունս ալ գրեցե՞ք, յես պատվավոր ազգային մ' եմ: Մեր քաղքին մեջ արտերու, յեղերու, կովերու և ագարակներու տեր եմ... Ասոնք ալ գրե՛, ըսավ այնպիսի գեմքով մը, վոր կը հայտներ, թե մեծ շահ մ' ուներ այս խոսքերուն հրատարակությանը մեջ:

— Հոգ մի՛ ընեք. խոճի և արդարության պարտք մը կատարելու համար անոնք ալ կը գրեմ:

— Յերկու յերեք հատ սպասավոր ալ ունիմ... անոնք ալ լրագրույց մեկ կողմը կրնա՞ս անցունել:

— Ի՞նչու չե՞:

— Վոսկիե ժամացույց և շղթա ալ ունիմ, բայց չոգենավուն մեջ չգողցնելու համար վրաս չառի. անոնք ալ գրել պե՞տք ե, հարցուց Արիսողոմ աղան, վոր բոլորովին մոռցած եր սնտուկները:

— Ասոնք գրելու հարկ չկա:

— Շատ լավ, բայց մյուս ըսածներս լրա-  
դրույդ մեջ ամենեն առաջ դիր, վոր կարդան:  
— Այնպես ընելու միտք ունիմ:  
— Խոչոր գրերով գրա՞:  
— Հանգիստ յեղեք. ամենեն խոշոր գրերով:  
— Միայն հարուստ մարդերուն դալն և  
յերթալն կը գրեք... այնպես չէ՞:  
— Այո:  
— Յեթե աղքատ մարդերն ալ կը գրեք,  
չեմ ուզեր, վոր իմ անունս...  
— Բնավ յերեք, ստակ չունեցողներուն  
անունները բնավ չենք գրեր, նույնիսկ յեթե  
հազար վոսկի ալ տված ըլլան դպրոցի մը  
շինության համար:  
— Ըսել ե վոր գուք ամեն իրիկուն, հոս  
կոպասեք Պոլիս յեկող կամ անկից մեկնող  
հարուստները տեսնելու և անոնց անունները  
հրատարակելու համար, վորպեսզի ժողովուրդն  
դիտնա, թե ո՞վ յեկած ե և ո՞վ գացած է...  
Տարակույս չիա, վոր վաղը իրիկուն իմ անունս  
պիտի կարդամ ձեր լրագրին մեջ:  
— Այո՛, ձեր հասցեն տվեք, վոր տեղական  
թղթատարով դրկեմ լրագիրը:  
— Բերա, Ծաղկի վողոց, թիվ 2:  
— Շատ աղեկ, ըսավ խմբագիրն և դրա-  
նեն թուղթ մը հանելով բաժանորդներուն ցու-  
ցակին մեջ անցուց Արիսողոմ աղան:  
— Վաղը առառու լույսը չճղքված դրկե,  
վոր կարդամ իմ անունս լրագրին մեջ:

— Իրիկվան դեմ կը զրկեմ, վասն զի  
լրագիրս իրիկունները կը տպվիի:  
— Վորչա՛փ ուրախ կըլլայի, թե ձեր  
վաղվան լրագիրն առառուն տպեյիք... բայց  
վնաս չունի, իրիկվան թո՛ղ ըլլա, բավական  
է, վոր անունս խոշոր գիրերով գրվիի:  
— Այդ մասին հանգիստ յեղե՞ք. վաղը  
իրիկուն անպատճառ կը դրկեմ լրագիրն ընկա-  
լագրով:  
— Ընկալագրո՞վ... տեղական թղթա-  
տարով պիտի դրկեյիք հապա... Ընկալագիրն  
ո՞վ ե, տունս գիտե՞...  
— Ընկալագիրն թուղթ մ'ե, վորուն մեջ  
կը դրեմ «Ընկալա մեծապատիվ Արիսողոմ  
աղայեն... լրագրո տարեկան բաժանորդագին  
մեկ ու կես վոսկի». և այդ թուղթը ձեղի կը  
հանձնեմ, վորով տարի մը իրավունք կունենաք  
իմ լրագիրս ընդունելու:  
— Տարի մը շարունակ պիտի գրե՞ք իմ  
անունը:  
— Զե, բայց գուք բաժանորդ պիտի ըլլաք  
իմ լրագրույս՝ մեկ ու կես վոսկի վճարելով  
ինձի:  
— Մեկ ու կես վոսկի՞... շատ ե... յե-  
րեք քառորդ վոսկի չը բա՞վեր:  
— Խմբագիրները բաժանորդագնույն վրա  
սակարկություն չեն ըներ...  
— Շատ լավ. զրկեցեք ձեր լրագրերն և  
այն թուղթը, բան մ' կընենք:

— Սակայն չկարծեք, թե յես բաժանորդ գրելու նպատակով զձեղ տեսնելու յեկա, քավ լիցի, այդ պատիկությունը չեմ ընդունիր. բարեկամական պարտք մը կատարելու համար յեկա զձեղ տեսնելու:

— Հայտնի բան ե:

— Բնավ ձեր մտքեն չանցուցեք, թե այս մարդը մեկ ու կես վոսկի փրցնելու համար զիս տեսնելու յեկավ:

— Զեմ անցուցեր:

— Վասն զի կան խել մը մուրացկան խմբագիրներ, վորք Պոլիս յեկողները կողոպտելու համար անոնց քովը կերթան և բաժանորդ կը գրեն զանոնք. յես այդ բանը չեմ կարող ընել, վասն զի բնությանս մեջ չկա... յես իբրև պատվավոր մարդ կուղեմ ապրիլ:

— Հասկցա, իբրև պատվավոր մարդ կուզեք ապրիլ:

— Ինձ հետ ձեր ունեցած այս տեսակցությունն ալ ուրիշի մի՛ զրուցեք, վասն զի տեսակ մը բախտախնդիր, չվառական անձեր կան, վորք բանդագուշական կենսագրություններ կը գրեն և իմ անձնականությունս կը խծրծեն:

— Կը հասկնամ, անձնականությունդ կը խծրծեն:

— Որինակի հոսմար սա պարագային մեջ հանցանք մ' ունի՞մ յես. զձեղ դիմավորելու յեկա և խոստացա ձեր անունը լրագրույս մեջ հրատարակել. դուք ալ իբրև վողջամիտ ազգա-

յին մը բաժանորդ գրվեցաք. կաղացեմ, ըսեք, ձեր կոկո՞րդը ուխմեցի, վոր ինձի բաժանորդ դրվիք:

— Ամենաին:

— Ատբճանա՞կ ցցուցի:

— Բնավ յերբեք:

— Դանա՞կ քաշեցի:

— Վոչ. բայց ուրիշ առեղեր ատբճանակ կամ դանա՞կ ցցունելով բաժանորդ կը գրեն:

— Ատ ըսել չեմ ուզեր, սա ըսել կուզեմ, վոր դուք ձեր հոժար կամ քով բաժանորդ գրվեցաք:

— Այո՛:

— Յել յես վեհանձնաբար վարվեցա այս պարագային մեջ:

— Տարակույս չկա:

— Չվարվեցա այն խմբագիրներուն պես, վորք ոտարականի մը Պոլիս գալն իմանալուն պես՝ վազելով անոր տունը կերթան բաժանորդ գրելու համար:

— Այդ չվառականներն իրավունք չունին քու անձնականությունդ խծրծելու... դուն վստահ յեղի՛ր ինձի...

— Շնորհակալ եմ ձեզմե. մնաք բարով, Արիսողոմ աղա՛. որ մը մեր խմբագրատունը հրամմեցեք խահվե մը խմելու:

— Շատ աղեկ. որ մը կուզամ: Վաղվանին մեջ անցունելու ըս մոռնաք:

— Անհոգ յեղեք:

Արիսողոմ աղան և խմբագիրն բաժնվեցան իրարմե Բերայի քառողջույն առջև, ուր հասած ելին խոսելով:

Արիսողոմ աղան առանձին մնալով սկսավ ճամպան շարունակել՝ ինքն իրեն հետեւյալ խորհրդածություններն ընելով.

«Ես ինքինքս չեյի կարծեր այնչափ մեծ մարդ, վորչափ վոր կը կարծե այս խմբագիրն. բայց հարկավ ան ինձմե աղեկ գիտե իմ վորչափ մեծ ըլլալս, վասն զի խմբագիր մ'ե և ուսումնական ե...: Վաղը լրագրի մեջ իմ անունս տեսնողները անշուշտ իրար պիտի անցնին և հետաքրքրություն պիտի ունենան ինձի հետ տեսնվելու. վաղը պետք ե վոր կիրակի որվան հագուստներս հագնիմ և վոսկիե ժամացույցս ու շղթաս ալ դնեմ. սպասավորներս ալ հետս բերելու եյի. ո՞վ գիտեր...: Ամեն մարդ պիտի իմանա վաղը, վոր մեծ մարդ մը յեկած ե Կ. Պոլիս. աղնվախոհ, աղնվասիրտ, լեզվագետ, ուսումնական, դաստիարակյալ, կրթյալ և այլն մեկը, և յուրաքանչյուր կնիկ պիտի ըսե իր երկանը. «Մեր աղջիկը սա Արիսողոմ աղային տանք»: Երիկն ալ պիտի պատասխանե կնկանը. «Նայինք՝ Արիսողոմ աղան մեր աղջիկը կառնէ», անիկա հարուստ տեղե մը աղջիկ առնել կուզե հարկավ»: Այս պատասխանին վրա երկան և կնկան մեջ վեճ մը պիտի ծագի և իրարու գլուխ պիտի պատառեն. վորո՞ւ հոգ... Անունիս լրագրին մեջ անցնիլն սա ողուտն պի-

տի ունենա, վոր յերկու որվան մեջ հարուստ աղջիկ մը առնելով պիտի լմնցունեմ ամուսնության գործն, վորու համար միայն յեկած եմ հոս... այս ամուս...»:

Աղյուս բեռցված եշերու կարավաննեն եշ մը բարձիւրվելով Արիսողոմ աղային գեմ՝ ընդմիջեց զայն իր խորհրդածություններու մեջ, ուր ընկղզմած ըլլալով ուշադրություն չեր ըներ առջևնեն յեկող եշերուն, վորովք զի յե միշտ բերայի մեծ փողոցը:

— Մէկդի կեցիր, ըսավ իշավար պարսիկն Արիսողոմ աղային՝ արդարացնել ուզեկ լով յուր եշը:

— Ատ խոսքը առաջ ըսելու եյիր, վոր զգուշանայի, — պատասխանեց Արիսողոմ աղան և ճամպան շարունակեց :

## Բ

Բեռնակիրներն վոչ լսած և վոչ ալ տեսած ելին Ծաղկի փողոցն, բայց քաջալերվելով կարգ մը մարդերն, վորք գիտնալ կը ձևացունեն, ինչ վոր չեն գիտեր, և վորք խիստ բազմաթիվ են մեր ազգին մեջ, համարձակած ելին ըսել Արիսողոմ աղային, թե շատ աղեկ գիտելին Ծաղկի փողոցը:

Բեռնակիրներուն այս հանդպնությունն այնքան պարագելի չե, վորչափ այն մարդերուն, վոր խոհարարություն ուսած են և

բանադատության կընէն, կամ քիչ մը յերկրա-  
չափության պարապած ըլլալով՝ աստղերուն  
շարժումներուն վրայոք կը ճառեն, կամ յերկու  
սագ և չորս կով մեծցուցած ըլլալով՝ դաստիա-  
րակության խնդիր կը հուզեն, կամ զավակ մ'  
ունեցած ըլլալով՝ առաջին մարդուն վո՞ր աշ-  
խարհի մեջ ծնած ըլլալուն վրա կատենաբանեն,  
կամ վերջապես անանկ նյութի մը վրա կը  
խոսին, վոր բոլորովին ոտար ե իրենց. այո՛,  
այս մարդերուն հանդինությունն ավելի յե,  
վասնզի բանադատությունն կամ աստղադիտու-  
թյունն կամ մանկատածությունն և այլն Ծաղկի  
փողոց չե, վոր ուրիշներուն հարցնելով անմիջա-  
պես սովորի մարդ: Յեվ արդարեւ բեռնակիր-  
ներն, ամեն քայլափոխին, իրենց դեմն յելնող-  
ներուն հարցունելով՝ անմիջապես գտան Ծաղկի  
փողոցն և թիվ 2 տան դուռը զարկին. մինչդեռ  
յես շատ ատենաբաններ մտիկ ըրած եմ, վոր  
յոթը ութը ժամ շարունակ խոսելով՝ չեն կա-  
րողացած իրենց փնտուած փողոցը գտնել և  
սովիպված են ուրիշ փողոցներու մեջ թափառիլ  
և թափառեցընել իրեն ունկնդիրներն՝ անոնց  
քթեն բռնելով:

Եեռնակիրները դուռը զարնելնուն պես դու-  
ռը բացվեցավ և ներկայացավ իրենց թուխ և  
յերկար դեմքով կին մը, վորուն դեմքին վրա  
ժամանակն այնքան գծեր գծած եր զայն սրբա-  
դրելու համար, վորքան վոր կը դժե «Մասի-

սի»<sup>1)</sup>) խմբագիրն յուր չորս տող մեկ ձեռագլին  
վրա, վոր կամ մեկուն վախճանիլը կիմացունե  
և կամ ուրիշի մը կարգվելը:

Բեռնակիրները դռնեն ներս մտնելով  
բեռները գետինը ձգեցին և սկսան իրենց  
քրտինքը սրբել:

— Արիսողոմ աղային ըլլալու յեն ասոնք,  
այնպես չե՞, հարցուց բեռնակիրներուն թխա-  
դեմ տիկինը:

— Անունը չըսավ մեղի, պատասխանեց  
բեռնակիրներն մին՝ սև թաշկինակովն գլխուն  
քրտինքը սրբելը շարունակելով:

— Ի՞նչ տեսակ մարդ եր:  
— Խոշոր թիկնոց մը հագած եր:

— Ի՞նչ գույնով եր, ճերմա՞կ, թե թուի:


— Վո՞չ, սև եր:

— Սե՞զ եր:  
— Այո, սև, բայց աղվոր, անոր փաթու-  
վողը ձմեռը չմրսիր:

— Ատ ի՞նչ խոսք ե, փաթուվիլն ի՞նչ  
պիտի ըլլա... յես քուկին գիտցած կնիկներեն  
չեմ, հասկցա՞ր, ըսավ տիկինը յուր խոսքերը  
շեշտելով:

— Վնասակար բան մը չըսի, փաթուվե-  
լով ի՞նչ կըլլա յեղեր, պատասխանեց բեռնա-

1) «Մասիս» — պահպանողական շաբաթաթերթ եր,  
հետագայում ոռաթերթ և դարձյալ շաբաթաթերթ. հա-  
տարակվել և Պոլսում 1882 թվականից մինչև 1889  
թվականը:



կիրն աթոռի մը վրա փոելով յուր թաշկինակն։  
— Ատկե ավելի վնասակար ի՞նչ կրնա  
ըլլալ։  
— Շատ բարակ բաներու մեր խելքը չը-  
պառկիր։  
— Յես կը պառկեցունեմ . . . դուն զիս կը  
ճանչնա՞ս . . .  
— Փաթտըվելեն ի՞նչ վնաս կուգա։  
— Յես երիկ ունիմ, ինչո՞ւ պիտի փաթ-  
տըվիմ յեղեր անոր։  
— Երիկ ունեցողներն ալ կը փաթտըվին.  
Երիկը ուրիշ, աս ուրիշ. աս կը տաքցունե։  
Ըսենք վոր ձմեռը գիշեր մը դուրս յելար,  
փողոցին մեջ երկանըդ չես կրնար փաթտըվիլ,  
բայց աս կոնակդ կառնես . . .  
— Արիսողո՞մ աղան։  
— Թիկնոցը, տիկին . . . Արիսողոմ աղան  
կոնակի վրա կառնըվի՞։  
— Մինչեւ հիմա թիկնոցի՞ վրա կը խո-  
սեյիր։  
— Խոսքերնիս թիկնոցի վրա չե՞ր մի . . .  
հապա դուն ի՞նչ հասկցար։  
— Յես հասկցա, վոր Արիսողոմ աղային  
փաթտըվելու յե, կըսես։  
— Տեր վողորմյա, տեր վողորմյա, տեր  
աստված, ըսավ բեռնակիրն՝ թաշկինակը  
քաշելով աթոռեն։  
— Տիկինն բեռնակիրն տված բացատրու-

թենեն գոհ ըլլալով՝ հրամայական յեղանակով  
մը ըսավ։  
— Աս անկողինն և սնտուկները վե՛ր հա-  
նեցեք։  
Բեռնակիրներն հնազանդելով բեռներն նո-  
րեն վերցուցին, և հազիվ թե սանդուղին առա-  
ջին աստիճանին վրա կոխած եյին, տիկինն  
պոռաց։  
— Լեռնե՞ն յեկաք դուք։  
— Վոչ, մեծ փողոցեն յեկանք։  
— Գիտեմ, վոր մեծ փողոցն յեկաք.  
այդ վոտքի ամաններով վեր կելնըվի՞, տե-  
սեք՝ ի՞նչ ըրիք տախտակներս, յես այսոր  
սրբեցի զանոնք, և հոգիս բերանս յեկավ։  
— Ի՞նչ ընենք, ուրիշ վոտքի աման չու-  
նինք։  
— Ինչո՞ւ կայներ յերեսս կը նայիք, չը-  
հանե՞ք տրվոնք։  
— Մի՛ պոռար, տիկինն, մի՛ պոռար, կը  
հանենք։  
Յեվ հանեցին իրենց վոտքի ամաններն,  
վորք ավելի մաքուր եյին, քան իրենց վոտ-  
ներն։  
— Այդ վոտքերով վեր պիտի յելնեք.  
կրկնեց տիկինն։  
— Ուրիշ վոտք չունինք, այս վոտներով  
պիտի յելնենք, պատասխանեցին պանդուխո-  
ներն այնպիսի խղճուկ կերպով մը, վոր կար-  
ծես թե իրենց աղքատության պատճառով

յեշկու վոտքեն ավելի չեյին կրցած ունենալ,  
և վորպես թե հարուստներն չորս, հինգ կամ  
վեց վոտք ունեցած ըլլային:

— Վա՛ր իջեք, չեմ ուզեր, գետինը ձգե-  
ցե՛ք, յես կը տանիմ:

— Աստանկ ավելի աղեկ կըըլա:

— Ա՛հ, յես ի՞նչ ըսեմ իմինիս, վոր գոր-  
ծի չերթար, և առտվրնե մինչև իրիկուն  
սրճարանները կերթա, կը նստի, աղջային  
գործերու վրա կը խոսի, զիս աստանկ խեղձ  
կը թողու, և յես ալ կստիպվիմ տունս մարդ  
գնելու, մոմուաց ինքնիրեն տիկինն և սան-  
դուղին առջև դրված թաց լաթով մը սան-  
դուղին առաջին աստիճանն սրբել սկսավ:

— Տիկին, մենք սպասե՞նք պիտի...

— Յեթե խելքը գլուխը մեկն ըլլար,  
շարունակեց տիկինն ինքնիրեն, յես հիմա  
թագուհիի մը պես կյանք կանցունեյի. զավակ  
չունիմ, բան չունիմ. բայց ինչ ընեմ, վոր  
խելքը միտքը թաղական<sup>1</sup>) ընտրելու և թա-  
ղական վար առնելու վրա յե: Աստուծմե գրտ-  
նան այն թաղականներն ալ, վոր ամենուս  
ինեղծությանը պատճառ կըլլան կոր: Ինչո՞ւդ

<sup>1)</sup> Ալսինքն թաղական խորհրդի անդամ:

Թաղական խորհուրդ — ըստ Ազգային սահմանա-  
դրության տաճկահայերի ինքնավարական որգանների  
հիմնական քջին եր — թե Պոլսում և թե գավառնե-  
րում — վոր ընտրվում եր տեղական ժողովրդի կողմից  
շրջանի ազգային կուտարական գործերը տնօրինելու  
համար:

ոկետք քուկին, Թնա՛չեն, ուզողը նստի, չու-  
զողը չնստի, դո՞ւն մնացիր այս ազգին գոր-  
ծերը շտկող...

— Տիկին, մեր իրավունքը տուր, վոր  
յերթանք, պարապ տեղը չսպասենք հոս, ըսին  
բեռնակիրները:

— Վաղը յեկեք, պատասխանեց տիկինն.  
և բեռնակիրներն, վորք վաղը բառն ամեն որ  
լսելու վարժված եյին, տիկնոջ պատասխանին  
վրա դռնեն դուրս յելան:

— Թաղականի մը յետեն ե ինկեր, շա-  
րունակեց տիկինն դարձյալ, և բնավ չմտմը-  
տար, վոր ուտելու համար հաց պետք ե, միս  
պետք ե, յեղ պետք ե, բրինձ պետք ե. զա-  
նոնք յեփելու համար փայտ պետք ե, ածուխ  
պետք ե. ասոնք բնավ չը հարցուներ, առտուն  
լուսը չճղբված կերթա և իրիկվան մութուն  
կուգա: Ահա հյուրերնիս այսոր յեկած ե և  
ժամե մը հոս պիտի գա. հարկավ անոթի յե  
մարդն, առջենք բան մը հանելու յե, վոր ու-  
տե, և մենք բան մը չունինք, վասն զի իրի-  
կունները տուն յեկած ժամանակը կտոր մը  
միս կամ ձուկ չբերեր, վոր տունին մեջ կերա-  
կուր գտնվի... թաղականեն ուրիշ բան չու-  
նինք տուներնուս մեջ, ամեն իրիկուն թաղա-  
կան...

Տիկինն դեռ դիտողություններն լմնցուցած  
չեր և ահա յոթանասունի մոտ մարդ մը, վոր  
բանալիով բացած եր դուռն, ժպիտով ներս

մտավ և բարեեց տիկինը։ Այս մարդը տէկնոյչ ամուսինն եր։ Յուր խորշոմած կունտ ճակատն չափեն ավելի դուրս ցցված եր և այնպիսի դեմք մը ուներ վոր կարծես, թե մեկն զայն կը խողտեր։

Այս մարդն հազիվ թե դռան սեմեն ներս վոտք կոխած եր, կինն առջևն յելնելով՝ հարցուց անոր.

— Ո՞ւր եյիր մինչեւ հիմա, մարդ աստուծո։

— Չես ըսեր, կնի՛կ, թաղականին գործն ալ այսոր լմնցուցինք. կիրակի որը քվեարկությունը պիտի կատարվի, և բոլոր անդամները պատվավոր մարդիկ պիտի ըլլան։ Թորոս աղան ինձի քանի մը ողի խմցունելով յետեկն ինկավ, վոր յուր ուզած մարդոցը քվետամ, բայց յես իմ մարդոցս տվի, վասն զի իմ մարդիկս ինձի ամեն գիշեր ողի կը խմցունեն և շատ բարի և պատվավոր մարդիկ են, ուրիշներուն պես թաղին սնդուկեն ստակ չեն դողնարև գպրոցն ալ…

— Այդ խոսքերուն ատենը չեւ հիմա, շուտ մը գնա՛, կտոր մը միո ա՛ռ։

— Թորոս աղան քիչ մը սրդողեցավ, և ասկից վերջը հետո սբամպիլ չպիտի խաղաթո՛ղ չխաղա՛…

— Յես քեզի ի՞նչ կըսեմ կոր… շուտ ըրե՛, գնա՛։

— Յես ալ տիրացու Մարտիրոսին հետ տամա կը խաղամ ասկից յետքը…

— Այդ խոսքերը վերջն ալ կընենք, Մանուկ աղա, զնա մսավաճառեն քիչ մը միս առու բեր։

— Տիրացու Մարտիրոսին գլխուն յեկածը չես ըսեր, կնի՛կ. խեղձին կինն այս գիշեր մազ մնացեր ե, վոր մեռնի յեղեր…

— Ինչո՞ւ։

— Մանչ մը բերեր ե. բայց շատ դժվարությամբ. չորս դայակ և տասնվեց բժիշկ հազիվ կրցած են տղան առնել։

— Խեղձ կնիկ…

— Վաղը քիչ մը գնա՛, զինքը տե՛ս։

— Կերթամ, հիմա դուն գնա, սա մսին դործը լմնցուր։

— Այս գիշեր անպատճառ միս պե՞տք ե։

— Հապա, Արիսողոմ աղային անկողինն ու սնտուկները բերին, ինքն ալ հիմա կուգա։

— Իրա՞վ կըտես, կնի՛կ։

— Սուտ ինչո՞ւ պիտի խոսիմ։

— Շատ աղեկ ուրեմն. յեթամ պատվական միս մ' առնեմ ու գամ։

Մանուկ աղան անմիջապես տունեն դուրս յելավ և հազիվ թե քանի մը քայլ առած եր, կինը յետեկն պոռակ սկսավ։

— Մա՞նուկ աղա, մա՞նուկ աղա…

Մանուկ աղան յետ դարձավ։

— Միսն ի՞նչով պիտի յեփենք, հարցուց կինը:

— Կուզես գետնախնձորով յեփե՛, կուզես լուբիայով:

— Ատ չե իմ ըսածս ածուխ չունինք, քիչ մ' ալ ածուխ առնելիր:

— Շատ աղեկ, պատասխանեց Մանուկ աղան և սկսավ յերթալ:

— Եմանուկ աղա, Մանուկ աղա, կանչեց տիկինը նորեն:

Ցետ դարձավ Մանուկ աղան:

— Աղեկ ա՛, մինակ միսով չըլլար, քիչ մ' ալ բրինձ ա՛ռ, վոր ապուր մ' ալ շինենք:

— Աղեկ ըսիր, կնի՛կ, քիչ մ' ալ բրինձ առնենք:

Մանուկ աղան այս անգամ վազելով սկըսավ յերթալ. վորոցը դառնալու վրա յեր, յերբ կինն բոլոր ձայնովն յետևեն զայն կանչեց.

— Մանուկ աղա, Մանուկ աղա... Ման...

Կանգ առավ երիկն և վերստին յետ դարձավ՝ այս անգամ գեմքին զվարթության վըրա քիչ մը զեղչ ընելով:

— Ի՞նչ կուզես...

— Մարդ աստուծո, շոգեկառքի պես կը վազես, ձայնս մարեցավ: Սոխ չունինք, աղա չունինք, քիչ մ' ալ կազ կամ ճրագ առնելու յե, վոր վառենք. մարդը մութո՞ւն պիտի նստեցունենք:

— Աղեկ ա՛, ամենը մեկեն ըսէ, վոր նըսպարավաճառին յերթամ և պետք յեղածներն առնեմ, հարյուր անգամ յետևես կանչեցիր:

— Զուրի շիշ ալ չունինք... գլուխս կապեալու բան մը չունիմ, վոտքս հազնելու կոչիկ չկա. այս վիճակին մեջ ի՞նչպես Արիսողոմ աղային դեմը յելնեմ:

— Հիմա ուտելիքը առնենք, վաղն ալ հազնելիքը կը մտմտանք, ըսավ Մանուկ աղան և դուռն ուժով մը քաշելով դուրս յելավ:

— Մանուկ աղա, Մանուկ աղա...

— Ուզածիդ չափ պոռա՛, ա՛լ յետ չեմ դառնար, մոմոաց Մանուկ աղան և ճամբան շարունակեց:

Մանուկ աղան քանի մը փողոց դարձած եր, երբ կնկան ձայն մը առավ, վոր զինք կը կանչեր.

— Գործ չունիս նե, պոռալով յետևես վազե, ըսավ ինքնիրեն Մանուկ աղան՝ առանց գլուխսն յետ դարձնելու՝ տեսնելու համար, թե ով եր զինք կանչողը:

— Մանուկ աղա, Մանուկ աղա, կրկնեց ձայնը, վոր տիրացու Մարտիրոսին տասնամյա աղջկանն եր:

Մանուկ աղան շարունակեց յուր ճամբան. և տիրացու Մարտիրոսին աղջիկն՝ քայլերն փութացնելով՝ տասը քայլ հեռավորությամբ մոտեցավ անոր: Խեղճին շունչը կըտրած ըլլալով՝ անգամ մ' ալ կրցավ պոռալ.

— Մանուկ աղա:

Դարձյալ պատասխան չառավ և ստիպվեցավ քիչ մ' ալ քալելով Մանուկ աղային հագուստի ծայրեն քաշելու:

— Թո՛ղ տուր, կնի՛կ, ըստավ Մանուկ աղան՝ առանց յետելը նայելու:

— Բան մը պիտի ըսեմ:

— Մաիկ ընէլու ժամանակ չունիմ. ըսածներդ արդեն չեմ կրնար միտքս բոնել, հիմա յեղեր, ուրիշ բաներ ալ պիտի ըսես...

— Դայակին տունը պիտի հարցունեյի...

Դայակ բառը լսելուն պես արթնցավ Մանուկ աղան և յետելը տիրացու Մարտիրոսին աղջիկն տեսնելով՝

— Աղավնի, զո՞ւն եյիր յետես վազողը հարցուց անոր:

— Ա... յո... յես... պատասխանեց Աղավնին, վոր հեալեն ա՛լ չեր կարող խոսիլ:

— Մայրդ ի՞նչպես ե:

Աղավնին կը հելար:

— Չըսե՞ս, մայրդ ի՞նչպես ե... դժբախտությո՞ւն մը պատահեցավ:

Աղավնին բոլոր պատասխանը հնիվալեր...

— Հետաքրքրութենես պիտի ճաթիմ... չըսե՞ս, աղջիկ, հեվալու ժամանա՞կ և հիմա, մայրդ ի՞նչպես յեղավ:

— Մայ... ըի... կա... ա... դեկ ե, բայց

.... տը... դան... ծիծ չը... բո... ներ...  
կոր... դա... յա... կը... պի... տի...

— Շատ լավ, շատ լավ, աղջիկս, դուն տուն գնա, դայակն յես կը զրկեմ:

Աղավնին բաժնվեցավ Մանուկ աղայեն. վոր ճամբան փոխեց դայակին տունը վնտուելու համար:

Զուգելով մեր ընթերցողին ճանձրույթ պատճառել կը թողունք Մանուկ աղան, վոր ամեն քայլափոխին բարեկամի մը կը հանդիպեր և անոր կծանուցաներ կամ թաղականին ընտրությունը կամ տիրացու Մարտիրոսին կնկան մանչ զավակ մը բերելն կամ Արիսողոմ աղային գալը: Դառնանք հիմա Արիսողոմ աղային:

## Գ

Բավական յերկար տարիներե ի վեր սովորություն յեղած ե, վոր շատերը ուսումնելու համար ֆրանսա կամ Գերմանիա յերթալեն յետքը մայրաքաղաքս կուգան կին առնելու համար, և ընթերցողն ալ գիտե արդեն, վոր Արիսողոմ աղան ալ ուրիշ նպատակով յեկած չեր կ. Պոլիս: Ընթերցողն չմոռցավ նաև, թե այս ամուսնության խնդիրն վո՛րչափ միտքը դրաված եր Արիսողոմ աղային, վոր առջեն յեկող եշերը չտեսնելով՝ անոնց միույն գեմ բաղխավեցավ: Թերես հարցվէ, թե Արիսողոմ աղային դեմ բաղխավող ավանա՞կն ալ ա-

մուսնության վերաբերյալ դործ մ' ուներ, վորյուր առջեր չտեսավ Արիսողոմ աղային պես խոշորմարդ մը: Անոնք, վոր պատմության քիչ կամ շատ ծանոթություն ունին, գիտեն, վոր եշերը, վորոնց նախահայրերեն մին ժամանակով հրեշտակ տեսած ե<sup>1</sup>), բնավ կարևորություն չեն տար մահկանացուներուս և կուզեն, վոր միշտ մենք ճամբա բանանք իրենց: Արիսողոմ աղան յեթե պատմության տեղյակ ըլլար, կամ կին առնելու խնդիրով միտքն զբաղեցուներ, անշուշտ ճամբա պիտի բանար, այդ արարածներուն, վորք իրենց ականջներով Միդաս<sup>2</sup>) թագավորին ներկայացուցիչներն ըլլալու պատիվն ալ կը վայելեն:

Արդ, Արիսողոմ աղան եշերեն բաժնվելեն յետքը Ծաղկի փողոցը գտնելու համար անոր ասոր հարցումներ կուզեր. վասնզի ինքն առաջին անդամ եր, վոր Պոլիս կուզար, և Տրապիզոն բնակվող բարեկամներեն մին խորհուրդ տված եր իրեն, թե հանգիստ ուտելու և պառկելու համար հիշյալ փողոցը, հիշյալ թիվը կրող տունն իշնելու յեր: Այդ բարեկամն շաբաթ մը առաջ Մանուկ աղային

1) Հետեակ տեսած եօր Միջագետքի մոգ Բաղամի եշն ե (ըստ Աստվածաշնչի), վոր հրեշտուկ տեսավ և խոսել սկսեց:

2) Միդասը փոյսուգիական առասպելական թագավոր եր, վորին պատժեց Ապոլոն աստվածը նրա գլխին իշի ականջներ բուսցնելով:

ալ նամակով իմացուցած եր, վոր Արիսողոմ աղան իրեն տունը պիտի բնակեր: Արիսողոմ աղան իրեն տրված տեղեկություններուն համեմատ մեկ փողոցեն կը մտներ, մյուսեն կելլեր, յերբեմն ալ սխալմամբ անել փողոցներու մէջ կը մտներ, կը բարկանար, յետ կը դառնար և մեկ կողմեն ալ կը կասկածեր, վոր բեռնակիրներն իրեն անկողինն և սնտուկներն առնելով չփախչեցին, թեպետ և անոնց հավատարմությունն շատերեն լսած եր:

Ժամու մը չափ Բերայի փողոցները չափելեն յետքը՝ Արիսողոմ աղան հաջողեցավ վերջապես գտնել Ծաղկի փողոցն, զոր շփոթելու չենույն անունը կրող փողոցին հետ, վոր Բերայի հրդեհեն մոխիր դարձած եր հազար ութը հարյուր յոթանասունը չեմ հիշեր քանիին: Այս փողոցն Ծաղկի փողոց կանվանվեր սա պատճառով, վոր հոն բոլոր տուներուն պատուհաններուն առջեւ միշտ ծաղիկներ կը գտնվեյին:

— Յերկու թիվն վո՞րն ե, հարցուց, առանց գիտնալու, Մանուկ աղային կնոջը, վոր դուան առջեւ յուր երկանը գալստյան կսպատեր:

— Աս ե, հրամմեցեք, Արիսողոմ իաղա, պատասխանեց տիկինը:

— Անկողինս և սնտուկներս բերի՞ն:

— Բերին, Արիսողոմ աղա, վեր հրամմեցեք, Արիսողոմ աղա, յեթե կուզեք, քիչ մը հոգնություն առնելու համար սա պզտիկ տենու

յակը նստեցեք, ըսավ կինը գետնահարկի վրա  
պղտիկ խուց մը ցույց տալով:

— Շատ հոգնած եմ, քիչ մը հոս կը նստիմ:

— Զեր կամքն ինչպես վոր կուզե, այնպես  
ըրե՛ք, Արփիսողոմ աղա. տունը ձերն ե, Արփիսո-  
ղոմ աղա. ձեր տունին պես հանդեստ ըրե՛ք:

— Շնորհակալ եմ:

Արփիսողոմ աղան պղտիկ սենյակը մտավ  
առաջնորդությամբ տիկնոջ, վոր դամբար մը  
բռնած եր, վորուն կազը հատնելու վրա յեր:

— Ի՞նչպես եք, Արփիսողոմ աղա, տունեն  
ի՞նչպես են, աղե՞կ են:

— Աղեկ են:

— Թող աղեկ ըլլան, ձեր զավակներն  
ի՞նչպես են, Արփիսողոմ աղա, դպրոց կերթա՞ն:

— Զավակ չունիմ:

— Զեր տիկինն ի՞նչ կընե, աղե՞կ ե,  
Արփիսողոմ աղա:

— Տիկին չունիմ դեռ:

— Կարգված չե՞ք, Արփիսողոմ աղա:

— Զե:

— Շատ լավ, հոս աղվորիկ աղջիկ մը  
դժունք ու պոլսեցի ընենք քեզի, Արփիսողոմ  
աղա:

— Անանկ միտք մը ունինք, պատասխա-  
նեց Արփիսողոմ աղան. բայց աղջիկն առաջ  
յես կերակուր կուզեմ, վասնզի առավնե ի վեր  
բերանս բան դրած չեմ:

— Շատ աղեկ, Արփիսողոմ աղա, շատ  
աղեկ. հիմա կը բերեմ ձեր կերակուրն:

Տիկինը դուրս յելավ և դուռը բանալով  
ումին վրա կայնեցավ՝ սպասելու համար  
Մանուկ աղային, վոր, ինչպես կը հիշեն  
ընթէրցողները, դայակ փնտռելու գացած եր:

Արփիսողոմ աղան սենյակին մեջ միակ  
մնալով՝ բարձի վրա դրված Զեն Հոգեւորն<sup>1)</sup>  
առավ և թղթատել սկսավ զայն. բայց վորով-  
հետեւ մարդս անոթի յեղած ժամանակ գիրք  
չկրնար կարդալ, ինչպես նաև չկրնար գիրք  
գրել, նորեն բարձին վրա դրավ Զեն հոգեվորն,  
վասնզի փորն կիմացուներ իրեն, թե Զեն  
մարմնավորին պետք ուներ, և սկսավ սենյա-  
կին մեջ պտըտելու:

— Կաղաչեմ, Արփիսողոմ աղա, վոր ձեր  
տունին պես հանդիստ ընեք, ըսավ տիկին՝  
սենյակը մտնելով:

— Անհանգստության պատճառ մը չունիմ,  
միայն թե անոթի յեմ և կերակուր ուտել կու-  
ղեմ:

— Կերակուրդ պատրաստվելու վրա յե,  
հիմա պիտի բերեմ, ըսավ տիկինը և դուրս

1) Զեն հոգեվոր — իսկական վերնագիրն և «Գիրք  
կոչեցիալ Զեն Հոգեւոր», Պոլսի պատրիարք Հակոբի  
աշխատությունն ե, լույս ե տեսել Պոլս ւմ 1757 թվա-  
կանին. ունի կրօնական-բարոյախոսական բովանդա-  
կություն և միծ հոչակ և վայելել հոգեւորականության  
շրջաններում:

յելավ նորեն դռան առջեւ երկանը սպասելու  
համար:

— Ի՞նչ տեսակ կնիկ է այս, ըսավ Արիսո-  
ղոմ աղան, յերք առանձին մնաց, զիս անոթի  
կը պահե և կը պատվիրե, վոր հանդիստ ըլլամ՝  
անոթի մարդը հանդիստ կրնա՞ ըլլալ...

— Սեպե՛ թե յես ալ քու քույրդ եմ կամ  
աղջիկդ եմ, ըսավ վաթսնամյա տիկինը դար-  
ձյալ ներս մտնելով, յեթե բան մը կուզես,  
մի՛ քաշվիր, ըսե ինձի, վոր բերեմ:

— Շնորհակալ եմ:

— Յես կուզեմ, վոր իմ տունս յեկող  
Հյուրերը չընեղվին:

— Կը հասկնամ. հիմակուհիմա կերա-  
կուրեն ուրիշ բան չեմ ուզեր:

— Կերակուրը պատրաստվելու վրա յե,  
Հոդ մի՛ ընեք...

Տիկինը գեռ պիտի շարունակեր յուր բա-  
նակցությունն, բայց դուռը զարնվելով՝ դուրս  
վազեց շուտով, վորպեսզի դուռը բանա, երիկը  
դիմավորե և բերած պաշարներն առնե ու կե-  
րակուր յեփե:

— Վողջո՛ւյն, տիկին, ըսավ մեկը դուռը  
բացվելուն պես:

Հարկ չկա ըսելու, թե յեկողը կրոնավոր  
մ'եր, ինչու վոր անոնք միայն կը դործածեն  
վողջունը:

— Որհնյա՛ տեր, պատասխանեց տիկինը:

— Ի՞նչպես եք, աղե՞կ եք, տիկին:

— Փառք աստծո, տեր հայր:

— Մանուկ աղան հիմա դեմս յելնելով  
իմացուց, վոր հյուր մը յեկած է ձեզի այսոր,  
յես ալ յեկա վոր հետը տեսնվիմ:

— Շատ աղեկ ըրեր եք, ներս հրամմեցեք,  
տեր հայր, ըսավ տիկինն ցույց տալով խու-  
ցըն, վորուն մեջ Արիսողոմ աղան յուր անո-  
թությամբը կցրազեք:

Քահանայն ներս մտավ:

Արիսողոմ աղան վոտք յելավ:

— Վողջո՛ւյն, Արիսողոմ աղա:

— Որհնյա՛, տեր հայր:

— Մեղավորս ձեր բարեպաշտության գալն  
իմանալով՝ աճապարանոք յեկա ձեր ջերմեռան-  
դության պատվական վորպիսությունը հարցը-  
նելու. ի՞նչպես եք, Արիսողոմ աղա:

— Աղեկ ենք:

— Միշտ աղեկ ըլլա՛ք, տեր աստված ձեր  
մեռելոց արքայություն և կենդանյաց ավուրս  
յերկարս պարզեցեք:

— Շնորհակալ եմ. դուք ի՞նչպես եք, տեր  
հայր:

— Մեր աղեկությունը մի հարցունեք...  
ժամանակիս աղեկությունը... Տեր աստված  
զձեզ համենայն փորձանաց և ի չարե ազատ  
պահեցեք. ժողովուրդն յերբ աղեկ ըլլա, քահա-  
նայներուն ալ յերեսը կը ինդա:

— Այնպես ե, տեր հայր, պատասխանեց  
Արիսողոմ աղան՝ յուր աչերն չզատելով բնավ  
Մեծապահէվ մուրացկանները

խուցին դռնեն, ուսկից կերակուր կը հուսար:  
— Որհնա՛ծ, ժամանակը շատ գեշ է.  
ժողովուրդը շատ նեղություն կը քաշե, այս  
պատճառով ջերմեռանդությունն ալ որ ըստ  
որե պակաելու վրա յե:

— Իրավ ե:

— Բայց ի՞նչ պիտի ընենք, ի՞նչ կուգա  
մեր ձեռքեն՝ համբերելեն զատ... Սուրբ գիր-  
քը կըսե. Վոր համբերեսց իսպառ, նա կեցցե:

— Այնպես ե:

— Յեթե չհամբերենք, բարկանալ պետք ե,  
և մարդարեն կըսե. բարկանա՛յք և մի՛ մեղան-  
չեք:

— Ճիշտ ե, պատասխանեց Արիսողոմ ա-  
ղան, վորուն ականջը բնավ չեր մտներ քահա-  
նային խոսքերը և վոր քահանային ներկա-  
յութենեն նեղություն կիմանար. վասնզի, ինչ-  
պես գիտեն ընթերցազները, կերակուրեն ուրիշ  
բանի պետք չուներ:

— Զիվո՛չ հացիվ միայն կեցցե մարդ, այլ  
բանիւ տյառն:

Քահանայն քթախոտի տուփը ծոցեն հա-  
նեց և յերկու մատերովը քթախոտ լեցուց  
քթին ծակերուն մեջ և յետո, տուփը Արիսո-  
ղոմ աղային յերկնցնելով՝

— Հրամմեցե՛ք, որհնա՛ծ, ըսավ:

Արիսողոմ աղան չնորհակալությամբ ա-  
ռավ տուփն և քիչ մը քթախոտ քաշեց:

— Քիչ քաշեցիք, Արիսողոմ աղան, կա-

ղաչեմ, անգամ մ'ալ քաշեցեք, քթախոտը  
վնասակար բան մը չե.

Արիսողոմ աղան անգամ մ'ալ քաշեց,  
վորպեսզի խոսքը չերկարի և չյուրը մեկնի:

— Ի՞նչու աղեկ մը չեք քաշեր, Արիսողոմ  
աղան, կրկնեց քահանայն, շատկեկ քաշեցե՛ք:

— Շնորհակալ եմ, տեր հայր, սովորու-  
թյուն չունիմ:

— Կը խնդրեմ մեղավորիս խոսքը մի՛ կու-  
րեք, քիչ մ'ալ քաշեցե՛ք:

— Ալ չես քաշվիր, ըսավ Արիսողոմ աղան  
մեկուսի և քիչ մ'ալ քաշեց:

— Դավիթ մարգարեն<sup>1)</sup> կըսե, վոր՝ մարդո  
վորպես խոտո յեն ավուրք յուր...

— Քթախոտին համա՞ր կըսե:

— Զե՛, մեղի համար կըսե... և մենք ալ  
աշխատելու յենք, վոր այս վաղանցուկ կյան-  
քին մեջ ուրիշներուն բարիք ընենք, աղքատ  
տնանկները խնամենք և յերբեմն ալ մեր ննջե-  
ցելոց հոգվույն համար աղոթենք:

— Այնպես ե:

— Պատրաստ գտնվելու յենք, վոր կանչ-  
վելուս յերթանք:

— Իրավ ե:

<sup>1)</sup> Դավիթ մարգարեն (մոտավ. 1010—970 թ. Ք.  
ա.) հրեական թագավոր եր, վոր հոչակվել և նաև վոր-  
պես յենթադրական հեղինակ սաղմուների մեծ մասի,  
վորոնք հոգևոր յերգեր եյին հրեաների և քրիստոնեա-  
ների համար:

— Մեղավորս պիտի համարձակիմ խնդիրք  
մը ընել ձեր բարեպաշտությանը և կը հուսամ,  
վոր չեք մերժեր, վասնզի ձեր բարեպաշտու-  
թյունը և ջերմեռանգությունը շատ աղեկ կը  
ճանչնամ մեղավորս:

— Հրամմեցե՞ք:

—Տեր աստված յուր անսպառ գանձը  
միշտ բաց պահե հրամանոցդ պես ջերմեռանդ-  
ներուն:

— Շնորհակալ եմ:

— Մեկուն տեղ հազար տա, հազարին տեղ  
միլիոն տա ի շինություն սբ.յեկեղեցվու և ի  
փառս ազգին: Խնդիրքս սա յե, վոր առաջիկա  
կիրակի կուզեմ ձեր ննջեցելոց հոգուն համար  
պատարագ մատուցանել: Ներեցե՞ք համարձա-  
կությանս, բայց իմ պարտքս և միշտ իմացու-  
նել, վոր ննջեցյալները մոռնալու չե:

— Իրավունք ունիս, տեր հայր:

— Արդ յեթե կուզեք, ըսեք, վոր, յես ալ  
անոր համեմատ կարգադրություն մը ընեմ:  
Չկարծեք, թե ծախքը մեկ մեծ բան մ' է. յերկու  
վոսկիով կը լըմննա: Նույն որը հատկապես  
ծանուցում ալ կընենք յեկեղեցվո մեջ, վոր  
վասն հոգվոցն ննջեցելոց Արիսողոմ աղային և  
նույն ավուր սուրբ և անմահ պատարագը:

— Շնորհակալ կըլլամ:

— Բան մը չե, մեր պարտքն ե:

— Հրամմեցե՞ք, յերկու վոսկին առե՞ք,

ըսավ Արիսողոմ աղան՝ քսակեն յերկու վոսկի  
տալով քահանային:

— Թող այսոր մնար... ի՞նչու աճապո-  
րեցիք, պատասխանեց քահանայն ձեռները  
բանալով:

— Զե՞, առե՞ք:

— Վորովհետեւ կստիպեք, յես ալ կառնեմ  
սիրող չկոտրելու համար: Արհնյալ ըլլաք,  
տեր աստված ձեր տունը միշտ չեն պահե, ձեր  
քսակը միշտ լեցունե. ինչ վոր ունիս սրտիւ  
մեջ, տեր աստված կատարե. գործերուղ հա-  
ջողություն տա և ամեն փորձանքներե աղատ  
պահէ:

Քահանայն բարեմաղթությունները լմընց-  
նելուն պես մնայք բարյավ ըսելով գուրյ  
յելավ:

— Վերջապես խալսեցա, ըսավ ինքնիրեն  
Արիսողոմ աղան, սա մարդուն ձեռքեն. սա ինչ  
փորձանքներ ենք վոր կուզան գլուխս այսոր  
Պոլիս վոտք կոխելս ի վեր: Շոգենավեն հա-  
զիսկ դուրս յերած եյի, իմբարդիրեն մեկը յեր-  
կու ժամ գլուխս ցավցուց. անկից զատվեցա  
և մինչեւ վոր տունը գըտա, հազար նեղություն  
և քաշեցի: Տուն յեկա, վոր քիչ մը շունչ տռնեմ  
և կերպիուր ուտեմ, տանտիկինը զիս անոթի  
կը պահե և միշտ ներս կուզա, կազաչե ինծի,  
վոր բան մը հոգ ըընեմ և հանգստությանս  
նայիմ: Աս ալ հերիք չեր, և ահա այս մարդը  
կուզա, բոնի քթախոտ քաշել կուտա ինծի և

Դավիթ մարդարեն խոսք բանալով՝ յերկու վոսկի կառնե, կերթա. յերթա բարով։ Այս ամենը քաշեցինք անոթի փորանց. բայց սա կերակուրս ինչո՞ւ համար չեն բերեր. այս գիշեր անոթի՞ պիտի պահեն զիս. . . աս ի՞նչ խայտառակություն ե. . .

Այս հարցումներն կուղղեր Արիսողոմ աղան, և ահա կազն, վոր արդեն հատած ըլլալով տկար լույս մը կուտար, կը մարի և մութի մեջ կը ձգե հյուրը։

— Բայց քաշելու բան չե աս, կը շարունակե խոչը մարդը, կամ ուրիշ տեղ մը յերթալու յե և կամ կինը կանչելով քանի մը խոսք ըսելու յե։ Յես իմ քաղաքիս մեջ յերկու սպասավոր ունեյի, վոր դեմս բարե կը բռնեյին. սեղանը կանուխ կը պատրաստեյին և իմ գործերս կը անսեյին. սպասավորներով վարժված մարդ մը ինչո՞ւ այս նեղությունն քաշե հիմա։

— Աս ի՞նչ ե, կազը մարա՞ծ ե. . . հարցուց տիկինը սենյակին դուռը բանալով։

— Այո՛, մարած ե, պատասխանեց Արիսողոմ աղան՝ զսպելով յուր զգացած նեղությունն, վոր ավելնալու վրա յեր։

— Դուն հանգիստ յեղիր, Արիսողոմ աղա, այդ բաները նայիլը մեր գործն ե։

— Այո՛, բայց յես անոթի յեմ և սպասելու կարողություն չունիմ։

— Յես ի՞նչ ըսի քեզի, դուն սիրտ մի՛

հատցուներ. ամեն բան ինձի ձգե՛, յես կը հոգամ։

Տիկինը շուտ մը դրացվույն տունը վազեց և անոր կազն բերելով լուսավորեց Արիսողոմ աղային խուցը։

### ¶

Այս լուսավորության վրա կես ժամ չանցավ, և Արիսողոմ աղային ներկայացավ յերիտասարդ մը, վոր վաճառականի չեր նմաներ, սեղանավորի ալ չեր նմաներ, արհեստավորի ալ չեր նմաներ, գործավորի ալ չեր նմաներ, և վերջապես անանկ բանի մը կը նմաներ, վորուն նմանը չկա։ Հազիվ յերեսուն յերկուտարեկան կը թվեր։ Կապույտ աչերով, դեղին մազերով զարդարված ըլլալով՝ ուներ նաև յերկու մատ մորուք, վոր մայրաքարաքիս մեջ կամ կը նշան ե և կամ չքավորության։ Հագուստներն այնքան հին եյին, վոր հնախույզները զանոնք գնելու համար մեծաքանակ գումար մը կուտային։ Սակայն յեթե հագուստի մասին վանողական եր, դեմքի մասին քաշողական զորություն ուներ այս անձը։

— Ծառա յեմ մեծապատվությանդ, մեծապատճվ տե՛ր, պոռաց այս յերիտասարդն սենյակեն ներս մտնելով և մոտենալով Արիսողոմ աղային։

— Ի՞նչ կա, ի՞նչ կուղեք, հարցուց Արիսողոմ աղան վախնալով։

— Վաեմափայլ տե՛ր, ձեր գալուստն լսե-  
րով փութացի հոս դաւ, իմ խորին մէծարա-  
նացս հավաստին ձեր վոտքերուն տակը դնել:

— Վոտքերուս տակը. չատ աղեկ, դի՛ր,  
ըստի Աբիսողոմ աղան, վոր կը կարծեր, թե  
մուծակ բերած եր իրեն:

— Շնորհակալ եմ, բարձրապատիվ տեր,  
ըստի յերիտասարդը, դլուխը բացավ և սեղա-  
նին վրա յերավ, կանգնեցավ:

Աբիսողոմ աղա այս տեսարանին առջե-  
բոլորովին շվարած՝ անհամբէր տեսնել կու-  
զեր, թե ի՞նչ պիտի ըներ այս պարոնը սեղա-  
նին վրա:

Եերիտասարդն ծոցեն թուղթը մը հանեց  
և աչերն Աբիսողոմ աղային տնկելով՝ բոլոր  
ձայնովը պոռաց.

— Տյարք և տիկնայք...

Աբիսողոմ աղա այս ահարկու ձայնեն  
վախնալով՝ նստած տեղեն յերկու կանգուն  
փեր ցատկեց և չկրնալով ինքզինքը զսպել  
պոռաց.

— Ո՞վ ե այս մարդը, հիմարանոցեն փո-  
խած ինչնդ ե, թե հիմարանոց յերթալու հի-  
մար:

— Հայ ազգն, շարունակեց յերիտասար-  
դը ձայնը քիչ մը իջեցնելով, այսոր այնպիսի  
հանդես մը կը կատարե, վոր մեր հայրենյաց  
ամենեն քաջ դյուցազնին նվիրված ե...

— Միտքդ ի՞նչ ե, յեղբա՛յրս, յես քեզի  
բան մը չըրի, ի՞նչ կուզես ինձմե, գնա քեզի  
բարկացնողին զրուցե՛ այդ խոսքերը...

— Կար ժամանակ մը, ուր խավարը լուսո  
դեմ կը կովեր, տղիտությունը՝ գիտություն  
դեմ, անցյալն ապառնիին դեմ, հրամայակա-  
նը սահմանականին դեմ, սուրը գրիչի դեմ,  
ատելությունը սիրո դեմ, կրակը ջուրին դեմ,  
միուր բանջարեղենին դեմ. իսկ հիմա անցան  
այն ժամանակները. անոնք անցյալ են, մենք՝

ապառնի, անոնք խավար են, մենք՝ լույս,  
անոնք տղետ են, մենք՝ գիտուն, անոնք սուր  
են, մենք՝ գրիչ, անոնք ատելություն են,  
մենք՝ սեր, անոնք կրակ են, մենք՝ ջուր, ա-  
նոնք միս են, մենք՝ բանջարեղեն, անոնք վա-  
րունգ են, մենք՝ խնձոր, անոնք փուշ են,  
մենք՝ վարդ. անցան այն դարերը,  
ուր մարդկությունը տղիտության որորոցին  
մեջ մեյ մը ասդին, մեյ մը անդին կերթար,  
կուգար...

— Միտքդ ի՞նչ ե, յեղբա՛յրս, յես քեզի  
բան մը չըրի, ի՞նչ կուզես ինձմե, գնա քեզի  
բարկացնողին զրուցե՛ այդ խոսքերը...

— Այո՛, մարդկությունը կը չարչարվեր,  
կը նախատվեր անգութ բոնավորներու ձեռ-  
քեն և չեր գիտեր, վորու յերթալ և վորու  
բողոքել:

— Տեր վողորմյա՛... տեր վողորմյա՛,  
ըստի ինքիրեն Աբիսողոմ աղան. քաշելիք սո-  
նինք յեղեր... յես կը նամ հիմա զինքը սեղա-  
նեն վար առնել, բայց կը վախնամ, վոր ծոցեն

ատրճանակ մը կը հանե և կզարնե ինձի, վասն  
զի խիստ բարկությամբ կը խոսի:

— Իսկ յերբ գիտությունն յեկավ, շարու-  
նակեց ատենաբանը, և վանեց տղիտությունն,  
ինչպես լույսն՝ խավարը, սերն՝ ատելությու-  
նը, գրիչն՝ սուրը, ապագայն՝ անցյալը, այն  
ատեն, ա՞հ, այն ատեն... այո՛, այն ատեն,  
այո՛, կըսեմ, այն ատեն միայն հասկցվե-  
ցավ, վոր մարդկություն, ազգ և հայրենիք  
բառերը բառարանները լեցնելու համար շին-  
ված բաներ չեյին, այլ ամեն մարդու մտքին  
մեջ, սրտին մեջ, հոգվույն մեջ յերկաթյա-  
տառերով և անջինջ կերպով դրոշմելու բառեր  
եյին...

— Յեղբա՛յր, կաղաչեմ, վար իջի՛ր և այն-  
պես զրուցե՛ցավդ... .

Ատենաբանը կայնած տեղը այնպես կը  
դոդար, վոր Աբիսողոմ աղային սիրտը կը  
հատներ, թե կազը գետինը պիտի իյնար:

Ուստի չուզելով այլ ևս համբերել՝ պոռաց  
ինքնակոչ ատենաբանին յերեսն ի վեր.

— Վա՛ր իջիր սըկե:

— Կաղաչեմ, մի սաստեր զիս:

— Վա՛ր իջիր, ապա թե վոչ...

— Մի՛ կոտրեր իմ սիրտս վոր ազգին հա-  
մար կը բաբախե:

— Ինչ ըսելիք վոր ունիս, յեկուր քովս,  
մարդու պես նստե և ըսե. Հոն տեղվանքը յել-  
նել ի՞նչ պիտի ըլլա:

— Կաղաչեմ, թո՛ղ սուրը վերջացնեմ.  
ա՞հ, չես գիտեր, թե վորչա՛փ կը հուզվիմ,  
թո՛րը ճառ կկարդամ:

— Վա՛ր իջիր:  
Ատենաբանը թեմեն կիջնա և կերթա ա-  
յժոոի մը վրա կը նստի:

— Հիմա՛ զրուցե ինձի, միտքդ ի՞նչ ե,  
կըսե Աբիսողոմ աղա բարկությամբ:

— Կաղաչեմ, մի բարկանար:  
— Ինչ կուզես, զրուցե, շո՛ւտ, հիմա՛:  
— Բարկությամբ մի՛ վարվիր հետո,  
վոտքը պատճեմ, սիրտս լեցված ե, հիմա կըս-  
կոիմ լալ:

Յեկ ատենաբանը կսկսի լալ:  
— Լալու ի՞նչ կա, յեղբայրս:  
— Ծառադ կը փափագի գրականությամբ  
ազգին ծառայել, բայց այս ազգը շատ ապե-  
րախտությամբ կը վարվի յուր գրագետնե-  
րուն դեմ:

— Ատոր մեջ յես ի՞նչ հանցանք ունիմ:  
— Դուք հանցանք չունիք և թերես իրա-  
վունք ունիք... վոտանավորներ ունիմ գրած  
հայրենիքի վրա, սքանչելի կտորներ, պատ-  
հական տողեր, վորոնց մեջ յերեակայու-  
թյունը, ավյունը, խանդն, հուրն ու բոցը սա-  
գառնաթե կը սլանան:

— Շատ աղեկ, ատոր համար լալո՞ւ յե:  
— Մեր ազգն անոնց հարգն ու պատիվը  
ըը ձանչնար, զանոնք տղայական բաներ կը

կարծե և թող կուտա, վոր զանոնք գրողը ա-  
նոթի մնա:

— Յես ի՞նչ ընեմ:

— Կաղաչեմ, քաղցրությամբ վարվե՛

Հետա:

— Ի՞նչ ըրած ունիմ քեզի:

— Զեզի պիտի աղաչեյի, վոր ...

— Ի՞նչ, չո՞ւտ ըսե...

— Մի՛ պոռար յերեսս ի վար, հոգիո սի-  
րես, հիմա կոկսիմ լալ...

Նորեն սկսավ լալ գրագետը:

— Տեր աստված, դուն համբերություն  
առուր, ինձի, ըսավ Արխողոմ աղան մեկուսի:

— Խնդիրքս սա յեր, վոր կուզեյի տպել  
տալ քիչ մը առաջ կարդացած ճառս...

— Գնա տպել տո՛ւր, քու ձեռքեղ բռնող

կա՞:

— Պիտի խնդրեյի ձեր մեծապատվութե-  
նեն, վոր տպագրության ստակը դուք տա-  
յիք:

— Ինչու... ի՞նչ պատճառ կա, վոր քու  
հառիդ համար յես գրամ տամ: Լովա՞ծ բան-  
ե, վոր մեկը իրեն շահուն համար գերք տպե, և  
ծախքն Արխողոմը տա...

— Կը խնդրեմ, սիրտս արդեն խոցված ե,  
դուք այ նոր վերք մը մի՛ բանաք հոս:

— Ի՞նչու վերք պիտի բանամ յեղեր. զնա՛-  
բանըդ, յեղբա՛յը, վորձանք յեղար գլխուս:

— Գիտե՞ք՝ վորքան ծանր ե գրագետի մը  
առանկ խոսքեր լսելը...

— Զեմ գիտեր և գիտնալ չեմ ուզեր:

— Բանաստեղծի մը սիրտ շատ փափուկ  
է, ամենաթեթև խոսքե մը կը վերավորվի:  
Այս նյութին վրա վոտանավոր մը գրած ու-  
նիմ, կարդամ, մտիկ ըրե՛ք:

— Վոտանավոր մտիկ ընելու ժամանակ  
չունիմ:

— Կաղաչեմ, վոտանավորիս հետ խստու-  
թյամբ մի՛ վարվիք. այն վոտանավորին հա-  
մար, զոր դուք չեք ուզեր մտիկ ընել, յերկու-  
մար աշխատած եմ յես և յերբ վոր անոր  
ամիս աշխատած եմ յես և յերբ վոր անոր  
ամիս աշխատավիլը տեսնմե, արժանապատվությանո  
կը վիրավորվի: Կաղաչեմ, վոտանավորիս  
համար գեշ մի զրուցեք... Կինդրեմ, թույլ  
տվեք ինձ կարդալ զայն անդամ մը...

— Յես վոտանավոր մտիկ ընելու չեկա

Հոս:

— Շատ լավ. վողբերդություն մը գրած  
եմ, անոր վրայեն անցնինք:

— Զեմ ուզեր. յես անոթի յեմ հիմա, կե-  
րակուր պիտի ուտեմ:

— Շատ լավ, ուտելիքի վրա ատենաբա-  
նություն մը ընեմ:

— Ժամանակ չունիմ մտիկ ընելու:

— Կաղաչեմ, այդ խոսքը ուրիշ անդամ  
մի՛ ըսեր, ատկելի ավելի ծանր խոսք չեղի-  
նակի մը համար, վոր յուր մեկ աշխատասի-  
նակի մը համար, վոր յուր մեկ աշխատասի-

ըությունն ուրիշի կարդալու փափաք կը հայտնե: Կը խնդրեմ, բարձրապատճիվ տեր, քաղցրությամբ վարվեցեք հեղինակներու հետ:

— Գլխուս վրա<sup>0</sup> նստեցունեմ քեզի:

— Վոտքը պազնեմ, մի ծաղրեք զիս, ինչո՞ւ ձեր գլխուն վրա նստեցունեք:

— Ի՞նչ ընեմ հապա, քսակս քեզի<sup>0</sup> տամ հեղինակներու հետ քաղցրությամբ վարփած ըլուս: Համար:

— Վո՛չ, միայն ճառիս տպագրության ծախքը:

— Քանի վոսկիով կը լմնա գործդ:

— Չորս վոսկիով կը լմնա, բան մը չե, իմ Մեկենասս<sup>1)</sup> պիտի ըլլաս, յես ալ քու տնունդ վոտանավորով մը գրքույկին ճակատը պիտի դնեմ:

— Ճակա<sup>0</sup>տը դնես պիտի:

— Այո՛:

— Ի՞նչո՞ւ համար:

— Վորակեսդի ամեն մարդ գիտնա, թե ձեր ստակովը տպված ե այն գիրքը:

— Շատ լավ, պատասխանեց Արիսողոմ.

<sup>1)</sup> Մեկենասը (մեռել ե 8 թ. Ք. ա.) հռոմեական արիստոկրատ, պետական գործիչ և գրականագետ եր: Հայտնի յե գրականութիւնը ցույց տված հովանավորությամբ: Անունը ստացել ե համաշխարհական հոչակ և գարձել հաս ըակ անուն ամեն մի ուների համար, վոր հովանավորում ե գիտություն ու արվեստը:

աղան և քսակեն չորս վոսկի հանեց, ավագ: Հեղինակն հազար հարգանք մատուցանելով՝ գուրս յելավ: Արիսողոմ աղան յետեն կանչեց զինքը և հարցուց:

— Զկրնա<sup>0</sup>ր ըլլալ, վոր գրքին ճակատը սպասավորներուս ալ անունները դնես և իմացունես ազգին, վոր Արիսողոմ աղան կովեր, վոշիարներ, եշեր և աղարակներ ունի յուր քաղաքին մեջ:

— Ադ ձեր ըսածները հովվերգության ձյուդին կլերաբերին:

— Չեմ հասկնար:

— Ատոնց վրա վոտնավորներ կը գրվի, յեթե փափագիք վոտանավոր մը շինեմ:

— Ի՞նչ ընեմ վոտանավորը:

— Լրագրին մը մեջ տպել կուտաք:

— Կը տպեն:

— Ի՞նչո՞ւ չպիտի տպեն. յեթե կես վոսկի տալու ըլլաք քառասուն անգամ կը տպեն:

— Շատ աղեկ. ադ ըսածդ գրե՛:

— Գլխուս վրա:

— Բայց աղվոր բան մը ըլլա:

— Շատ լավ:

— Այնպես վոր տեսնողը հավնի:

— Հարկավ:

— Վաղը առտու կը երե<sup>0</sup>ք:

— Վաղը առտու... ի՞նչ կը սեք... մեկ ամիսեն հազիվ կրնամ պատրաստել:

- ՄԵ՞կ ամիտն:
- Հազիվ. վոտանավորը կարդալու դյուրին ե, լոյց գրելը՝ դժվար: Գեղեցիկ վոտանավորի մը համար քիչն քիչ յերկու ամիս պետք է,
- Ի՞նչ կըսեք . . . :
- Այս՝ բայց յես կաշատիմ ամիսն լմնցնել:
- Աստ ի՞նչ դժվար բան Ֆ յեղեր:
- Ի՞նչ կարծեցիք հապա. յերկու ամիս պիտի սպասեմ, վոր մուսաս գա և ներշնչե ինձի, վորպեսզի գրեմ. առանց մուսայի վոտանավոր չը գրվիր:
- Յեթե այդ մուսան գալու չըլլա՞ . . .
- Անպատճառ կուգա:
- Զը կրնա՞ր ըլլալ, վոր նամակ գրես և աղաչես իրեն, վոր շուտ մը գա, և դուն ալ յերկու ամիս չսպասես,
- Անիկա ինքնիրեն կուգա, նամակի պետք չունի, մեծապատիվ տեր:
- Ո՞ւր կը նստի . . . շատ հեռո՞ւն ե . . .
- Այս՝ շատ հեռու յե, բայց կուգա:
- Ցամաքի՞ն, թե ծովեն:
- Զե՛, մեծապատիվ տեր, չե՛:
- Ո՞վ ե ուրեմն սա գետնին տակն անցնելուն մարդը . . . ուսկի՞ց պիտի դա . . . ըստ, վոր ձամբա մը մտմտանք ու բերել տանք . . . Յեթե մեկ երկու վոսկի տանք, այս շաբաթ կուգա՞:

- Այո՛, յերկու վոսկի տալուղ պես գործը կդյուրանա, և մուսայս այս շաբաթ վազելով կուգա, պատասխանեց անմուսա բանաստեղծը վոսկի բառը լսելուն պես:
- Գրե՛ ուրեմն իրեն, իմ կողմես ալ հատուկ բարեներ ըրե՛ և ըսե՛, վոր Արիսողոմ աղան քեզ տեսնել կուգե՛:
- Գլխուս վրա: Մնայք բարյավ, տեր, չնորհակալ եմ ձեզմե, ծառա յեմ ձեր մեծապատվությանը և կաղաչեմ ընդունիք . . .
- Վոչ, ըսավ Արիսողոմ աղա բարկությամբ, ա՛լ յերկար ըրեր. ահա ինչ վոր ըսիր, ընդունեցի և զեռ ի՞նչ կուգես, վոր ընդունիմ . . .
- Խորին հարգանացս հավաստիքը, տեր. . . վորով մնամ ձեր մեծապատվության ամենախոնարհ ծառա:
- Շատ աղեկ:
- Մեկնեցավ բանաստեղծն՝ յերկու վոսկին ով բերել տալ խոստանալով մուսայն, զոր վոմանք ավելի աժան գնով բերել կուտան: Մուսայի մ' որականն հյուսնի մ' որականնեն ավելի չե այժմ:
- Արիսողոմ աղան, ինչպես դիտեցին ընթերցողներն, կը մոռնար յուր անոթությունն ամեն անգամ, վոր մեկն անոր խոսք կուտար անունը լրագրի մեջ անցունելու և կամ յեկեցվո մեջ ծանուցում ընելու. ինչպես նաև յուր քրակին բերանը կը բանար և դրամով կը

— Շատ լավ. հրամմեցե՞ք:

Մանուկ աղան յերկնցուց գավաթն Արիսողոմ աղային, վոր ի մի ումպ կլլեց զայն, այսինքն ողին. գավաթը չհասկնաք:

— Անուշ ըլլա, Արիսողոմ աղա:

— Շնորհակալ եմ:

— Զեր կենդանությանը:

— Վողջ յեղե՞ք:

Մանուկ աղան ողին ջրով բարեխառնելեն յետքը խմեց զայն ի չորս ումպ:

— Տիկինը մինչև վոր կերակուրներն առաքցունե և բերե, մենք կրնանք խոսել և ժամանակ անցունել, այնպես չե՞, Արիսողոմ աղա:

— Այս, պատասխանեց Հյուրն այնպիսի յեղանակով մը, վոր կը հասկցուներ, թե պիելի լավ եր նախ կերակուր ուտել և ապա խոսիլ:

— Մտիկ ըրեք ուրեմն այսոր մեր գլուխն յեկածները: Քանի մը շաբաթե ի վեր թաղականի մը ընտրության յետեն ինկած ենք: Դուք հիմա ձեր մտքեն պիտի ըսեք, թե՝ մա'րդ, թաղականը քուկին ինչո՞ւդ պետք: Անանկ չե՞, Արիսողոմ աղա, ազգին գործը յես չնայիմ, դուն չնայիս, ան չնայի, ո՞վ նայի ուրեմն. ինչուս պետքը շատ գեշ բան ե, անով մարդ մեկդի կը քաշվի, և ազգին գործերն ալ յերեսի վրա կը մնան: Իմ գիտցածո՝ ամեն մարդ ձեռքեն յեկածին չափ ազգին գործերուն

ալ աշխատելու յե: Հատ մ՞ ալ կը խմե՞ք, Արիսողոմ աղա. ախորժակ կը բանա:

— Սովորություն չունիմ մեկ գավաթեն ավելի խմելու:

— Մեր գավաթներն պատիկ են, մանակնդ թե Պոլսո ողն ալ կը վերցունե:

— Շատ լավ:

Յերկու բարեկամներ մեյմեկ գավաթ ևս խմեցին իրարու կենդանությանը, և Մանուկ աղան սկսավ ատենաբանության:

— Այս առու, ըսավ, մեր թաղին ազգային գրոսարանը գացած ժամանակս, ձեզմէ աղեկ չըլլա, մեր բարեկամներէն Մելքոն աղային հանդիպեցա: Այս Մելքոն աղան նախ Բարթողիմեոս աղայի աղջիկն առած եր: Բարթողիմեոս աղան աղամանակով մատով կը ցցունեն յեղեր, իբրև բարի մարդ, Հյուրատեր մարդ, ազգատեր և բարեպաշտ մարդ, և չուկային մեջ շատ իանութներ ուներ, վորոնցմէ կային մեջ շատ իանութներ, վորոնցմէ տարին բանվական յեկամուտ կառներ: Փանի մը տարիեն Մելքոն Աղային կինը մեռավ, և Մելքոն աղան համետապործ Նիկողոսին աղջկան հետ կարգվեցավ: Այս աղջիկն քանի մը յեղբայրներ ունի, վորոնց մին Ամբակում աղային քով գրագրություն կընե: Այս Ամբակում աղան ալ տղա մը ուներ, վոր թուղթ կում աղան ալ տղա մը ուներ, վոր թուղթ իսաղալով հորը շատ ստակը կերավ և վորջեն Ռուսաստան փախավ: Այս տղան Մարգար յեպիսաստան փախավ: Այս տղան Մարգար յեպիսաստան փրոջն թոռան յեղբորորդին եր:

Մյուս յեղբայրը շուկայի մեջ վոսկերիչ է.  
բարձր հասակով, սիրուն մարդ մ' ե: Յերբորդ  
յեղբայրը ատենոք շատ պարագ պտըտեցավ,  
խեղճության մէջ ինկավ, անոթութենէ պիտի  
մեռներ, վերջեն թաղական անդամ ընտրվե-  
ցավ և մեկ յերկու տարիեն ինքինքը ժող-  
վեց: Զերկնցնեմ խոսքս, Մելքոն աղան այդ  
Նիկողոս աղային աղջիկն առնելեն յետքը քա-  
նի մը տարիներ շատ հանդիստ կյանք վարեց.  
բայց վերջեն բախտը դարձավ, ձախորդու-  
թյուն ձախորդության վրա յեկավ, և ունե-  
ցած չունեցածը բոլորովին կորսնցուց: Որ մը  
առնեմ զինքը, հոս թերեմ, և տեսնեք, թե ինչ  
բարի մարդ ե: Յեղբայր մ' ալ ունի, վոր վար-  
պետ ժամագործ մ' ե, ատենոք Պեոյուք Տերե<sup>1)</sup>  
կը նստեր, վերջը քանի մը տարիներ իսկու-  
տար<sup>2)</sup> նստավ, յետքեն Քում Քարուն<sup>3)</sup> յերթա-  
բով՝ հոն ալ չկրցավ նստիլ, և հիմա չեմ գի-  
տեր, ուր. կը նստի: Բայց շատ վարպետ ժամա-  
գործ ե: Թորոս աղան, վոր և վոչ մեկ ժամա-  
գործի կը հանձնե յուր ժամացույցն, անոր կու-  
տա, վոր մաքրե: Այս թորոս աղան կը ճանչ-  
նա՞ք ուրիշ տեսակ մարդ ե. անոր մեկ պատ-

1) Պեոյուք-Տերեն—Պոլսի արվարձաններից մեկն ե՝ յելքոպական մասում:

2) Իսկուտար—Պոլսի արվարձաններից մեկն ե, գտնվում ե Բուֆորի տափական ափին:

3) Գում Գարուն—Պոլսի քաղաքամասերից մեկն ե, Մարմարա ծովի յեղերքին:

մությունը ընեմ քեզի և մտիկ ըրե, վոր տես-  
նես, թե աշխարհիմ վրա ասանկ մարդ կը  
դտնվի յեղեր, վոր . . .

— Բերեմ ապուրը, հարցուց տիկինը  
սենյակին դռնեն ներս յերկնցնելով գլուխը:

— Քիչ մը համբեր, տիկին, խոսքս լմըն-  
ցունքմ, վերջը բեր: Այնպես չե<sup>o</sup>, Արիսողոմ  
աղա, խոսք պետք ե յա՛: Յեթե մտիկ ընելու  
ժամանակ չունիք և գլուխնիդ կը ցավցունքմ  
կոր, ըսե՛ք:

— Ատ ինչ խոսք ե . . . բա . . .  
Արիսողոմ աղան չկրցավ շարունակել  
յուր խոսքը, զոր ընդմիջեց Մանուկ աղան թո-  
րոս աղային պատմությանն սկսելով:

— Այս թորոս աղան շարունակեց, մուշ-  
տակագործ մ' ե, ականջը խոսի, և յուր ըն-  
տանիքովը հանդիստ կյանք մը կը վարե: Յուր  
տանը պետք յեղած պարենը, կարասիքն և  
հանդերձեղեն յուր ձեռքովը կառնե և իրմէ  
զատ և վոչ մեկու մը վստահություն ունի, ա-  
զանջը խոսի: Մսավաճառեն միս կառնե, տուն  
կանջը խոսի: Մսավաճառեն միս կառնե, տուն  
յերթալուն պես կը կշռե զայն և անպատճառ  
քանի մը տրամ պակաս կը գտնե միսը, մսա-  
քանի մը տրամ պակաս տրված միսը կառնե  
քանի մը տրամ պակաս տրված միսը կառնե  
տուն կը դառնա: Ասանկ տարորինակ մարդ մ'  
ե. ականջը խոսի: Որ մը այս թորոս աղան, ա-  
զանջը խոսի, ժամացույցին փոշիները մաք-  
կանջը խոսի, ժամացույցին փոշիները մաք-  
կանջը խոսի, ժամացույցին փոշիները մաք-

Հետը սակարկության սկսելով՝ վերջապես տասն և հինգ դահեկան կը հավանի տալ, այն պայմանով, վոր ժամագործն յուր առջեւք մաքրե ժամացույցը, վասնզի թորոս աղան, ականջը խոսի, ինչպես ըսի, և վոչ մեկու մը վստահություն ունենալով՝ չեր ուզեր յուր ժամացույցն ժամագործին հանձնել և յերթալ՝ վախնալով, վոր ժամացույցին մեջն բան մը կը դողցվի, կամ ժամագործը դիտմամբ կալվե ժամացույցն՝ մեծ ծախք մը բանալու համար, ինչպես վոր կը նեն շատ մը ժամագործներ, յերբ քանի մը որ անգործ մնան: Ժամագործն յուր պատվույն դեմ անարդանք կը համարի թորոս աղային առաջարկությունն և կը բարկանա: Յեթե դու ըլլայիր ժամագործին տեղ չե՞յիր բարկանար:

— Կը բարկանայի, պատասխանեց Արիսողոմ աղան, վոր խելքն ու միտքը ապուրի դրդկած ըլլալով՝ բնավ ականջ չեր կախեր Մանուկ աղային ըրած պատմությանը:

— Թորոս աղան, ականջը, խոսի, կրակ կը կտրի ժամագործին բարկանալուն վրա և քանի մը ծանր խոսքեր կը նե իրեն, վոր ընելու չեր. այնպես չե՞:

— Այնպես ե, պատասխանեց դարձյալ Արիսողոմ աղան մեքենաբար՝ միշտ հավանության պատասխաններ տալով իրեն յեղած հարցումներուն, վորպեսողի խոսքը չերկարի և կերակուրը բերեն:

— Ժամագործը կը վոնտե թորոս աղան, ականջը խոսի. թորոս աղան ալ, ականջը խոսի, խանութեն դուրս յելնել չուզեր՝ վուրնտվիլն իրեն պըզտիկություն համարելով. դուն ալ ըլլա՛ս, չես յելլա՛ր ա՛:

— Զեմ յելլար ա՛, պատասխանեց Արիսողոմ աղան, վոր չեր գիտեր, թե ուսկից չեր յելլար և ինչո՛ւ չեր յելլար. վասնզի, ինչպես յուինք, թորոս աղային ըրած պատմության և վոչ մեկ բառը յուր ականջը մտած եր. միայն հարցումներու կը պատասխաներ:

— Ծեծկըվուքը կսկսի. ժամագործն ապակ մը կը զարկե թորոս աղային, ականջը խոսի, թորոս աղան, ականջը խոսի, կից մը կուտա ժամագործին. կարծեմ ով ալ ըլլար, թորոս աղային տեղը, ուրիշ կերպով չպիտի կը նար պատասխանել ժամագործին ապտակին: Վոտքը պագնեմ, Արիսողոմ աղան, ըսե՛, այնպես չե՞:

— Դուք ալ հոս դոմաղեսո՞վ կը շինեք, հարցուց մեկեն ի մեկ Արիսողոմ աղան:

— Դոմաղեսո՞վ...

— Այո՛, ուրիշ տեղեր դոմաղեսով կը շեն յեղեր:

— Ժամացո՞ւյցը:

— Վո՞ր ժամացույցը:

— Թորոս աղային ժամացույցը:

— Թորոս աղան ո՞վ ե:

— Մտիկ չըրի՞ր ուրեմն ըրած պատմությունս:

— Հրի, կատարյալ մտիկ ըրի, ըսավ Արքիսողամ աղան, վոր յուր դոմադեսի հարցումովն հաստատեց, թե միտքն ապուրի, ապուրեն դոմադեսի, դոմադեսն Պոլսո մեջ բրինձի ապուրին ինչպես շինվելուն գնացած եր, և բնավունկն չեր դրած Մանուկ աղային խոռքերուն:

Արիսողոմ աղան շատ իրավունք ուներ յուր տան տիրոջը յերկարածիդ ճառն մտիկ չընելու, մանավանդ անոթի փորով:

Աշխարհիս վրա կան մարդեր, վորք կը կարծեն, թէ իրավունք ունին մեկու մը քթեն բռնել և ժամերով անոր գլուխը ցավցունել: Ուրիշներ ալ կան, վոր իրենց խոռքերը մտիկ բռնել տալու համար մարդը կը փնտուն և յեթե չը գտնեն, պատրաստ են հոժարակամ որական վարձ մ' ալ տալ. վոմանք ալ ամսականով ունկնդիր կը փնտուն: Շատ անդամ ինձի ալ պատահած ե այս փորձանքը, և յես մտիկ ընել ձեացունելով՝ իմ գործիս վրա խորհած էմ. հավանության պատասխաններ տալով ինձի յեղած հարցումներուն՝ այնպես ե պատասխանած եմ, յերե այնպես չե՞ հարցվեր ինձի. արդարությունն ալ այս ե պատասխան տված եմ, յերբ արդարությունն ալ այս չե՞ հարցումն ուղղվեր ինձի. իրավունք ունիս ըսած եմ, յերբ իրավունք չունի՞մ հարցումն

յեղած ե, վորպեսզի խոսքը կարճ կապվի: Դժբախտությունն հոն ե, վոր գլուխող ցավցնողն յերբեմն այնպիսի հարցում մը կընե, վորուն պատասխանելը դժվար ե, վասնզի վճիռ տալը քեզի կը թողու: Որինակի համար, լմնցնելեն յետքը ճառն, զոր դու բնավ մտիկ ըրած չես, կը հարցունե քեզի.

— Մարկոս աղա՞ն իրավունք ունի, թե կիրակոս աղան:

Ի՞նչ պատասխանելու յէ. գործին վըաբնավ տեղեկություն չունիս. վորո՞ւն տալու յե իրավունքը. մանավանդ գիտնալու յէ, թէ իրավունքն վորու պետք ե տալ, վորպեսզի գլուխող ցավցունողին սիրող չը ցավի: Ասոր ալ յես զյուրին ճամբան գտած եմ և հետևյալ պատասխանները կուտամ.

— Գործն անուշությամբ լմնցնելու յէ:

— Այո, բայց իրավունքը վորո՞ւ քովի ե:

— Ի՞նչ ողուտ... ո՞ւշ մարդու հետ գլուխ չելնրիիր:

— Այո, բայց կաղաչեմ ըսե՛, յերկուքեն վո՞րն իրավունք ունի:

— Ի՞նչո՞ւ կստիպես, վոր ըսեմ, յեղրա՛յը, յերկու անգամ յերկու չորսի պես հայտնի յե իրավունքին ուր ըլլալը:

Շատերն այս պատասխաններով գոհացու ցած եմ. բայց վոմանք ալ կան, վոր կարծես զքեզ վոստիկանության պիտի հանձնեն, յեթե չըսես, թէ Մարկոսն իրավունք ունի, իսկ Կիրա

կուսն անիրավ ե: Ասոնց ալ ձեռքեն խալսելու համար ստիպողական գործ մ' ունիմ՝ ըսելով առեր, քալեր եմ: Իսկ վերջերս տեսնելով, թե այս ընթացքս կը քաջալերե շատախոսները, քաղաքավարությունը մեկուի դնելով՝ որ մ' անոնցմե մեկուն ըսի.

— Պարոն, զքեզ յերկու ժամ մտիկ ընելու համար յերկու վոսկի կուզեմ. յերկու վոսկին լումա մը պակաս յեթե տաս, չեմ ընդունիր:

Մարդը կես վոսկի տվավ, իսկ յս չընդունեցի և ոճիքս խալսեցի: Այս որերս կը լսեմ, վոր այդ մարդը քառորդ վոսկիի յերկու ունկընդիր ևս վարձած ե: Յերանի «Մասիսին», վոր յուր ունկնդիրներուն ստակ տալու տեղ անոնցմե ստակ կառնե:

Արիսողոմ աղան ինձի պես չվարվեցավ և, ինչպես հայտնի յէ, յերբ դոմադեսի հարցապնդումով զգալ տվավ ատենաբանին, թե յուր ճառն բնավ մտիկ ըրած չեր, յուր անքաղաքավարությունն անմիջապես դարմանելու համար ըսավ.

— Կատարյալ մտիկ ըրի:

Աղե<sup>՞</sup>կ ըրավ: Հայտնի յէ, վոր գեշ ըրավ. յեթե յես յուր տեղն ըլլայի, պարզապես կըսեյի Մանուկ աղային.

«Մանուկ աղա, ինձի նայե՛, յեղբայրս յերբոր մեկը խոսի կսկսի, խղճմտանքը մեկ դի դնելու չե: Ութը ժամե ի վեր անոթի յեմ յես

և բնավ պետք չունիմ գիտնալ, թե Մարտիրոս աղան վորուն տղան ե, թե Գևորգ աղան վորու հայրն ե, թե ժամադործը Թորոս աղան յին ապտակ հանէր ե, թե Թորոս աղան այ ժամագործին կից տվեր ե:

Այսպես կը խոսեյի բացե ի բաց, վոչ թե միայն ընկերության մը մեջ գլուխը ցավցնողին, այլ նույն իսկ այն վարդապետներուն, վոր շատ խոսելու նպատակավ միայն չորս ժամ քարոզ կուտան և կը վիրավորվին, յեթե ժողովրդեն մեկը քարոզի ժամանակ յեկեղեցին դուրս յելնե: Յեվ արդեն ըսած եմ որ մը յեպիսկոպոսի մը, վոր հինգ ժամ քարոզ խոսելեն յետքը յեկեղեցին դուրս յելած եր և խուցը կերթար:

— Ո՞ւր կերթաք, սրբազան, հարցուցի:

— Շատ քրտնած ըլլալով խուցս պիտի յերթամ և յաթ պիտի փոխեմ:

— Դուք ո՞ւր կերթաք, հարցուց ինձի:

— Յես ալ առն կերթամ լաթ փոխելու համար, պատասխանեցի իրեն:

Յեվ այն որեն ի վեր յեպիսկոպոսն կարձ կը խոսի քարոզի մեջ:

Արիսողոմ աղան չունեցավ այս համարձակությունը և խրախույս տվավ Մանուկ աղային, վոր շարունակե յուր ճառը դոմադեսական հարցման պատասխանելեն յետքը:

— Դոմադեսը հոս կը գործածենք ապուրի մեջ, բիլավի մեջ և ուրիշ մսեղեն քանի մը

կերակուրներու մեջ, բայց ընավլ յերբեք ժամանույցի մեջ:

— Ծնորհակալ եմ. ապուրի մեջ կը գործածվի ըսել ե, յես ալ ատ գիտնալ կը փափագելի:

— Ապուրը դոմադեսով կը սիրեք, թե վոչ:

— Դոմադեսով կը սիրեմ:

— Շատ աղեկ: Դառնանք հիմա մեր խոսքին... ըստ մնացինք... հա՛, թորոս աղային վրա յեր: Տարորինակ մարդ մ' ե աս թորոս աղան, ականջը խոսի, շատ պատմություններ ունի. ուրիշ գիշեր մ' ալ զանոնք կը պատմեմ, և ժամանակ կանցունենք: Յերկար չընենք, աս առտու հանդիպեցա Մելքոն աղային...

— Բերի, վոր տաք տաք ուտենք, ըսավ տիկինը ներս մտնելով և ապուրը բերելով:

— Այո՛, այո՛, ուտենք, վասն զի շատ անոթի յեմ, ըսավ Արիսողոմ աղան,

— Հրամմեցե՛ք...

— Ծնորհակալ եմ, ըսավ Արիսողոմ աղան և գդալը բերանը տանելու չմնաց, մեկենի մեկ վեր ցատկեց:

— Կարծեմ թե շատ տաք եր, ներեցե՛ք, Արիսողոմ աղա՛, ըսավ տիկինը:

— Քիչ մը ջուր առ բերանդ, Արիսողո՛մ աղա՛, ամելցուց Մանուկ աղան:

— Վնաս չունի, վնաս չունի...

— Տիկին, ինչո՞ւ համար ուշադրություն

չեք ըներ կերակուրներու տաքությանը կամ պաղությանը. ըսավ երիկն կնոջը:

— Ա՛լ այս գիշեր մեր պակասություններուն աչք գոցելու յե, Արիսողո՛մ աղա՛:

— Վնաս չունի, բան մը չե՛:

— Ապուրը մինչև վոր պաղի, այս որվան գեղքը պատմեմ գոնե, ըսավ Մանուկ աղան:

— Մանուկ աղա՛, Արիսողոմ աղային գլուխը մի ցավցուներ այս գիշեր: թերես չախորժիր:

— Ժամանակ անցունելու համար պիտի խոսեյի, վոր զբոսնու և չնեղվի:

— Ուրիշ գիշերվան թող. այս գիշեր հոգնած-հոգնած՝ կրնա՞ քեզի մտիկ ընել:

— Կարծեմ թե Արիսողոմ աղան սիրով մտիկ կընե ազգային գործերը և բնավ ձանձրություն չգգար:

— Այո՛, սիրով մտիկ կընեմ, պատասխանեց հյուրը, բայց տիկինին ըսածին պես վաղը գիշերվան թողունք, վասն զի այսոր շատ հոգնած եմ:

— Շատ լավ, շատ լավ, ինչպես վոր կուղեք, այնպես ըլլա. բայց մեր թաղին թաղականին գործը շատ զվարճալի յե: Մելքոն ական յեթե հոս ըլլաը և պատմեր, ինդալեն կը ճաթեյինք:

— Ապուրը պաղեցավ, հրամմեցե՛ք, ըսավ տիկինը:

Արիսողոմ աղան այս հրավերն առնելուն

պես՝ գդալով ապուրին վրա հարձակվեցավ:  
— Ողի մ' ալ կը խմե՞ք, Արիսողոմ աղա:  
— Շորհակալ եմ, չեմ ուզեր:  
— Տիկին, Արիսողոմ աղային գինի լեցուր:

— Մանուկ աղա, այս գիշեր այլանդակ խոռքեր կը խես, ապուրի վրա գինի կը խմվի՞:  
— Ինչո՞ւ չխմվիր, տեսնենք պիտի հավնի՞ մեր գինիին:

Տիկինը դուրս յելավ և խաչած միս բերելով սեղանին վրա դրավ:

Արիսողոմ աղան այնպիսի ախորժակով մը կուտեր, վոր մսի կտորները առանց ծամելու կը կլեր:

— Փառք քեզ, աստվա՛ծ, այս գիշեր ալ կշտացանք, ըստ Արիսողոմ աղան փորն քահանայի մը պես զեցնելեն յետքը և յերեսը խաչկերով ու ցած ձայնով հայր մերն ըսելով՝ սեղանեն յելավ և լվացվելու համար ջուր փնտուց:

— Կերակուրեն վերջը կը լվացվի՞ք, հարցուց տիկինը հյուրին:

— Յեթե ջուր ըլլար...

— Մենք սովորություն չունինք, բայց ձեզի քիչ մը ջուր բերեմ և լվացվեցեք:

Արիսողոմ աղա լվացվեցավ և ձեռները չորցնելու ատեն հարցուց տիկինին, թե վոր սենյակին մեջ պիտի պառկեր:

Տիկինը ճրագով յերկրորդ հարկը սենյակ մը առաջնորդեց Հյուրին և վար իջավ:

Այս պառկելու սենյակն փոքր եր, և անոր ձիշտ չափը տված կը լլանք, յեթե ըսենք, վոր Արիսողոմ աղային հասակին յերկայնությունն ուներ: Անկողինը շինված եր այն միակ պատուհանին առջև, վոր փողոցի վրա բացված եր: Աթոռը մը, քառակուսի պատիկ սեղան մը, փոքրիկ հայելի մը, ջուրի շիշ մը և գալաթ մը, սանտր մը, վրձին մը այս սենյակին կարասիքը կը կազմեյին:

Արիսողոմ աղան սենյակեն ներու մտնելուն պես ձեռներն բացավ և նորեն փառք տվավ աստծո, վոր վերջապես խալսեցավ փորձանքներեն և առանձին մնաց: Բանտեն արձակվող մը չեր կարող ավելի ուրախութուն զգալ: Փառարանությունն ավարտելուն արեն հանվեցավ և ինքինքն անկողնու մեջ նետեց:

— Ասկեց յետքը ընելիքս գիտեմ, ըսավ անկողնու մեջ և վոչ մեկու հետ պիտի տեսնվիմ, վասնզի յես այս պոլսեցիները շատ չսիրեցի, ասոնք կամ դրամդ առնելու կը նային կոր կամ յերկու ժամ գլուխող ցավցունելու: Ի՞նչուս ալետք իմին. յես յեկած եմ հօս կին մը առնելու և յերթալու. վորուն արջիկն վոր սիրեմ՝ կուղեմ. յեթե տան կառնեմ, գործս կերթամ, և յեթե չտան, յեթե չտան... բայց ինչո՞ւ չտան... ինձմեն աղեկի՞ն պիտի տան... Յեթե վաղը սա լրագիրն իմ անունս ալ փա-

ուավորապես դրե՛, այն ատեն շատերն պիտի ա-  
ղաչեն ինձի, վոր իրենց աղջիկն առնեմ...  
Մեկեն ամելին ի՞նչ պիտի ընեմ... անոնց մե-  
ջեն պարկեշտ աղջիկ մը կը զատեմ... խոսկա-  
պը կընեմ... նշան կուտամ... կը կարգը-  
միմ...

Այս վորոշումները տալով կը քնանա Արի-  
սողոմ աղան:

Զ

Արիսողոմ աղան աղվոր քուն մը քաշեց  
նույն գիշերը, վասնզի շատ հոգնած եր և  
թերես հետեւյալ որն ալ չեր բանար աջերն, յե-  
թե փողոցի վաճառականներն առավոտուն ի-  
րենց ահարկու ձայներովնչխոռովեյին անոր քու-  
նը, մահվան այդ կտրոնն, վոր վոչ միայն  
հոգնած մարդերու հանգստարանն ե, այլև  
շատ մշտնջենական ցավերու առժամանակյա-  
ղարմանն ե: Յերանի՛ անոնց, վոր կը քնանան  
և ուշ կարթնան կամ բնավ չեն արթըն-  
նար, վասն զի անոնք բնավ չեն զգար կամ դո-  
նե քիչ կզդան այն ցավերն, վորք հալ ու մաշ  
կընեն մարդս: Բայց Պոլսո մեջ քնանալու ա-  
զատություն ալ չկա. գիշերները պահապան-  
ներն այնքան ուժով գետին կը զարնեն իրենց  
փայտերն, և առավոտուն փողոցի վաճառա-  
կաններն այնքան բարձր ձայնով կեղանակեն  
իրենց ապրանքներն, վոր քունն կը շվարի, կը  
մնա, թե վո՛ր կողմ փախչի: Յեթե վերջին

դատաստանին որը Գաբրիել հրեշտակապետը  
չհաջողի յուր փողովն մեոյալներին արթնցը-  
նել, յես պիտի առաջարկեմ, վոր այդ պաշ-  
տոնը Պոլսո փողոցի վաճառականներուն կամ  
գիշերային պահապաններուն հանձնըվի: Արի-  
սողոմ աղան ալ, վոր փողոցի վրա սենյակի մը  
մեջ կը պառկեր, ստիպվեցավ կանուխ ար-  
թըննալ: Աչերը բանալուն պես անկողինեն յե-  
լավ, սնտուկը բացավ և ճերմակեղենները փո-  
խեց, հետո լվացվեցավ և հագվեցավ:

Տան տիկինն, վոր իմացած եր հյուրին  
յելած ըլլախն, վեր յելավ և զարդարուն սեն-  
յակ մը հրամցընելով զայն՝ իմաց տվավ, թե  
մեկն կսպասեր վարը և զինքը տեսնել կուզեր:

— Թո՛ղ հրամմե, ըսավ Արիսողոմ աղան:

— Շատ լավ, կաղաչեմ, ըսե՛ք ինձի,  
խահվեն կաթո՞վ կը խմեք, թե առանց կաթի:

— Կաթ կը խմեմ առանց խահվեյի:

— Կաթ բերեմ ուրեմն:

— Այո՛, կաթ բերե՛ք,

Տիկինը վար գնաց:

— Տեսնենք ո՞վ ե աս մարդը, ըսավ ինք-  
նիրեն խոչոր մարդը, թերեւս աղջիկ ունի կար-  
գելու և իմ Պոլիս գալս իմանալով՝ առավո-  
տուն կանուխ հետըս խոսելու յեկած ե: Բայց  
յես մինչե վոր չստուգեմ աղջկան ինչ բնու-  
թյան տեր ըլլալը, խոսք չեմ տար. նախ ամեն  
բան հասկնալու յեմ, աղջիկը քննելու յեմ,  
վերջեն հորս հարցնելու յեմ. վասնզի իմ ոփ-

բելս բավական չե, պետք ե վոր հայրս ալ սիրե իմ կինս. վոչ թե միայն հայրս, այլ ամեն մարդ հավնելու յե...

— Բարե, վսեմափայլ տեր, ըսավ յերեսնամյա և վառվուն յերիտասարդ մը սենյակ մտնելով և արագաքայլ Արիսողոմ աղային վազելով՝ անոր ձեռները սղմելու համար:

Արիսողոմ աղան տեղեն յելավ և ձեռները հանձնեց այդ յերիտասարդին, վոր ուզածին պես սղմե և թոթվե զանոնք՝ հազար ու մեկ հարգանքներ մատուցանելով:

— Նստեցե՞ք, Արիսողոմ աղա, կաղաչեմ, չը վայլեր, վոր վոտք յելնեք, ըսավ յերիտասարդն՝ տիրոջը դարձնելով իրեն հանձնված ձեռներն և կոտըրտվելով յետ յետ զնաց, թիկնաթոռի մը վրա նստավ:

Արիսողոմ աղան բազմոցին վրա բազմեցավ:

— Արդարե մեր պարտքն եր յերեկ դալ և ձեր գալուստը շնորհավորել, բայց ուշ իմացանք ձեր գալն. ասոր համար հատկապես ձեր ներողությունը կը խնդրենք, ըսավ յերիտասարդն ձեռներն իրարու չփելով:

— Այսոր գալով պակասություն մը ըրած չեք ըլլար, վոր ներողություն խնդրեք:

— Զեր քաղաքավարությունն ե, վոր այնպես խոսել կուտա ձեզի, բայց մենք մեր պակասությունը միշտ կը ճանչնանք: Արդարե մեծ պակասություն մ' ե մեր ըրածը. ձեզ

պես յերեկելի մարդ մը մայրաքաղաքս գա, և պատկերահան մը անմիջապես բարի յեկարի չերթա, պակասություններու պակասություննե, վոր և վոչ մեկ կերպով մը կրնա պակասություն ըլլալե դադրիլ:

— Ամենակին պակասություն մը չե, յեթե բնավ չգայիք, գարձյալ պակասություն մը չեր համարվեր ինձի համար:

— Շատ վեհանձն եք:

— Ամենեկին վեհանձն չեմ:

— Թող այնպես ըլլա, ատոր համար հիմա վիճաբանության մտնելու հարկ չեմ տեսներ. միայն ինքինքն ձեր տրամադրության տակ կը դնեմ և ձեր հրամաններուն կսպասեմ. յեթե կուզեք, հոս քաշել տվեք, յեթե կը փափագիք, մեր գրասենյակը պատվել հաճեցեք, և հոն հանենք. ինձի համար միևնույն բանն ե. դուք ինչպես վոր կախորժեք, այնպես ընելու պատրաստ եմ:

— Ի՞նչ պիտի քաշել տանք... իմ ակուներըս աղեկ են:

— Գիտեմ, վոր ակուներդ աղեկ են, ինչպես նաև զուք ալ աղեկ եք. յես կը փափաքիմ ձեր լուսանկար պատկերը քաշել: չել տված չունիմ և քաշել տալու հարկ մ' ալ

— Յես մինչև հիմա պատկերս բնավ քաշել տված չունիմ և քաշել տալու հարկ մ' ալ չեմ տեսներ, վասն զի ամեն որ հայելի կը նայիմ և ինքինքն կը տեսնեմ:

— Յեթե ձեր պատկերը մեկու մը զրկելու  
ուղեք հայելին կրնա՞ք զրկել, Արիսողոմ ա-  
ղա՛:

— Հայելին ինչո՞ւ զրկեմ, յես կերթամ:  
— Շատ աղեկ կը խոսիք, բայց յես մէնչե  
զոր ձեր պատկերը չհանեմ, չեմ կրնար հան-  
դիստ ըլլալ, ինձի համար պղտիկություն մ' ե  
ձեր պատկերը չհանելը, թող վոր ձեզի համար  
ալ տյնպես ե:

— Ինչո՞ւ:

— Խսկած բա՞ն ե, վոր ձեզի պես յերեելի  
մարդ մը Պոլիս դա և պատկերը քաշել չտա-  
տշխարհ արարատ ձեր վրա պիտի խնդացնե՞ք:

— Ինչո՞ւ:

— Պատճառը հայտնի յե. մեծ մարդերը  
բնականաբար մեծ բարեկամներ կունենան-  
դուք մեծ մարդ մ' եք, այսոր կամ վազը պիտի  
սկսիք մեծ մարդերու այցելություններն ըն-  
դունել: Ասոնցմե շատերն իրենց պատկերներն  
մեյմեկ հատ պիտի նվիրեն ձեզի, և դուք ալ  
պիտի ստիպվիք ձերինեն մեյմեկ հատ տալ ա-  
նոնց:

— Յեվ յեթե չտամ, կը ինդա՞ն իմ վրա:

— Խնդալն ալ խո՞սք ե, ընկերություննե-  
րու մեջ մատի վրա կառնեն քեզի:

— Զարմանալի բան...

— Խսկած բա՞ն ե, վոր ձեզի պես աղնվա-  
կան մը պատկերը հանել չտա. մեծ ամոթ ե...  
— Մե՞ծ ամոթ...

— Այո, շատ մեծ ամոթ ե. անվարտի  
պտըտիլն այնքան ամոթ չե, վորքան իրեն  
պատկերն չունենալը:

— Ցես չեյի գիտեր:

— Քաղաքակրթությունը և լուսավորու-  
թյունը պարտք կը դնեն մեր ամենուս վրա,  
վոր մեր պատկերներն ունենանք:

— Լրագիրները պիտի գրե՞ն, վոր Արիսո-  
ղոմ աղան յուր պատկերը քաշել տուած ե:

— Լրագիրներու վերաբերյալ խնդիր մը  
չե աս...

— Բաել ե թե յեկեղեցիներու մեջ ծանու-  
ցում ալ չպիտի ըլլա:

— Ծանուցումի ի՞նչ հարկ կա, Արիսողոմ  
աղա՛, կը ծաղրե՞ք զիս:

— Ծաղրե՞լ, ատոր շատ դեմ եմ յես...  
ի՞նչ իրավունք ունիմ ուրիշ մը ծաղրելու...

— Մի՛ բարկանաք...

— Զե, կը բարկանամ, յես բնավորու-  
թյուն մը ունիմ, վոր ամեն բան չիտակ կուտ  
դեմ:

— Շատ լավ. ի՞նչ դիրքով հանել կուգեք  
ձեր պատկերը:

— Միտք չունիմ պատկերս քաշել տալու,  
վասնզի անողուտ բան մը կերեւ ինձի:

— Ի՞նչ կըսեք, ամկից ավելի ուգտակար  
ի՞նչ կա, յեթե ձեր բարեկամներեն մեկուն այ-  
ցելություն մը տալ ուզեք և ժամանակ չունե-  
նոք, ձեր մեկ պատկերը կը զրկեք, կը լմըն-

նա, կերթա: Յեթե կարդված եք, ձեր ամուսնույն կը զրկեք, վոր ձեր բացակայությանն տառեն անոր վրա նայելով կարոտը կառնեայեթե ամուսնացած չեք, շատ աղջիկներ ձեր պատկերը կը տեսնեն և ձեր ով ըլլալը կը հասկընան, վորով ընկերություններու մեջ ձեր անունը կը խոսվի: Լուսանկար պատկերը մը այս որվան որս հացեն ավելի պետք եւ մարդուս. կաղաչեմ, վոր համոզվիք, և ժամ առաջ յերթանք ձեր պատկերը քաշենք:

— Աղջիկներն ի՞նչպես և ո՞ւր պիտի տեսնեն իմ պատկերս...

— Զե՞ վոր ձեր բարեկամներուն պիտի տաք, անոնք ալ իրենց տունը պատկերներու հատուկ գիրքի մը մեջ պիտի անցունեն և ամենուն պիտի ցուցնեն:

— Ցուցնելով ի՞նչ պիտի ըլլա:

— Ի՞նչ կուզեք, վոր ըլլա...միշտ կը հիշվեք...

— Յեթե չհիշվիմ, ի՞նչ կը կորսնցնեմ. Հոգըս եր իմին, թե զիս պիտի հիշեն. կուզեն՝ հիշեն, կուզեն՝ չհիշեն, յես անանկ դատարկ բաներու ստակ չեմ տար և քու խոաքերուդ ու չեմ հավատար:

— Ասիկա պղտիկ ենայուլք մ'ե:

— Ենայուլք ո՞վ ե:

— Տեր, գիտեք վոր արքիսք մը վիրավորեցիք ծանրապես:

— Յե՞ս վիրավորեցիք:

— Այո՛, դուք...

— Պատկերս քաշեք չտալուս համար զըրպարտություն սկսա՞ր... յես մինչեւ հիմա մեկը վիրավորած չեմ:

— Այսոր զիս վիրավորեցիք:

— Գնա՝ վոստիկանության իմաց տուր, պարապ խոսքեր մտիկ ընելու ժամանակ չունիմ:

— Վոստիկանության յերթալուս հարկ չկա. կը խնդրեմ, վոր ձեր բերնեն յելած խոսքը հաշտեցունեք ձեր քաղաքավարությանը հետ:

— Յես կովի մեջ չեմ մտներ, գնա՛, դուն հաշտեցուր, յեթե կոփի ընողներ կան:

Մանուկ աղան Աբիսողոմ աղային նախաճաշը կը բերե և յեռոտանի սեղանի վրա դնելեն վերջը՝

— Հրամմեցե՞ք, ձեր կաթը խմեցե՞ք, կըսե:

Աբիսողոմ աղան աթոռը մը կառնե, սեղանին առջեւ կը նստի և կսկսի կաթը խմելու:

— Ի՞նչ վորոշեցիք նայինք, Աբիսողոմ աղային պատկերը կե՞ս մեջքեն պիտի քաշեք, թե վոտքի վրա, կը հարցունե Մանուկ աղան:

— Վոչ կես մեջքեն, վոչ ալ վոտքի վրա, կը պատասխանե Աբիսողոմ աղան:

— Աթուի մը վրա նոտած ամբո՞ղջ պիտի քաշեք:

— Վո՛չ:

Պառկա՞ծ պիտի հանեք:

- Վո՞չ:
- Քովընտի՞:
- Վո՞չ:
- Ինչպես վորոշեցիք ուրեմն:
- Վորոշեցինք, վոր մեր պատկերը բնավքաշել չտանք:
- Աս չըլլար. ատիկա մեծ պատիկություն ե, Արխողոմ աղա՛. հիմա պզտիկներեն բռնե, մինչև մեծերը դնա, ամենն ալ տարին քանի մը անգամ պատկերնին քաշել կուտան. յերկու ամսու տղայներն անգամ իրենցն ունեն, միայն իրենց մոր արգանդին մեջ դտնվողները չունին իրենց պատկերը. յեթե անոր ալ դյուրին մեկ ճամբան գտնեն, անոնց ալ պիտի հանեն:
- Յես չկրցի համոզել Արխողոմ աղան, վոր կարծեց, թե զինքը խարելու համար յեկած եմ հոս, ըստվ պատկերհանը:
- Չե, չե, մեր պատկերհանն անանկ ժարդ չե, ափելցուց Մանուկ աղան:
- Բաի, թե Արխողոմ աղային պես մեծ և յերկանի ժարդ մը իրեն պատկերն անպատճառ ունենալու յե:
- Այո՛, ունենալու յե, և քանի մը տեսակ: Որինակի համար. տասներկու հատ պստիկ, տասներկու հատ միջին, տասներկու հատ մեծ, տասներկու հատ վոտքի վրա, տասներկու հատ աթոռի մը վրա բազմած, տաս-

ներկու հատ քովընտի նստած, տասներկու հատ շխտակ նստած, տասներկու հատ վոտք վոտքի վրա դրած, տասներկու հատ ձեռք ձեռքի վրա, տասներկու հատ գլուխը ձեռքին կռնթած, տասներկու հատ ձեռքը սեղանի մը վրա դրած, տասներկու հատ պառկած, տասներկու հատ մեղանի բռնած, բռնած ինդումերես, տասներկու հատ տիսուր դեմքով, տասներկու հատ ալ վոչ ինդումերես և վոչ տիսուր դեմքով: Այո՛. Արխողոմ աղա՛, աս ըսածներս հատ մը յեթե պակաս ըլլա, ձեր պատվուց մնաս կրուդա:

- Իրա՞զ կըսեք, հարցուց Արխողոմ աղան:
- Սուտ խոսելու բնավ պարտականություն չունիմ. յեթե ասոնք չունենաս, քու վրադ աղեկ աչքով չեն նայիր. բոլոր մեծ մարդերն ասոնք ունին:
- Մեծ մարդերն ունի՞ն. աղեկ գիտե՞ս:
- Այո՛, ունին:
- Պզտիկներն ալ ունին՝ ըսիր հապա:
- Պզտիկներն այս չափ չունին, անոնք կում յերեք հատ և կամ չատ շատ վեց հատ հանել կուտան:
- Բնավ մտքես չեր անցներ, վոր պատկերին այս չափ կարեռություն կը տրվի հոս:
- Այո՛, կարեռությունը հիմա միայն պատկերներուն կտրվի, և վորքան աղեկ քաշ-

ված ըլլան, այնքան ավելի կարեռություն կառնեն:

— Քանի վոր ամեն մարդ յուր պատկերն ունի, իմ մեծ մարդ ըլլալս ինչե՞ն պիտի հասկըցվի. միայն մեծ մարդերը քաշել տալու եւ յին, վոր այն առէն...

— Բայց մեծ մարդերունը ուրիշ տեսակ ե, խոշոր գիրքով և փայլուն թուղթի վրա կը հանեն:

— Զկրնա՞ր ըլլալ, վոր սպասավորներս առջևս բարեւ բռնած հանենք:

— Շատ աղեկ կըլլա:

— Իրա՞վ կըսեք:

— Այո՛:

— Որինակի համար յես ագարակներ աւ ունիմ, վորոնց մեջ շատ մը կովեր, վոչխարներ, ձիեր, սազեր, բազեր կան, անոնք ալ կարելի չե՞ պատկերին մեկ կողմը դնել:

— Ստոնք կարելի չե, բայց սպասավորներդ կրնաս առնել, այնպես չե՞՝, պարոն Դերենիկ:

— Այո՛, այնպես ե, պատասխանեց պատկերհանը:

Զկրնա՞ր ըլլալ, վոր հարցուց նորեն Արիսողոմ աղան, պատկերին տակը գրվի, վոր այս մարդն ագարակներ, ձիեր, կովեր, եշեր ունի:

— Աս չգրվիր. կրնա գրվի, բայց մինչև այսոր սովորություն յեղած չե: Սակայն

ինչ հարկ կա զանոնք գրելու, արդեն ամեն մարդ շուտով կիմանա:

— Զիու վրա նստած կրնա՞ր հանել:

— Այո՛, պատասխանեց Դերենիկը:

— Զին վաղցունելով սակայն:

— Աս դժվար ե:

— Շատ լավ, վաղը կնայինք:

— Յեթե կուգեք, մեքենան հոս բերեմ վաղը:

— Այո՛, այո՛, հոս բերե՞ք, կրկնեց Մանուկ աղան, վասնզի չը վայլեր, վոր Արիսողոմ աղան ձեր սենյակը գա: Մեծ մարդերը միշտ իրենց տուներուն մեջ քաշել կուտան պատկերնին:

— Գլխուռ վրա, ըսավ Դերենիկն և ձեռները չփել սկսելով՝ վոտքի վրա յերավ և կոտըրվիլ սկսավ այնպես, վոր խոսք մը ըսել կուգեր և կը քաշվեր:

Հայտնի յե, թե այն մարդն, վոր բան մը ըսել կուգե և կը քաշվի, անպատճառ ստակ պիտի ուզե:

— Վաղը մեքենան հոս թէ՛ր, ըսավ Արիսողոմ աղան:

— Շատ լավ, պատասխանեց սկսակեր—հանը միշտ կոտրտվելով և ձեռները չփելով:

— Վաղը մեքենան հոս բեր՝ ըսինք ա՛, կրկնեց Արիսողոմ աղան տեսնելով, վոր պատկերհանը չերթար:

— Այո՛, հասկցա, մեքենան վաղը հոս պի-

տի բերենք, պատասխանեց նորեն Դերենիկը,  
բայց սովորություն մը ունինք մենք, վոր...  
ներեցե՞ք սակայն:

— Բաե՞ք:

— Բայց կաղաչեմ, ծանր չգա ձեզի:

— Չանր չը գար ինձի:

— Սովորություն մը ունինք, վոր յեթե  
մեքենան մեկու մը տունը տանել հարկ ըլլա,  
կանխիկ գումար մը կառնենք... վոչ թե վըս-  
տահություն չունենալուս համար, այլ սովո-  
րություն մը հարգելու համար:

— Ատ ի՞նչ գեշ սովորություն ե...

— Վերջապես սովորություն մ'ե:

— Շատ լավ... յերկու վոսկի կը բավե՞:

— Այո՛, կը բավի:

Սրբողում աղան յերկու վոսկի տպավ-  
պատկերհանին, վոր դուռը բանալն և անե-  
րեռթանալն մեկ ըրավ:

Ե

— Կան մարդեր, վոր ցցունել կուգեն,  
ինչ վոր չունին. կան ալ, վոր ցցունել չեն ու-  
զեր, ինչվոր ունին. կան նաև, վոր ցցունել կու-  
գեն, ինչ վոր ունին: Արիսողում աղան վեր-  
ջիններեն եր. կը փափագեր, վոր բոլոր աշ-  
խարհ իմանա աղարակներ ունենալը, և յուր  
փափազն իրացնելու համար ստակ ալ չեր  
ինայեր: Այսպես, յերբ ըսին իրեն, թե  
մեծ մարդերն իրենց պատկերներն ունին,

հավանեցավ, վոր ինքն ալ իրենն ունենա,  
բայց կասկածելով, թե խարված ըլլա և պա-  
րապ տեղը ստակ յելլա, Դերենիկին մեկ-  
նելեն անմիջապես յետքը հարցուց Մանուկ  
աղային.

— Յեթե պատկերս քաշել չտամ, զիս  
մարդու տեղ չե՞ն դներ:

— Քավլ լիցի, բայց քանի վոր ձեր աս-  
տիճանի մարդերը իրենց պատկերները հանել  
տված են, ձեզի ալ կը վայելե, վոր անոնց պիս  
ընեք: Յերբ մեկն ձեր պատկերն ունենալ փա-  
փագի, և դուք պատասխանեք, թե պատկերս  
քաշել տված չեմ...

— Ի՞նչ կըլլա:

— Բան մը չըլլար... բայց...

— Բայց ի՞նչ... աղարակներս կառնե՞ն  
ձեռքես...

— Ամենեին:

— Վոչիսարներս, կովերս կը հափշտա-  
կե՞ն:

— Բնավ... բայց... խավարյալ մարդու  
տեղ կը դնեն ձեզի, չեն ըներ այն պատիվն,  
վոր կուտան մեծ մարդու:

— Հասկցա, ի՞նչպես հանել տալու յեմ  
ուրեմն պատկերս, վոր տարակույս չմնա, թե  
պզտիկ մարդ չեմ, վասնզի ըսիք, թե պզտիկ-  
ներն ալ իրենց պատկերներն կը հանեն:

— Ձեր պզտիկ մարդ չըլլալը հասկցնելու

համար մեծ պատկեր հանելու յեք, թիկնաթոռի մը վրա նստած։

— Նոր հազուստներս հագնելու յեմ, այնպես չե՞։

— Այո՛։

— Ժամացույցս ալ կախելու յեմ հարկավ։

— Տարակույտ չկա։

— Սանկ ծխափող քաշելով և յերկու մարդ ալ դեմս բարե բռնելով և մեկն ալ յետևես ձիւ բռնելով։

— Այո՛, այո՛։

— Դեռ ուրիշ ի՞նչ պետք ե փառավոր յերենալու համար։

— Այսափ բավական ե։

— Կուզեյի, վոր սպասավորներես յերկուքն ալ չախելով դիմացես վռնտեյի, և անոնք ալ դլուխնին ծռած դուրս յելնեյին. վերջափես սանկ բաներ չը կրնար ըլլալ. . . կամ թէ մեկը ծեծեյի. . . որինակի համար, մեր ազարակներուն վերակացույին յերես ի վեր պոռայի. . . «մա՛րդ, քեզի քա՞նի անդամներ հրամայեցի, վոր մշակներու հետ քաղցրությամբ վարվիս, կովերուս հետ սիրով յերթաս, վար ու ցանը ժամանակին ընես. քանի վոր ատոնք չըրիր, յես ալ քեզի կը վռնտեմ»։ Վերակացուն ալ թաշկինակովն աչերը սրբելով՝ վուներուս իյնա, աղացն և պաղատե ըսելով. «զավակներուս սիրույն համար ներե՛ հանցանաց. այսափ տարիներե հետե ձեր հացը կու-

տեմ, դուք իմ բարերարս եք, յես ձեզ գրկերուս մեջ անչափ գրկած ու պտտցուցած եմ, յերբ դեռ պատիկ եյիք» . . . վերջապես սըվոր նման բաներ չե՞նք կրնար դնել պատկերին մեջ։

— Ատոնց վրա վաղը կը խորհինք. մենք հիմա սկսինք մեր յերեկվան պատմության, վոր կիսատ մնաց։ Մելքոն աղան զիս տեսնելուն պես . . .

— Կամ թե սանկ կոնակի վրա պառկիմ, և սպասավորներս ալ բանթալոնս քաշեն. . .

— Զիս տեսնելուն պես մոտեցավ ինձի և . . .

— Նարկիլեյով ավելի փառավոր չըլլայ. . .

— Մոտեցավ ինձի և ձեռքերս բռնելով ըստավ. «թէ այսոր չաշխատինք, մեր չուզած մարդերը թաղական պիտի ընտրվին»։

— Սանկ տասը կանգուն յերկարությամբ մարրուճ մը. . .

— Անոնք վաղվան գործ են, Արիսողոմ աղա, թող տվեք, վոր սա պատմությունս լմընցնեմ։ Մելքոն աղան թևես բռնելուն պես քաշեց զիս ազգային ընթերցատունն, ուր յերիտասարդները նստած թուղթ կը խաղային։

— Յես ալ կըսեմ, վոր մարրուճը յեթե կարճ ըլլա, ավելի աղվոր կերենա պատկերին մեջ։

Կյանքիս մեջ հարցուր անդամեն ավելի հանդիպած եմ այս տեսարանին, ուր յերկու գորասաններ խոսքն իրարու բերնեն հափշտա-

Մեծապատիվ մուրացկանները

կելով՝ յուրաքանչյուրը կը փափաքի առաջ յուր խոսքը մտիկ ընել տալ: Այո՛, հարյուր անգամ ներկա դանված եմ. յերկու անգամ ընկերություններու մեջ և իննուունը ութը անգամ Ազգային յերեսփոխանական ժողովո՛) մեջ: Հարյուր մեկերորդ անգամն եր այս, և սատանան կը դրդեր զիս ըսելու այս յերկուքեն մեկուն. «Թո՛ղ տուր դիմացինիդ լմնցնել յուր խոսքն և վերջը խոսե»: Բայց վորովհետեւ ուրիշ անգամներ այսպես խոսած ըլլալուս համար մեկուն կամ մեկալին սիրու կոտրած եմ, վորոշեցի չեղոքություն պահել, թող տաղ իրենց՝ փոխասացություն ընել և սպասել տեսնելու համար, թե ինչպես պիտի վերջանա այս տեսարանն, վոր Ազգային յերեսփոխանական ժողովու մեջ գրեթե միշտ կոփով կը վախճանի:

— Իրավունք ունիք, պատասխանեց Մանուկ աղան, կարձ մարբուճը շատ աղեկ կերեա պատկերին մեջ, բայց և այսպես մաքուր և շիտակ ըլլալուն յե թաղական ընտրվող մարդ մը:

— Դուք աղեկ կը ճանչնա՞ք:  
— Իմ ճանչնական մինակ ողուտ չըներ, Քվեարկությամբ կընտրվի:

<sup>1)</sup> Ազգային յերեսփոխանական ժողով—ըստ տաճկահայոց Ազգային սահմանադրության՝ յերեսփոխանական եր կոչվուա այն կենտրոնական պատգամափորական ժողովը, վոր գումարվուա եր Պոլսում և վորին պատկանում եր ազգային դործերի տնորինության բարձրագույն իրավունքը:

— Քվեարկությա՞մբ:  
— Այո՛, ըստ սահմանադրության<sup>1)</sup> Քվեարկությունը կընտրե:   
— Ի՞նչ կըսեք, թաղեցին քվե՞ պիտի տա հիմա աղեկ մարբուճ մը ընտրելու համար:   
— Թաղականի վրա յե մեր խոսքը:   
— Թաղական ուսկից հանեցիր. մարբուճի վրա յե մեր խոսքը:   
— Մի՛ բարկանաք, Արքասողոմ աղա, այնպես ըլլա:   
— Ինչո՞ւ բարկանամ պիտի... վաղը յերթանք, հատ մը առնենք:   
— Կառնենք:

Այս պահուն սենյակի դուռը բացվեցավ, և կնկան մը գլուխ յերեցավ:

Այս կինը Շուշան կը կոչվեր, և յուր արհեստն ալ սիրո միջնորդություն եր. այրեցուն կին կը գտներ, կիներուն այր կը մատակարարեր և զանոնք իրարու հետ ամուսնացնելով յուր աշխատության վարձքը կընդուներ: Յերբեմն ալ այրը կինեն կը զատեր և դարձյալ յուր աշխատության փոխարենը կատուներ: Տարիքն, յեթե իրեն հարցունես, յերեսունը վեց ե, իսկ յեթե հարցունես ինձի,

<sup>1)</sup> Ազգային սահմանադրություն—այսպես կոչվուա ե հայ ազգային-կուլտուրական ինքնավարության այն կանոնադրությունը, վոր հորինված եր տաճկահայրի համար և ոսմանյան կառավարության կռվմից հաստատվել 1863 թվականին:

վոր միշտ սովորություն ունիմ կնկան մը խոս-  
տովանած տարիքին վրա տասն ավելցնել, քա-  
ռասունը վեց ե: Ծաղկի հիվանդությունը յուր  
նշանները ձգած ե անոր յերեսը: Սև և յերկար  
դեմք մը, վորուն կեսը կը կազմեր ծնո-  
տը, և վորուն մեջ տեղը յերկնցած եր քիթ  
մը, վոր բարձր և ճոխ հանդ մ' ուներ, կը  
կրծը յուր վրա յերկու փոքրիկ և սև աչեր,  
վոր ամեն վարկանին չորս կողմը կը պըտ-  
տեյին: Հարիվ յերկու մատ լայնությամբ ճա-  
կատ մ' ուներ. ընքվիները հիվանդութենե թա-  
փած եյին:

Տիկին Շուշան գլուխը գոնեն ներս խոթե-  
լեն յետքը գուռը բացավ և ներս մտավ ըսե-  
լով.

— Յեթե գաղտնի խոսք մը ունիք, դուրս  
յելնեմ:

— Վո՛չ, պատասխանեց Մանուկ աղան,  
թաղականի վրա կը խոսեյինք:

— Գետնին տակը անցնի այն թաղականի  
խողիքն, ըսավ տիկին Շուշան և ծանրու-  
թյամբ գլուխն Արիսողոմ աղային ծոելով  
գնաց բազմոցի մը վրա նստելու:

— Բարի յեկաք, տիկին, ըսավ Մանուկ  
աղան:

— Բարի տեսանք: Դուք ալ բարի յեք յե-  
կեր, Արիսողոմ աղա. քաղաքնիս ի՞նչպես  
գտաք, նայինք՝ հավնեցա՞ք:

— Հավնեցա, շատ աղեկ ե:

— Այս կողմերը ի՞նչ գործ ունիք, հար-  
ցուց Մանուկ աղա, դարձյալ նշանտո՞ւք մը  
կա, ի՞նչ կա:

— Հրամմեր եք, սա դիմացի տունը յե-  
կա, և անգամ մ' ալ ձեզի հանդիպիմ, ըսի: Սա  
Աթառամին աղջիկը դիմացինիդ տղուն կու-  
զեմ չինել. գործն ալ լմնցածի պես եր, բայց  
տիկին Մարթան յուր աղջիկը տալ ուգելուն  
համար Անթառամին աղջկանը վրայոք խել մը  
խոսքեր ըսած ե մանչուն, ան ալ քիչ մը պա-  
զած ե: Այսոր յեկա, վոր զինքը տեսնեմ և  
համոզեմ, բայց դուրս յելած ըլլալուն՝ վաղը  
պիտի գամ:

— Աղջիկ մ' ալ մեր Արիսողոմ աղային  
չգրտնա՞ս:

Արիսողոմ աղան ժպտեցավ:

— Տիկինն արդին իմացուց ինձի վարը,  
թե Արիսողոմ աղան կարգված չե, և յետ ալ  
շիտակը անոր համար վեր յելա պատասխա-  
նեց տիկին Շուշան ճերմակ թաշկինակովն քի-  
թը սրբելով:

— Անանկ միտք մ' ունիմ, ըսավ Արիսո-  
ղոմ աղան տեղեն յելնելով և սիկար մը հր-  
րամցնելով տիկին Շուշանին:

— Յեթե անանկ միտք մը ունիք, քեզի  
ալ կրնանք ձեր ուզածին պես աղջիկ մը գըտ-  
նել. քսան տարիե ի վեր այս գործին մեջն եմ,  
ամենքն կը ճանչնամ: Հրամանքնիդ ի՞նչ-

պես աղջիկ կուզեք, անդամ մը ան հասկնաւ-  
լու յեմ յես:

Մանուկ աղան տեսնելով, վոր Աբիսողոմ  
աղան տիկին Շուշանի հետ խոսքի բռնվեցավ,  
դուրս յելավ՝ ուրիշ անդամի պահելով թա-  
ղականի պատմությունն, զոր չեր կրցած ա-  
վարտել:

— Աղվոր աղջիկ մը կուզեմ, պատասխա-  
նեց Աբիսողոմ աղան խնդալով:

— Գիտեմ, վոր աղվոր աղջիկ կուզես.  
ուզած աղջիկդ հարուստ ըլլալու յե:

— Այո՛:

— Պարկեշտ:

— Հարկա՛վ:

— Տասընվեց, տասնեռութ տարեկան:

— Ճիշտ:

— Դաշնակ զարնել գիտնա:

— Գիտնալու յե:

— Աղեկ պարե:

— Հրամմեր եք:

— Շատ լավ, ասանկ աղջիկ մը կա ձեռ-  
քիս տակ, բայց այս տեսակ աղջիկները գործ  
չեն տեսներ տունը. առտվրնե մինչև իրիկուն  
ծունկ ծունկի վրա կը դնեն և կերպեն, կը  
պարէն և կամ բոլոր որ կը պտըտին. հիմակ-  
վընե ըսեմ, վերջեն ինձի պտառառ չը բռնես.  
աղեկներն ալ կան, բայց գտնելը շատ դժվար  
է: Քու ըսած աղջիկներուդ մեջ անանկներ ալ  
կան, վոր իրենց ուզած մեկը կը սիրեն և շատ

անդամ անոր հետ գեղ մը կը փախչեն, և դուն  
ալ կսպասես, վոր կինդ գա:

— Ի՞նչ կըսեք: Յեթե այդպես ե, չեմ ու-  
զեր:

— Բայց կան ալ, վոր վրադ կիսենդենան:

— Յեթե այսպես ե, կուզեմ:

— Բայց կան ալ, վոր ամիս մը իրենց  
սիրածին հետ կապրին և քու անունդ բնակ  
չեն տար:

— Յեթե այնպես ե, չեմ ուզեր:

— Բայց կան ալ, վոր վայրկյան մը քովեդ  
չեն բաժնվիր:

— Յեթե այսպես ե, կուզեմ:

— Ասոնք ըսելուս համար ինձի բան մի՛  
ըսեր. վասնզի կան անանկներ ալ, վոր թող  
կուտան իրենց կինը ուրիշի մը հետ սիրահա-  
րություն ընել և աղջկան հորմեն քիչ մը դրամ  
առնելով աչք գոցել:

— Իրա՞վ կըսեք. անանկ երիկ մարդ կը  
դանվի՞ աշխարհիս վրա:

— Մազես շատ:

— Յեկ այն տեսակ երիկ մարդերու և կի-  
ներու յերեսը ո՞վ կնայի:

— Ամեն մարդ. կինը կարդարացնեն՝  
ըսելով, թե սատանայի խարված ե, երիկն ալ  
կը սրբացընեն՝ ըսելով, թե խեղճը չգիտեր  
յուր կնոջ բռնած ընթացքը:

— Ե՛, հիմա կը ճաթիմ... չեմ ուզեր, չեմ  
ուզեր թող մնա՛, իմ քաղաքս կը կարդվիմ:

— Բայց և այնպես անանկներ ալ կան,  
վոր քեզի համար իրենց հոգին անզամ կու-  
տան:

— Անանկ մեկն յեթե դտնեմ, կը կարդ-  
պիմ:

— Յես անանկ մեկը պիտի դտնեմ քեզի.  
իմ հարցունելս սա յե, վոր ձեր ինչ տեսակ  
աղջիկ ուզելը հասկնամ:

Յես ալ իրավունք կուտամ տիկին Շու-  
շանին. վասնզի ամեն որ այնպիսի ամուսնու-  
թյուններ կը տեսնենք, վորք մարդուս զար-  
մանք կուտան: Ատեն մը հետաքրքրության հա-  
մար կարգված մարդու մը սիրո կրկնատոմա-  
րը գրեցի և տարեգլխուն հաշվեկշիռը հանե-  
լով տեսա, վոր մարդը սնանկացած եր բարո-  
յականության մեջ: Բարես կտրեցի իրմե և  
սակայն մեծ զարմանքով տեսա, վոր այդ  
մարդը մեծ պատիվ կը դտնե ընկերություն-  
ներու մեջ և իրեւ բարոյականի տեր անձ մը  
ամեն կողմէ հարգանք կընդունի: Հետաքըրք-  
րությունս ալիւցավ. հաշվեկշիռ նորեն աչ-  
քե անցուցի և դիտեցի, վոր կինն, զոր յես  
այդ մարդուն ընկեր նշանակած եյի, մայր  
հաշվույն մեջ դրամագլուխի կաղմ անցած և  
երկանը տետրակին մեջ: Յեթե որ մը սիրո  
տոմարակալություն մը հրատարակեմ, մեծ  
հուզմունք պիտի պատճառեմ հաշվագետնե-  
րու մեջ. վասն զի յես շատ երիկ մարդիկ գի-  
տեմ, վորոնք կինն իրենց սիրո հաշվույն մեջ

ընդհանուր ծախքի կողմ կանցունեն, շատերը  
կարասիքի հաշվույն տակ կը գրեն, վոմանք  
ընդհանուր ապրանքի կարգը կանցունեն, վո-  
մանք վնարելի թուղթերու և վոմանք ընդու-  
նելի թուղթերու հաշվույն մեջ կը նշանակեն:  
Խիստ քիչ են այն նախանձելի ամուսնություն-  
ներն, վորոնց մեջ կինը երկանը ընկեր կարձա-  
նագրվի սիրո տետրակին մեջ:

— Կարգվիլը շատ անուշ բան ե, հարեց  
սիրո միջնորդն, քեզի հարմար աղջիկ մը գր-  
տա՞ր, ամեն որ արքայության մեջ ես...

— Յես ալ ասոր համար ե, վոր կարգվիլ  
կուզեմ:

— Կինդ ընավորությանդ չհարմարեցա՞վ,  
ամեն որ գժոխքի մեջ ես, կրակներու մեջ կե-  
րիս:

— Յես ալ ասոր համար ե, վոր կարգվե-  
լու կը վախնամ:

— Նայեցե՞ք, ձեզի բան մը ըսեմ, աղա՛,  
հրամանքնիդ հարկավ մեծ տեղե մը աղջիկ կու-  
զեք առնել, վասնզի դուք ալ մեծ մարդ մ' եք:

— Այո՛, այո՛, մեծ տեղե կուզեմ:

— Յես ալ քեզի մեծ տեղե մը աղջիկ կը  
դտնամ, բայց հրամանքնիդ ֆրանսերեն գի-  
տե՞ք:

— Մեծ տեղե աղջիկ առնելու համար ան-  
պատճառ ֆրանսերե՞ն գիտնալու յե:

— Այո՛, վասնզի մեծ տեղե աղջիկներն  
ֆրանսերեն կը խոսին, և յերբ կին մը յուր եր-

կանը չգիտցած լեզվով ուրիշի մը հետ կը խոս-  
ոի, տակեն նախանձ կենե:

— Յես ալ կը սորվիմ Փրանսերեն:

— Բացի ասկից, յերջանկությունը շատ  
քիչ կը դտնվի այն ամուսնության մեջ, ուր  
կնիկն երիկեն ավելի բան դիտե:

— Այնպես ե, յես ալ այն կարծիքին եմ:

— Հրամանքնիդ յելրոպական յեղանակ-  
ներեն բան մը կը հասկնա՞ք:

— Ամենեին բան մը չեմ հասկնար և մա-  
նավանդ թե կը ձանձրանամ:

— Ի՞նչ պիտի ընես ուրեմն, յեթե կինդ  
ժամերով դաշնակի առջևն անցնի և այդ նվա-  
գարանի վրա յելրոպական խաղեր զարնե:

— Թող չեմ տար, յես ձանձրույթ կիմա-  
նամ:

— Ան հաճույք կղգա:

— Կին մը ի՞նչ իրավունք ունի յուր եր-  
կանը գլուխ ցալցունելու:

— Երիկ մը ի՞նչ իրավունք ունի յուր  
կինն զուարձութենե զրկելու:

— Յեթե գործը մինչև աս տեղվանքը պի-  
տի դա, չեմ կարգվիր:

— Զկարգվիլ չըլլար, միայն թե պիտի  
ստիպվիս կնկանդ ճաշակին հարմարելու հա-  
մար դաշնակ սորվիլ:

— Յես կրնա՞մ սորվիլ:

— Ինչո՞ւ չե, մանավանդ թե ավելի դյու-  
րին ե քեզի դաշնակ զարնել սորվիլ, քան թե

կնկանդ դաշնակ զարնելը մոռնալը:

— Յեթե այսպես ե, ատոր ալ ճամբան  
դուսնք ըսել ե:

— Ասոնք ըսելուս պատճառն ան ե, վոր  
յես հոգիս սեցունել չեմ ուզեր. ամեն ըան ա-  
ռաջուց կըսեմ, վոր վերջեն ինձի պատճառ  
չբունեն: Իմ ձեռքիս տակ ամեն դասե աղջիկ  
կա. բարձր դասեն, միջին դասեն և ստորին  
դասեն. այս յերեք դասեն ալ ծախու ասլրանք  
ունիմ. Հրամանքնիդ ձեր քսակին հետ խորհըր  
դակցեցեք և ինձի ըսեք՝ սա դասեն կուզեմ: Հայտնի յե, վոր բարձր դասը շատ սուզ ե,  
միջինն՝ նվազ սուզ և ստորինն՝ աժան:

— Յես շատ աժան չեմ ուզեր:

— Շատ լավ. աղջիկը ձերմա՞կ դույն ու-  
նենա, թե քիչ մը թուկ:

— Ձերմակ կուզեմ:

— Աչքերը սկ՝, թե կապույտ:

— Յեկու, տես, վոր սկն ալ կը սիրեմ,  
կապույտն ալ...

— Կամ մին պիտի ըլլա, կամ մյուսը.  
վասնզի չկրնար ըլլալ անանկ աղջիկ մը, վո-  
րուն մեկ աչքը կապույտ ըլլա, մյուսը՝ ու:

— Կապույտ ըլլա թո՛ղ:

— Շատ լավ: Հասակն և մազերը...

— Յերկար, յերկար:

— Մեջքը...

— Մեջքը բարակ ըլլա, բայց տկար չեմ

սիրել. կուզեմ, վոր քալած ժամանակը միսերը շարժին:

— Կը հասկնամ, այսչափը հերիք ե. ճիշտ ուղածիդ պես աղջիկ մը կա, վոր շատ ալ պար կեշտ և երեն երկանը համար հոգի տալ կերեվա:

— Յես ալ անանկ մեկը կուզեմ:

— Թերես վաղը քու անունդ իրեն ըսելուս պես վրադ սեր կապէ: Պատկերդ տուր, վոր իրեն անդամ մը ցցունեմ:

— Պատկերս վաղը հանել պիտի տամ:

— Վա՞ղը... վաղը հանել տալու վոր ըլլաք, ութը որեն կառնեք, և ութ որ սպասե՞նք:

— Ինչու սպասէնք, վաղը կերթանք. մեծ տեղե՞ն և աղջիկը:

— Այո՛:

— Հայրը հարո՞ւստ ե:

— Շատ հարուստ ե, բայց հարստությունը չը ցցուներ:

— Շատ խանութներ ունի՞:

— Քսանի չափ:

— Տո՞ւն:

— Քառասունի մոտ:

— Շատ աղեկ, վաղը չե մյուս որ կերթանք այդ աղջիկը տեսնելու:

— Գլխուս վրա. ցերեկին կուզամ, և մեկ տեղ կերթանք: Մնաք բարով, Աբիսողոմ աղա, սիրտդ հանդիստ բռնե. յես քեզ չեմ խա-

բեր, ուրիշներու կրակե շապիկ հազցնողներե չեմ: Կեցիք բարով. վաղը չե, մյուս որ:

Տիկին Շուշանը կը մեկնի:

## Ը

Մանուկ աղան, վոր վարի սենյակն եր և խահվե կը խմեր, տիկին Շուշանին վար իջնալն տեսնելուն պես՝ խահվեյի գավաթն թողուց և Աբիսողոմ աղային քովը գնաց:

— Այսպէս, ըսապ, Մելքոն աղան թևես քաշեց, և մեկտեղ ընթերցատունը մտանք: Այդ ընթերցատունը ժամանակավ գինետուն եր: Աստված վողորմի հոգուն, Կոմիկ աղան կը բռներ, աղեկ մաքդ մ'եր. հիվանդություն մը յեկավ վրան, շատ բժիշկներ նայեցան, ճար մը չկրցին գտնել, և խեղճը մեռավ...

Մանուկ աղային կինը լրագիր մը ի ձեռին ներս մտավ և լրագիրը Աբիսողոմ աղային տալով.

— Մեծապատիվ եֆենտին հատկապես բարեւ ըրած և ձեղի, ըսապ և դուրս յելավ:

Աբիսողոմ աղա աճապարանոք բացավ լրագիրն և կարգաց.

«Վանեն հետեւյալը կը գրեն մեզ»: Աս չե, վարինը կարդանք, ըսապ և կարդաց. «Մեր բարեկամներեն մին Մուշեն հետեւյալը դրկած ե մեզ ի հրատարակություն»: Աս ալ չե, մյու-

սը նայինք «Քուրիյե տ, Որիանի»<sup>1)</sup> մեջ հետեւվյալ տողերը կը տեսնվին»: Մյուս յերեսն անցնինք. «Թայմզի<sup>2)</sup> թղթակիցը հետևալը հեռագրած է հիշյալ լրագրին»: Ասոնց մեջ իմ անունս չկա... սա կտորը նայինք... «Մայրաքաղաքիս ազնվական դասուն անդամ մ'ալ ավելցավ այս որերս: Յերեւելի վաճառական և բազում աղարակներու տեր, ազգասեր, լեզվագետ, ազնվասիրու և վեհանձն Արիսողոմ եֆենտի, վոր մեր ազգայնոց ծանոթ ե, յերեկ Տրապիզոնի շոգենավոլ մայրաքաղաքս յեկավ և ուղղակի Բերա<sup>3)</sup> յելավ Ծաղկի փողոց, թիվ 2 տունը: Արիսողոմ եֆենտիի պես մեկու մը մայրաքաղաքս դախն անշուշտ մեծուրախություն պիտի պատճառե մեր բարեմիտ ազգայնոց»:

Արիսողոմ աղան Մանուկ աղային դառնալով՝ տես, ըսավ, ի՞նչ գրած է ինձի համար, և բարձր ձայնով անդամ մ' ալ կարդաց:

— Մեծապատիվ եֆենտին բարե կընե յեղեր, ըսավ տիկինը նորեն ներս մտնելով, բաժանորդագին պիտի տաք յեղեր:

<sup>1)</sup> Կուրիեր դ'Արիանը («Արեւելքի Սուրհանդակ») Պոլսում հրատարակվող Փրանսական թերթ եր:

<sup>2)</sup> «Թայմզ» անգլիական ամենատարածված ու ազդեցիկ լրագրերից մեկն ե, հիմնված ավելի քան հարյուր տարի առաջ:

<sup>3)</sup> Պերա կոչվում ե Պոլսի յեկըռոպական քաղաքամասը:

— Հիմա՛, ըսավ Արիսողոմ աղան և տըշավ բաժանորդագին տիկնոջ, վոր վագելով վար իջավ:

— Սա մարդը զեշ չը<sup>0</sup> գրեր կոր, հե՛, հար յուց Արիսողոմ աղան:

— Այո՛, զեշ չըդրեր:

— Պատվական լրագիր մ' եւ:

— Ավելի պատվականը կրնա ըլլալ:

Տիկին դուռը բանալով Արիսողոմ աղային նամակ մը, խոչոր ծրար մը հանձնեց ըսեւով.

— Մեծապատիվ եֆենտին մասնավորապես կը բարեւ զձեզ:

Արիսողոմ աղան նամակը բացավ և հետեւվյալը կարդաց.

«Մեծապատիվ եֆենտի,

Զեր մեծապատվության մայրաքաղաքս դախն իմանալով փութացի ձեր գալուստը չնորհավորելով՝ լրագրես տասն որինակ զըրկել: Քաջահույս եմ, վոր պիտի հաճիք ձեր բաժանորդությամբը քաջալերել լրագիրս, վորով պիտի խրախուսեք դիս, վոր խմբագրական տաժանելի ասպարեզին մեջ ազգին ծառայություններ ընելու կոչված եմ:

Մնամ հարգանոք  
խմբագիր-տնորեն  
..... լրագրություն  
(ստորագրություն)

— Տասը հատն ի՞նչ ընեմ...

— Կշտանալով կը կարդանք...

Տիկինը նորեն ներկայացավ ծրարով մը և  
նամակ մ' ալ տվավ Արիսողոմ աղային, վոր  
բանալով սկսավ կարդալ:

«Մեծապատիվ եֆենտի,

Զեր հանրածանոթ ազգասիրությունը քա-  
ջալերություն տվավ ինձ լրագրես տասնը  
հինգ որինակ զրկել ձեզ: Քաղցր ե ինձ հու-  
սալ, վոր պիտի բարեհաճիք զանոնք ընդու-  
նիլ և պաշտպան կտնզնիլ լրագրության, վոր  
մեր մեջ ընթերցասիրության չը տարածվելուն  
պատճառովը դժբախտաբար գեշ վիճակի մը  
մեջ կը գտնվի:

Մնամք հարգանոք  
խմբադիր-տնօրեն

..... լրագրո

(ստորագրություն)

Արիսողոմ աղան նամակը ծալելու վրա  
յեր, տիկինը ներս մտավ.

— Մեծապատիվ եֆենտին սիրո բարեներ  
կրնե յեղեր ձեզի, ըսավ և նամակով մը գիր-  
քեր ներկայացուց Արիսողոմ աղային, վոր նա-  
մակը բացավ և սկսավ կարդալ.

«Մեծապատիվ եֆենտի,

իմ մտքիս ծնունդն յեղող քերթածները  
հրատարակած ըլալով՝ արժան դատեցի անոնց-  
մե քառասուն որինակ ձեզ զրկել: Կը հուսամ,  
վոր չնորհ կընեք զանոնք ընդունելու և կեր-  
պով մը քաջալերություն տալու ինձ, վորպես

զի մյուս քերթվածներս ալ քիչ որեն հրատա-  
րակության տամ:

Խնդրելով, վոր ընդունիք իմ խորին մե-  
ծարանացս հավաստիքը, մնամ ձերդ մեծա-  
պատվության խոնարհ ծառա:

(ստորագրություն)

Արիսողոմ աղան նամակը գոցեց և քովը  
դրավ:

Տիկինը դարձյալ ներս մտավ:

— Մեծապատիվ եֆենտին բարեկ ըրած և  
դարձյալ, հարցուց Արիսողոմ աղան:

— Վ'չ, բեռնակիրներն մեկը յեկած և և  
կրողչեքը կուզե:

Արիսողոմ աղան քսան դահեկան հանեց,  
տվավ:

Տիկինը դուրս յելավ, դուռը գոցեց:

— Ընթերցատան մեկ անկյունը քանի մը  
հոգի նստած ընտրելի թաղականներու ցուցակը  
կը պատրաստեյին, ըսավ Մանուկ աղա՝ յուր  
պատմությանը թերն ձեռք առնելով: Անոնք  
մեր կողմեն չեյին և կաշխատեյին, վոր  
իրենց ուղած կաշառակեր մարդերը թաղական  
ընտրեն:

— Տղուն մեկը յեկավ սա գիրքերը ձգեց,  
գնաց, ըսավ տիկինը նորեն մտնելով. մնա-  
պատիվ եֆենտին շատ բարեկ կընել յեղեր և  
այսոր կամ վաղը պիտի գա յեղեր զձեղ տեսնե-  
լու:

Տիկինը գրքերը սեղանի մը վրա դրավ:

Մեծապատիվ մուրացկանները

— Ի՞նչ ընեմ այսչափ գիրքերը, գրաված՝ ալիտի ըլլամ յես։ Չեմ ուզեր, ալ ամկից վերջը յեթե բերող ըլլա, մի ընդունիր, Արեւողոմ աղան հոս չե՛ ըսե՛ և ճանբե՛։

— Ատ ալ ըըլլար, դուն խմբագիրները չես ճանչնար. անոնց մեջ կը գտնվին այնպիսիներ, վոր յերբ իմանան, թե իրենց ընկերներեն մեկուն լրագիրն առած ես և իրենցը չես առեր, վրադ կը հարձակին և չլսված խոսքեր կընեն։

— Յեթե այնպես ե, ընդունե, վորչափ լրագիր վոր բերեն. ի՞նչ ընենք, բոնվեցանք անդամ մը. յեթե գիրք բերեն, մի՛ ընդուներ։

Տիկինը գլուխը ծոելով դուրս յելափ։

— Թեպետ և այդ մարդիկն իրենց ուզածները թաղական ընտրելու կաշխատեյին, բայց իրենց մեջ ալ անմիաբանություն կար. ակնավաճառն յուր առաջին հաճախորդը կուզեր թաղական ընտրել, հացագործն կուզեր թաղական ընտրել այն միլրդն, վորուն տումը որը տամու հաց կուտար. դերձակն թաղական տեսնել կը փափազեր այն յերիտասարդն, վորուն վրա շաբաթը յերկու անդամ հագուստ, կը ձեեր և կը կարեր. համետագործը քվե տալ կուզեր այն հարուստին, վորուն մեկ յերկու համետ կը շիներ տարին. խմբագիրն յուր բոլոր բաժանորդները թաղական խորհրդու մեջ տեսնել կուզեր. փաստաբանը իրեն շատ դատ հանձնողին քվե կուտար. բժիշկն՝ յուր ամեն ծանր հիվանդին, և դինեպանն ալ ամենեն

շատ ողի և դինի խմողին կուզեր հանձնել թաղին գործերը։ Այս այսպես իրենց մեջ...»

Մանուկ աղան դարձյալ չկրցավ շարունակել յուր պատմությունը, վասնզի ուրիշ հյուր մը ներս մտնելով ընդհատեց անոր խոսքը։

Այս հյուրը մաքուր հազված յերիտասարդ մեր. յուր կլոր և ճերմակ դեմքը շրջանակված եր գեղինով խառն սև մորուքե՞մը, վոր շատ չեր վայրէր։ Պատկերներ կան, վոր առանց շրջանակի ավելի գեղեցիկ կերպան. թեպետ և կան ալ, վոր գեղեցիկ յերեւալու համար շրջանակի կը կարուտին։ — Յեթե բնությունը չարգիրներ կիներու շրջանակի մեջ անցունել իրենց դեմքերն, այսոր վո՞րչափ կիներ մորուք պիտի ունենային։ — Այս յերիտասարդը ներս մտնելուն պես հանեց յուր սև և յերկար գլխարդն և բարեկց սենյակին մեջ գտնվող յերկու բարեկամները։

Մանուկ աղան անմիջապես դուրս յելափ բարկությամբ մոմուլով։

— Այս տարիքն յեկած եմ, և ասանկ բան գլուխս յեկած չեր. թո՛ղ չեն տար, վոր յերկու խոսք ընեմ. հազիկ թե բերանս կը բանամ, մեկը կուզա, կսկսի խոսիլ, և իմ խոսքս բերնիս մեջ կը մնա։

— Արիսողոմ աղա հրամանքնի՞դ եք, հաբուոց հյուրն բազմոցի վրա նստելեն յետքը։

— Այս, յես եմ։

— Շնորհակալ եմ, վոր Արիսողոմ

աղան յուր եք. ձեր գալուստը լրագրի մեջ  
կարդացի և շատ ուրախացա, վոր ազգերնուա  
մեջ ձեղի պես ազնիվ սիրո կրող ազգասերներ  
պակաս չեն, վասնզի այն ազգն, վոր ազգա-  
սեր չունի յուր մեջ, ազգ չե:

— Այո՛:

— Փոխադարձաբար այն ազգասերն ալ-  
վոր ազգ չունի, ազգասեր չե:

— Շիտակ ե:

— Այս յերկուքն իրարու հետ այնպիսի  
սերտ կապակցություն մ' ունին, վոր իրարմե-  
բաժնելուդ պես՝ յերկուքն ալ կը կորսըվին:  
— Այնպես ե:

— Ազգ մը, վոր յուր աշխատավորները  
չքաջալերեր, ավելցուց հյուրն միշտ ծանր և  
լրջագույն յեղանակով մը, ազգերու կարդ-  
անցնելու բնավ իրավունք չունի:

— Շատ աղեկ կը խոսիք:

— Յեկ յերբ աշխատավոր մը վարձքը  
չընդունիր յուր ազգեն, բնականաբար կը  
զհատի և յերբեմն կը խորհի յերթալ ինք-  
զինք ծովը նետել:

— Աս տղայություն ե:

— Ներեցե՛ք, Արիսողոմ աղա, յեթե մեր  
այս տուածին տեսությանը քիչ մը համարձակ  
կը խոսիմ ձեղի հետ:

— Հոդ չե՛:

— Ծանադ վեց տարի Յեկըոպա մնացած  
եմ և բժշկություն սորված եմ:

— Աղեկ արվեստ:

— Գիշերները քունս ծախելով կարդացած  
ու գրած եմ, վորպեսզի քաղաքս դառնամ և  
ազգիս ծառայություն ընեմ:

— Մարդ ալ յուր ազգին ծառայություն  
ընելու յե:

— Յերկու տարի յե, վոր հոս կը դժնը-  
վիմ, և մինչև այսոր հազիվ չորս հիվանդ  
նայած եմ. հասկցիր, թե ի՞նչպես կը քաջա-  
լերվիմ հոփ բժիշկները:

— Ցավալի բա՛ն... այս տեղացիները  
հիվանդ ըլլալու սովորություն չունի՞ն...

— Ունին, բայց հոս հիվանդները ազգային  
զգացում չունին, Հայաստանի վրա գաղա-  
փար չունին:

— Ի՞նչ կը անալ:

— Այո՛, յերբ հայ մը հիվանդ ըլլա, ոտար  
ազգե բժիշկ մը կը բերե յուր տունը՝ առանց  
զիտնալու, թե հայու ցավն հայը կարող ե  
միայն բժշկել, առանց համոզվելու, թե ոտարը  
չե կարող հայու ցավուն դարման ըլլալ: Այս-  
որվան որս յերկու հազարեն ավելի հայ բժիշկ  
կա. ասոնց մեջեն հինգ վեց հատը, մանա-  
վանդ յերկու յերեք հատը պատվական կյանք  
կանցունե, և անդին մնացածը ամեն որ բերանը  
կաց կսպատէ, վոր հիվանդ մը ներկայանա  
իրեն և ստակ առնե:

— Գեշ վիճակ:

— Ի՞նչ ընեն ազգային բժշկներն, յերբ

ազգային հիվանդներն ոտարներու կը դիմեն . . . վո՞հ, ոտարասիրությունն, ոտարասիրությունն, գոչեց բժիշկն աչերն յերկինք վերցնելով, յե՞ք պիտի յերթաս մեր քովեն:

— Ոտարասիրությունը աղեկ բան չե:

— Մանավանդ թե բժիշկները քաջառ լերելու չափ հիվանդություն ալ չկա մեր ազգին մեջ. և այն ազգին մեջ, վոր հիվանդությունը տարածված չե, պարապ բան է Յեվրոպայի բժիշկներուն չափ ճարտար բժիշկ ներ հուսալ, ինչպես նաև այն ազգն, վորու մեջ ընթերցասիրությունն տարածված չե, իրավունք չունի տաղանդավոր և հանձարեղ հեղինակներ ունենալու. տաղանդն և հանձարն առանց քաջալերության կը մեռնի:

— Շատ իրավունք ունիք:

— Չեք կարող յերևակայել, Արքսողոմ աղա՛, թե վորչափ հուսահատած եմ. հազար անգամ զղջացած եմ, յերկու հազար անգամ անեծք կարգացած եմ բժիշկ ըլլալուս համար. ուր եր, թե բժիշկ ըլլալու տեղ հիվանդ ըլլայի և . . . մեռնելի. մեր ազգին մեջ հիվանդությունը բժշկութենեն աղեկ ե, վասնդի տգիտությունն գիտութենեն ավելի կը քաջալերվի. . . թեթևությունը ծանրութենեն ավելի հարդ կը գտնե, մոլիներն առաքինիներեն ավելի պատիվ կը վայելին. ճշմարիտ աստված, ուխտ ըրած եմ, վոր յեթե որ մը յերևելի ազգայիններեն հի-

վանդ մը նայիմ, անոր անունը լրագիրներու մեջ՝ բարձրացունեմ:

Այս խոսքին վրա Արքսողոմ աղա արթնցավ, այսինքն փառասիրությունն արթնցավ: ի՞նչ անուշ բան և թերություններ հավաքել միամիտ մտրդերու վրայեն: Խորամանկներն յերբեմն վարպետությամբ այնքան կը կեղծեն իրենց թերություններն, վոր անոնց հավաքիչները կը չվարեցնեն. վասնդի անոնք յերբեմն միամիտ և յերբեմն խորամանկ կը ձեւանան, ժամ մը՝ տղետ, ժամ մը՝ գիտուն, մերթ՝ անաշառ, մերթ՝ աշառու, մերթ՝ կեղծավոր, մերթ՝ անկեղծ, և յերբ ազգային նշանավոր, հաճարեղ և հերանույշ Ծերենցը<sup>1)</sup> ասոնցմն մին նկարագրելով անբնական անձ մը ներկայացնե, ամեն կողմե կը բասրվի, թե Ծերենցն տակալին Մանուկենց<sup>2)</sup> և անձեր ստեղծելու արհեստին մեջ, թե միկնույն անձին վրա Արքամն և Նեռն<sup>3)</sup>, սատանան և հրեշտակն, Զո-

1) Ծերենց (1822 – 1888) բժ. Հովսեփ Շիշմանյանի գրական կեղծանունն ե: Հայտնի լեն նրա յերեք պատմական գետերը՝ «Յերկունք», «Թորոս Լեռնի», «Թեոդորոս Ռշտունի»:

2) Մանուկենց – այստեղ հեղինակը բառախաղ և անում՝ Ծերենց կեղծանունը նկատի ունենալով:

3) Նեռ – հակաքրիստոս (ըստ քրիստոնեական վարդապետության՝ պետք և հանդիս զա աշխարհի վախճանի ժամանակ և կովի Քրիստոսի դեմ):

յիլն<sup>1</sup>) և Հոմերոսն<sup>2</sup>), արականն և իդականն միանդամայն կը ներկայացնե: Ի՞նչ հանցանք ունի ճերմակերես Ծերենցն, յերբ յուր ներկայացնելիք անձերն խորամանկ են:—Ներեցե՛ք, Արփառզոմ աղա և տեր բժիշկ, յեթե ճեր խոսակցությունն ընդմիջեցի. ի բնե քիչ մը անհամբեր եմ. յերբ խոսքին կարգը դա, չեմ կարող ինքինքս բոնել, վորչափ ալ այս բնավորությանս պատիքը կրած ըլլամ և կրեմ:—Այո՛, Ծերենցն կը ներկայացնե անձերն վոչ թե ինչպես վոր են, այլ ինչպես վոր կերեին: Ծերենցն այս մասին վորչափ ալ յերկնցնե յուր մազերն, իրավունք ունի, վասն զի ունինք հեղինակներ, վորոնք Ծերենցեն ավելի յերկար մազ ունին և կը ներկայացնեն իրենց անձերն վոչ թե ինչպես վոր են, այլ ինչպես վոր կուզեն իրենք, վոր ըլլան անոնք: Ասոր համար ե, վոր կին հեղինակներն յերբ Հայկ կամ Վարդան<sup>3</sup>)

1) Զոյլի — հունական անվանի հոետոր, փիլիսոփա և քննադատ եր (IV—III դար Ք. ա.). Նրա անունը դարձել է հասարակ անուն մանրախնդիր, նախանձոտ և խալթող քննադատի համար, վորովհետեւ Զոյլիր թունոտ, վոչնչացնող քննադատության և լինթարկել Հոմերոսին («Հոմերոսի խարազան»):

2) Հոմերոս (հունական ալանդությունների համաձայն՝ ապրել է մոտավորապես X—IX դար Ք. ա.). հույն ժողովրդական լերգիչ եր, վորին վեռագրվում են «Հիլիական» և «Վոլոդիսական» աշխարհահռչակ պոեմները. թարգմանված են բոլոր կուլտուրական ժողովուրդների լեզուներով, ինչպես և հայերեն:

3) Վարդան Մամիկոնյան նախարարական տոհ-

կամ Արտաշես<sup>1</sup>) ներկայացնել ուղեն, Վիքիթոր Հյուկոյի<sup>2</sup>) խոսքերը կամ Մոլթքեյի<sup>3</sup>) կարծիքները կը դնեն անոնց բերնին մեջ: Ասոնք կը կարծեն, թե յերբ Աղամ յուր ժամանակին հատուկ պարզությանը մեջ ներկայացնեն, կը կորսունեն իրենց տաղանդն, յեթե ունին, կամ կը վնասեն իրենց հանճարին, զոր ունենալ կը կարծեն, կամ վերջապես կը զրկվին այն համբավեն, զոր վաստակիլ կերպեն: Ո՞վ ըսած ե այս վողբերդակներուն, թե ավելի դժվար է մեկուն պատկերն ճշտությամբ նկարելն, քան թե յերեակայությամբ անբնական պատկեր մը գծելն. ո՞վ պոռացած ե ասոնց ականջըն ի վայր, թե նկարիչ մը պատկերներ ստեղծելու սկսելի առաջ՝ պատկերներ ընդուրինածելու յե:— Վոչ վոք: Յեվ ո՞վ կը հանդգնի կելու յե:— Վոչ վոք: Յեվ ո՞վ կը հանդգնի

մի հայտնի ներկայացուցիչն եր, պետական գործէշ և գորավար, հոչակվեց Ամարայրի գաշտուած տեղի ունեցողավար, հոչակվեց Ամարայրի գաշտուած տեղի ունեցողավար մի զորքերի կողմից (451 թ.) և սպանվեց:

1) Արտասես միքանի հայ թագավորների անունն է:

2) Վիկոր Հյուգո (1802—1885) — ֆրանսական բանաստեղծ, վիպասան և դրամատուրգ. ոսմանտիկական դպրոցի պարագլուխն եր Ֆրանսիայում: Նրա նշանավոր լերկերից մի քանիսը թարգմանված են հայերեն:

3) Մօլտկե կոմմ (1800—1891) պրուսական գեներալ-ֆելդմարշալ եր, գլխավոր շտաբի պետ. հոչակվել ե վորպես ուազմազետ (մասավանդ 1870—1871 թ.) ֆրանս-պրուսական պատերազմի ժամանակ:

այս փափուկ ժամանակին մեջ ուրիշի մը  
գործն անաշառաբար քննադատելով։ Մեր  
քննադատները, քիչ բայց ուղղված յամբ, ակնոց  
ակնոցի վրա կղնեն գործի մը մեջ գեղեցիկ  
կտորներ փնտռելու համար. փնտռելու հա-  
մար և վոչ թե տեսնելու համար, վասնզի տեսնը  
ված բանը չփնտռվիր։ Ասոնք բնավ տար-  
րերություն չունին գրաքննիչներեն, վորք  
վուե հրատարակության մը մեջ միայն տղեղ  
կտորներ կը փնտռեն։ Չեմ տեսած քննադատ  
մը, վոր տղեղ հրատարակության մը կոկոր-  
դեն բոնե, սղմե և սպաննե զայն։ Սպաննելու չե-  
գործ մը գեղեցկացնելու աշխատելու յե, կըսե,  
անոր գեղեցիկ կողմերը ցույց տալով միշտ և  
տղեղ կետերը հեռվանց ցցունելով խիստ քիչ  
անգամ։ Վո՞չ, պարոն քննադատներ, վո՞չ իրա-  
վունք չունիք, սպաննեցեք տղեղ գործերն և  
վստահ յեղեք, վոր պիտի գեղեցկանան անոնք։  
Մարդեր կան, վոր կը գեղեցկանան, յերբ  
մեռնին։ Յես, վոր այսչափ խստությամբ կը  
խոսիմ ուրիշներու յերկերուն վրայոք, կը կար-  
ծեք, թե քաղցրությա՞մբ կը վարվիմ «Մուրաց  
կաններուն» անձերուն հետ, վորոնց բերնեն  
յելած խոսքերն միայն բառ առ բառ կը գրեմ  
հոս, առանց իմ կողմես կետ մ' ավելցնելու  
հանդգնությունն ունենալու։ Բնավ յերբեք,  
մանավանդ՝ թե կզգամ, վոր իմ անձերս ալ  
ունին չատ թերություններ, զորս որ մը պիտի  
հարվածեմ։ Նույնիսկ մեծ թերություն մ'ե,

վոր պատմիչ մը յուր պատմության թելլ  
կտրե և յուր ընթերցողներն յերկու ժամ  
խոդիրեն դուրս խոսքնով զբաղեցնե։ Բայց  
ի՞նչ ընեմ, այս թերությունս իմ առավելու-  
թյունս ե, վասն զի այս թերությանս չնորհիվ  
ե, վոր կրցած համ քանի մը ընթերցողներու տեր  
ըլլալ, թերություն, վոր թերություններ ուղա-  
ղելու պաշտօնն ունի։ Այսչափ բացատրությունն  
ալ թերությանս համար։ Դասնանք ուրեմն մեր  
պատմության։

Արիսողոմ աղան, ինչպես ըսինք, ականջ-  
ները տնկեց, յերբ իմացավ, վոր բժիշկն յեթե  
հիվանդ մը գտնե, անոր անունն լրագիրներու  
մեջ պիտի հրատարակե. ուստի անմիջապես  
տկարություն ունենալ ուղեց։

— Աղեկ յեղավ, վոր, ըսավ բժշկին, այսոր  
հոս յեկաք, վասնզի քանի մ'որե իվեր վրաս  
գեշություն մը կա։

— Ի՞նչ կզգաք, հարցուց բժիշկը։

— Գեշություն մը կզգամ։

— Վո՞ր կողմդ։

— Վո՞ր կողմս։

— Այո։

— Ամեն կողմս։

— Ախորժակդ ի՞նչպես ե։

— Աղեկ ե։

— Կերածդ չուտ մը կը մարսե՞ս։

— Կը մարսեմ։

— Գիշերները հանդիսա կը քնարեա՞ս։

- Շատ հանգիստ, բայց վրաս գէշություն  
մը կզգամ:
- Գլուխդ յերբեմն կը ցավի՞:
- Այո՛:
- Վրադ սանկ թուլության պէս բան  
մը...  
— Ճիշտ:
- Յերբեմն դողալ մը սանկ...
- Այո՛, այո՛, դողալ մը սանկ... (մեկու-  
սի) կյանքիս մեջ դողացած չունիմ:
- Դողալեն վերջը տաքություն մը...
- Տաքություն մը:
- Տաքութենեն վերջը քրտինքը մը...
- Քրտինք մը:
- Առտուները լեզվիդ վրա լեղիություն  
մը:
- Այո՛, լեզվիս վրա լեղիություն մը:
- Հասկցա, բան մը չե, կանցնի, ինք-  
նինքդ մսեցուցած ես:
- Ինձի ալ այնպես կուզա, վոր ինքզինքս  
մսեցուցած եմ:
- Շատ բժիշկներ կան, վոր այս հիվան-  
դությունը չեն հասկնար, սխալ գեղեր կու-  
տան, ուրիշ հիվանդություն կը հրալիրեն:
- Ուրախ եմ, վոր դուք աղեկ հասկցաք,  
դեղ մը տվեք, վոր չուտ մը անցնի:
- Բժիշկը ծոցեն հանեց քերթակալը կամ  
տեսրոնը— յերկուքն վորն վոր ուզեք, կընաք  
դորժածել. ազատ եք նաև վոչ մին դորժածելու

- և վոչ մյուսն— թուղթ մը քաշեց անոր մեջեն  
և մատիտով քանի մը բառ գծելեն յետքը  
թուղթին վրա՝ Արիսողոմ աղային տվավ  
զայն՝ ըսելով.
- Ասիկա կարմիր ջուր մ' ե. ժամը մեկ  
պնդամ կը խմեք անկից խահվեյի գավա-  
թով. թեպետ և քիչ մը լեզի յէ բայց ազդու-  
յե:
- Շատ աղեկ:
- Մոոցա հարցնելու, թե բնությունդ  
ի՞նչպես ե:
- Բնությունս... շիտակը, խարդախ  
մարդերեն չեմ ախորժիր. ամենուն հետ աղեկ  
կը վարդիմ...
- Ամեն առտու դուրս կելլա՞ք, հարցուց  
բժիշկն՝ խոսքին ձեր փոխելու ստիպվելով:
- Հոս գալես ի վեր յերկու առտու դուրս  
չկրցի յելնել:
- Իրա՞վ կըսեք:
- Սուտ խոսելու ի՞նչ պարտք ունիմ:
- Ուրեմն գեղ մ' ալ գրեմ:
- Բժիշկը գեղագիր մ' ալ գրեց և Արիսողոմ  
աղային տվավ:
- Նախ այս դեղը պիտի առնես, ըսավ  
բժիշկն, վորաքնչպի վաղը առտու դուրս յելնես  
և վերջը մյուս ջուրը պիտի խմես:
- Յեթե այս դեղեն խմեմ, վաղը առտու  
անպատճառ դուրս կընա՞մ յելնել:
- Այո՛, անպատճառ:

— Այս ի՞նչ աղվոր դեղ է... հապա թե  
վոր դարձյալ հյուրեր գան և զիս խոսքի բըռ-  
նեն:

— Հյուրերդ ի՞նչ վնաս ունին :

— Ի՞նչպես վնաս չունին. յերկու առառու  
յե, վոր գուրս յելնել կուգեմ և թող չեն տար.  
կուգան, յերկու ժամ գլուխ կը ցավցունեն:  
Բայց վաղը առառու անպատճառ պիտի յելնեմ,  
վասնդի պատկերս քաշել պիտի տամ:

Բժիշկը դարձյալ հարցման ձեր. փոխեց  
հարցնելով.

— Փորդ ի՞նչպես ե:

— Ամենուն փորին պես փոր ե:

— Պի՞նդ ե:

— Ո՞վ պիտե... իրավ վոր որ մը որանց  
հետաքրքրություն ունեցած չեմ հասկնալու  
համար, թե պի՞նդ ե, թե վոչ. ո՞վ պիտի  
նայի անանկ բաներու:

— Արիսողոմ աղա, ամեն որ մեծ գործ  
կընե՞ս, հարցուց վերջապես բժիշկը ճարը  
հատնելով:

— Այո՛, այո՛, ամեն որ մեծ գործ կը  
տեսնեմ:

Ո՞վ մեծագործություն...

Ո՞վ մեծախոսություն...

— Շատ լավ, պատասխանեց բժիշկն, յես  
վաղն առառ նորեն կուգամ ձեզ տեսնելու:

— Կըլլա:

— Մնաք բարով, հոգ մի՛ ընեք, ձեր տկա-  
րությունը քանի մը գեղով կանցնի:

— Շնորհակալ եմ:

Բժիշկն գլխարկն առնելով մէկնելու վրա  
յեր, յերբ Արիսողոմ աղան ըսավ անոր.

— Գրելիքդ չմոռնաս:

Բժիշկը խորհիլ սկսավ, թե ի՞նչ եր գրե-  
մքը, և չուտ մը հիշելով պատասխանեց.

— Այո՛, այո՛, միտքս ե, լրագրի մը  
մեջ պիտի գրեմ ձեր անունը: Մնաք բարով:

— Յերթաք բարով:

Բժիշկը մեկնելուն պես Արիսողոմ աղան  
ըսավ ինքնիրեն.

— Վախցա, վոր բժիշկը կըսե, թե «ոլուն  
հիվանդություն մը չունիս» և շինծու հիվանդ-  
ըլլալս հայտնի կըլլա. բայց պարապ տեղը  
վախցած եմ, վասնդի անիկա վոչ թե միայն  
չհասկցավ հիվանդ ըլլալս, այլ ըսավ նաև,  
թե քանի մը գեղով կանցնի հիվանդությունդ:  
Ե՛ւ, պարոն բժիշկներ, դուք բան մ' ալ չեք  
հասկնար, և մամս իրավունք ուներ բնավ  
բժիշկ չկանչելու: Յես բան մը չունիմ, տեր  
բժիշկ, շարունակեց, անունս լրագրի մեջ գրել  
տալու համար հիվանդ յեղա. . .

Այս վերջին խոստովանությունը քիչ մը  
խենդություն յերկացավ Արիսողոմ աղային,  
վոր խղճմտանքը հանդարտեցնելու համար  
ըսավ ինքնիրեն.

— Լսողն ալ պիտի կարծե, թե հիվանդ

չեմ և շինծու հիվանդ յեղած եմ. քանի մ' որ ի վեր ե, վոր անհանգստություն մ' ունիմ, վոչ կրնամ ուտել և վոչ քնանալ, Հազ մ' ալ ունիմ, վոր դիշերները չը քնացներ զիս:

Ո՞վ փառասիրություն, իրա՞վ ե, վոր դուն յերբեմն խելացիները խենդ և խենդերը խելացի կրնես...

Փ

Արիսողոմ աղան բերանը քիչ մը բան՝ դնելու համար վար իջավ, բայց յերբ տեսավ, վոր քանի մը հոգիներ նոր յեկած եյին զինքը տեսնելու, անոնց ձեռքեն խալսելու համար տունեն դուրս յելավ. յեթե այսպես չըներ և ամեն այցելություններն ընդունելու ըլլար, ժամանակ պիտի չունենար վոչ ուտելու, վոչ քնանալու և վոչ արթննալու:

Արիսողոմ աղան դեռ Պոլիս չեկաւ՝ իմացած եր, թե Բերա դաղղիական ճաշարան մը կար և յերեելի մարդերը հոն կերթային ճաշելու. ուտափ տունեն դուրս յենելուն պես միտքը դրավ հիշյալ ճաշարանն յերթալու:

Հաղիվ թե քանի մի քայլ առավ, հիսուն տարեկան նիհար և պատըստած հագուստներով մեկը դեմն յելավ:

— Կարծէմ Արիսողոմ աղա հրամանքնիւեք:

— Այո՛, յես եմ:

— Քանի մը վայրկյան ձեզի հետ տեսնը վիւ կը փափագեյի:

— Եյ:

— Նոր յեղանակով նոր դասագիրքեր հանած եմ, անոնցմե հարյուրի չափ ձեզի տալ կուզեյի. ներեցե՛ք համարձակությանս, ի՞նչ ընենք, այս համարձակությունը մեզի տվողը ազդն ե, վոր չը քաջալերեր յուր դասատունքն և թող կուտա, վոր անոնք խեղճ վիճակի մեջ ապրին: Ա՛հ, յեթե այսոր դասագրքերը չկարենամ քշել, տպարանապետը բանտը պիտի դնե զիս. դեռ տպագրության և թուղթի ծախքը վճարած չեմ իրեն, և ամեն որ կըսպառնա ինձի:

— Դասագիրքն ի՞նչ պիտի ընեմ յես:

— Չեր բարեկամներուն կուտաք. կաղաչեմ, խնդիրք մի մերժեք. վեցական դահեկանեն վեց հարյուր դահեկան կընե, և այդ գումարն ալ ձեզի համար մեծ բան մը չե:

— Գաղղիական ճաշարանն վո՛ր կողմեն կերթըցվի:

— Ասկից կերթըցվի, սիրով կառաջնորդեմ ձեղի հոն:

— Շնորհակալ կըլլամ:

— Կը քալենք և կը խոսինք: Դասատուներն ազգին ծառայները համարված են և ամենուն յերեսեն ինկած, մինչդեռ անոնք ազգին տերերն են: Ազգ մը անոնցմով առաջ կերթա. բայց ի՞նչ ոգուտ, մեր մեջ քաջալերու-

թյուն չկա: Դասատու մը այսոր դպրոցի մը  
պաշտոնի կը կոչվի և քանի մ' որեն կը ճանբ-  
փի, վասնզի հոգաբարձուներեն մեկուն զետ-  
նեն բարե չե տվեր: Յեթէ քանի մը ամիս պաշ-  
տոն վարե և ամսական ուղե, կը վըսնտվի՝ ամ  
սական ուղած ըլլալուն համար, և միշտ սա  
խոսքերը կը լսե. «Ազգին ստակովը կապրիք,  
ազգին վրա բեռ յեղած եք. դացե՛ք, կորսովե-  
ցե՛ք»: Ա՛հ, Արիսողոմ աղա, չեք գիտեր, թե  
ինչ կը քաշեն Պոլսո դասատուները. խեղճու-  
թյան զենիթը բարձրացած են. չեմ կարծեր  
վոր առոնք իմանալեն յետքը դասադրքերես  
հարյուր որինակ չառնեք:

— Այդ ճաշարանն ասկից շա՞տ հեռու յե:

— Չե՛, մոտեցանք: Միայն գասատունե-  
րը չեն, վոր այս վիճակի մեջ են. խմբագիր-  
ները, հեղինակները, տպարանապետները, գր-  
րավաճառներն, վերջապես անոնք, վոր գիր-  
քով կըբաղին, թշվառությամբ կըբաղին:  
Հառաջադիմությունը կը պոռանք և յետ յետ  
կերթանք, լույս կը պոռանք և դեպի խավար  
կերթանք, աջ կը կոչենք և դեպի ձախ կեր-  
թանք, ապագա կրանք և դեպի անցյալը կը  
վաղենք: Վո՛հ, մեծ մեծ խոսքեր, իսկ մեծ  
զո՞րծ..

Վո՛հ, մեծագործություն ..

Վո՛հ, մեծախոսություն...

— Կերակուրներն ի՞նչպես են այն ճաշա-  
րանին:

— Աղեկ են: Հարյուր դասագիրք տունը  
դրկե՞մ, թե...

— Պատասխանը քանի մ'որեն կուտամ...

Յերկու բանակիցներն խոսելով հասան  
ճաշարանին առջե:

— Հրամմեցե՛ք, մտե՛ք, Արիսողոմ աղա:

Արիսողոմ աղա կը մտնե ճաշարան և չորս  
կողմը հայելիներն ուրիշ բան չտեսնելով՝

— Սխալ յեկանք, կըսե, հոս հայելի կը  
ծախեն:

— Չե՛, չե՛:

Յերկու բարեկամներն կը նստին սեղանի  
մ'առջե:

Մանչուկը կը բերե կերակուրներու ցու-  
ցակը:

Արիսողոմ աղա թուղթը կառնե, վրան  
կը նայի, կը դարձունե, յետեկի կողմն ալ կը  
նայի և սեղանին վրա կը գնե:

— Ի՞նչ պիտի ուտեք կը հարցունե դասա-  
տուն:

— Միսով կերակուր կուտեմ յես:

Դասատուն մանջուկը կը կանչե և կերա-  
կուր կապսպրե թե՛ Արիսողոմ աղային հա-  
մար և թե՛ իրեն համար:

— Ահա այսպես, Արիսողոմ աղա, դասա-  
տուներուն այս վիճակը լսելով չե՞ս ցավիր:

— Զցավիլն ալ իսո՞սք ե:

— Կը վայլե՞ ազգի մը այսպես մուրաց-  
կանի պես ապրեցնել յուր վարժապետները:

— Ջը վայլեր։  
— Յեթե կուզեք, զիրքերս այս գիշեր տունը ձգեմ։  
— Հիմակու հիմա թող մնա, ուրիշ որ մը կը խոսինք ասոր վրա։

Մանչուկը կերակուրները կը բերե։ Արիսողոմ աղան յերեսը խաչակնքելով՝ յերկու պատառ կընե և կը կլե իրեն բերված խորոված միօր։ յետքը բարեկամին դառնալով կըսե։

— Կտոր մը միսով մա՞րդ կը կշտանա. զրուցե՛ս սա անպիտանին, վոր քիչ շատկել բերե։

Մանչուկ կը կանչվի, և բիլավ կապսպըր-վի։

Այս միջոցին միջահասակ և գիրուկլ յերիտասարդ մը կը մտնե ճաշարան՝ ի ձեռին ունենալով ծրար մը և ուղղակի Արիսողոմ աղային առջե կուգա։

— Կարծեմ, կըսե, Արիսողոմ աղան տեսնելու պատիվը կը վայելեմ։

Արիսողոմ աղա բան մը չհամենալով նոր յեկողին յերեսը կը նայի անբարբառ։ Քովի բարեկամն ալ ձայն չհաներ։

— Կարծեմ, կը կընե, այն մեծ մարդուն սուջե դժոնվելու բարեբախտությունն ունիմ, վոր մայրաքաղաքս յեկած և մեկենաս անվելու համար։

Արիսողոմ աղան, վոր այս ձեերուն տեղ-

յակ չեր, գդալը կառնե և կսկսի ուտել բիլավըն, զոր նոր բերած եր մանչուկը։ Սեղանակիցն ալ նոր գրագետի մը գալն իր գործույն արգելք համարելով՝ չուղեր անոր պատասխանել։

— Կարծեմ, կ'երեքկնե, այդ ազնիվ անձին քովը գտնվելու բախտը կը վայելեմ, վորուն անունը քանի մը որ առաջ լրագրի մը մեջ կարդացի։

Արիսողոմ աղան, վոր բիլավով կղբաղեր, գարձյալ պատասխան չտար, և նոր յեկողը կոտիպի պարզել յուր խոսքն ըսելով։

— Արիսողոմ աղան հրամանքնիդ եք կարծեմ։

— Այո՛, յես եմ։

Նոր յեկողն աթոռ մը կառնե և կը նստի։

Մանչուկը կուգա հարցնելու վերջեն յեկողին, թե ի՞նչ կուգե ուտել։

— Յեղի մեջ հավկիթ, կը պատասխանե՝ ձեռքի ծրարը քովի աթոռին վրա դնելով։

Արիսողոմ աղան բիլավն ալ կը հատցունե և կառկարայի ձուկ կապսպըր։

— Ե՛հ, Արիսողոմ աղա, կըսե նորեկը, մեծ պատիվ, մեծ բախտ կը համարիմ ինձի ձեղի պես բարեսիրտ անձի մը սեղանակից գտնըվիլս։ Մառաղ՝ աղդային գրագետներուն ամենեն յետինն եմ, գրեթե քիչ մ'ալ բանաստեղծ եմ. քանի մը վողբերգություն գրած

եմ և կուզեմ, վոր անոնց յուրաքանչյուրեն  
քսանական որինակ ձեզի նվեր ընեմ...

— Ո՞ոո, Արիսողոմ աղա, կըսե յերբորդ  
մը խնդում յերեսով Արիսողմ աղային մո-  
տենալով, բարի յեկած եք:

— Բարի տեսանք:

— Յես ազգային փաստաբաններեն եմ և  
ձեր գալն լսելով վութացի իմ խոնարհ հար-  
պանքներս ձեզի մատուցանել և միանգամայն  
Հայտնել, թե ձեր դատերն ինձի հանձնեք:

— Յես դատ չունիմ:

— Յեթե դատ չունիք, ինչո՞ւ ուրեմն յե-  
լաք հոս:

— Ուրիշ գործի մը համար:

— Անկարելի յե, վոր ձեզի պես մարդ մը  
դատ չունենա. վոչ միայն անկարելի յե, այլ  
անպատվություն ալ ե. ձեզի պես մեկը հար-  
յուրներով դատեր ունենալու յե, և ձեր Հոռ-  
չիլ քանի մը փաստաբաններ ապրելու յեն: Յե-  
թե դուք դատ չունենաք, անդին աղքա՞տը  
ոլիտի ունենա:

— Մեկու մը հետ դատ չունիմ:

— Զարմանալի բան. մեկու մը դեմ դատ  
րանալու ալ միտք չունի՞ք:

— Բնա՛վ, դատ բանալու համար անպատ-  
ճառ՞ու պատճառ մը ունենալու յե. մեկու մը դեմ  
դատ կը բանաք, կը լմննա կերթա:

— Ե, ի՞նչ կը շահիմ:

— Դուն չես շահիր, բայց փաստաբանդ

կը շահի. քեզի համար աղոթք կընէ: Մւծ  
մարդեքն հիմա այնպես կընեն. փաստաբան-  
ներն ապրեցնելու համար՝ իրենց դեմն յելող-  
ներուն դեմ պատվո դատ կը բանան:

— Յես անանկ խայտառակություններ չեմ  
սիրեր:

— Յես կատակ ըրի, Արիսողոմ աղա.  
բայց կատակը մեկդի դնենք և լրջորեն խո-  
սինք, ըսավ փաստաբանը ծանր կերպարանք  
մ'առնելով. լսեցի, վոր շոգենավուն մեջ մե-  
կու մը հետ քիչ մը առեր, տվեր եք, և այն  
մեկը ձեր պատվույն դեմ ծանր խոսքեր ը-  
րեր ե:

— Ամենեին:

— Թե դուք ալ անոր քանի մը խոսք ըրեր  
եք...

— Բնավի:

— Թե վերջը ծեծկը ու քիչ յելեր եք...

— Անանկ բան մը բնավ յեղած չե:

— Թե դուք անոր գլխուն զարկեր եք...

— Սուտ ե:

— Թե անիկա ալ ձեզի ապտակ մը տվեր  
ե...

— Բոլորովին սուտ:

— Թե յերբորդ մը մեջ մանր ե...

— Յերկրորդ չկա, վոր յերբորդ ըլլա:

— Թե քու թերեղ քաշեր ե...

— Սիսալ:

— Թե անոր ալ ձեռքը բոներ ե...

— Սուտ:  
 — Թե ասանկով զձեղ բաժներ ե...  
 — Բնավ տեղ չկա:  
 — Թե դուք այս բաժանումեն գոհ չըլլա-  
 լով՝ դատ բանալ ուզեր եք:  
 — Վորչա՞փ սուտ:  
 — Թե վարպետ փաստաբան մը փնտռեր  
 եք...  
 — Ամենն ալ սուտ:  
 — Թե զիս կանչել տալ ուզեր եք...  
 — Ամենեին:  
 — Վորպեսզի ձեր դատը պաշտպանեմ. և  
 յես ալ ասոր համար յեկա:  
 — Ատանկ բան մը չկա:

Այս խոսակցության միջոցին յերկու յե-  
 րեք հոգի ևս կուգան՝ ամենն ալ Արիսողոմ  
 աղային կամ գիրք նվիրելու կամ լրագրի մը  
 բաժանորդ գրելու դիտավորությամբ, և ամե-  
 նը պատվական ճաշ մ'ալ կընեն իրենց առա-  
 ջարկությունները ներկայացնելով:

Արիսողոմ աղան հաշմար ասեծք կարդա-  
 րով ճաշարանն յեկած ըլլալուն վրա՝ մանչուկը  
 կը կանչե և հաշիվը կուզե:

Մանչուկն անմիջապես կը բերե հաշիվն,  
 որու գումարն եր քառասուն ֆրանք, զոր տաճ  
 երեն դրամի կը թարգմանեն և կըսեն Արի-  
 սողոմ աղային— հարյուր յոթանասուն և վեց  
 դահեկան:

— Հարյուր յոթանասուն և վեց դահե-  
 կան... յես այնչափ բան չկերա:

— Այո՛, դուք չկերաք, բայց ձեզի յեկող  
 հյուրերն ալ կերան, ըսավ փաստաբանն, վո-  
 րու կը վերաբերվեր այս դատին պաշտպա-  
 նությունը:

— Իրավ վոր մեծ պղտիկություն յեղավ,  
 վոր Արիսողոմ աղան վճարե մեր ճաշը, ըսավ  
 մին:

— Այո՛, յես շատ ամոթով մնացի, մեր  
 պարտականությունն եր անոր կերակուր հը-  
 րամցնելն, կըկնեց յերկրորդ մը:

— Ներեցեք մեր անքաղաքավարությանն,  
 ըսավ չորրորդ մը, ուրիշ անգամ մենք ձեզի  
 կը հրավիրենք ճաշի:

Արիսողոմ աղան առանց պատամխանելու՝  
 ստակները համրեց և ճաշարանեն դուրս նե-  
 տեց ինքը ինքը՝ վորոշելով, վոր մեյ մ'ալ  
 ճաշարան չմտնե:

## Փ

Հետեւինք ուրեմն Արիսողոմ աղային, վոր-  
 մե վայրկյան մը չբաժնվեցանք մինչե հոս  
 և բաժնվելիք ալ չունինք մինչև պատմու-  
 թյանս վախճանը: Ազնիվ ընթերցողն մինչե  
 հոս տեսնելով գրեթե միորինակ տեսարան-  
 ներ, վորք բնավ հարաբերություն չունին ի-  
 րարու հետ, քանի մը անգամ մտքեն անցուց  
 անշուշտ, թե ինչո՞ւ միայն Արիսողոմ աղա-

յին ոճիքը բռներ կերթանք և մյուս անձերն,  
անգամ մը ներկայացնելեն յետքը, բռլորվին  
կը մոռնանք։ Այս պակասությունը, յեթե  
յերբեք պակասություն է, մեր վրա գրելու չե,  
այլ նյութին բնությանը։ Ամեն նյութ բնու-  
թյուն մ'ունի։ Նյութ կա, վորուն բնությունն  
է լալ, նյութ կա, վորուն բնությունն է խըն-  
դալ, նյութ կա, վորուն բնությունն է համո-  
զել, նյութ կա, վորուն բնությունն է հուզել,  
դարձյալ նյութ կա, վորուն բնությունն է ար-  
ձակ, ինչպես նաև կա, վորուն բնությունն է  
վուանավոր, վերջապես նյութ կա, վորուն բը  
նությունն է կրկնություն... յուրաքանչյուր  
նյութ իրեն հատուկ ընդհանուր բնութենեն զատ  
ունի նաև մասնավոր բնություններ։ Յեվ վորով  
հետև մենք հոս ճարտասանության դաս տալու  
պաշտոն չունինք, համառոտիվ մէր միտքը բա-  
յառարենք և անցնինք։ Մոլյերի Միզանք-բոքն<sup>1)</sup>)

<sup>1)</sup> Մոլյեր գրական-թատրոնական կեղծանունն է  
Փան-Բատիստ Պոկենի (1621 (կամ 1622)–1673), վոր  
հոչակավոր ֆրանսական դրամատուրգ-կատակերգու-  
յեր և դ'րասան։ Իր ժամանակի ամենից առաջազեմ  
մարդկանցից մէկը լինելով՝ Մոլյերը բազմաթիվ կա-  
տակերգությունների մեջ խարազանում եր արիստոկ-  
րատիալի և հոգևորականո թիան բարքերը («Ժաման,  
«Դոն-Շուան», «Միզանտրոպ», «Տարտյուֆ» և այլն)։  
Մեծ ազդեցություն ե ունեցել համաշխարհային կոմե-  
դիալի զարգացման վրա։ Նրա պիեսներից մի քանիսը  
թարգմանված են հայերեն։

ալ կատակերգություն ե, լե ֆաշեյնի<sup>1)</sup> ալ, բայց  
ասոնց յուրաքանչյուրն իրարմէ այնքան տար-  
բեր մասնավոր բնություններ ունին, վոր  
Մոլյեր չեր կարող լե ֆաշեոյի տեսարաննե-  
րով Միզանք-բոք մը շինել, վոչ ալ Միզանք-  
բոքի տեսարաններով լե ֆաշեոն գբուլ։ Կար-  
ծեմ կրկնություն ե ըսել, թե յես ալ ուրիշ  
վեպերու տեսարաններով չեյի կարող գբել  
Մեծապատիվ մուրացկաններս, վորոնց  
բնությունն է աներեւություն ըլլալ Արբառողոմ  
աղային անգամ մը ներկայանալին յետքը։ Կը  
խոստովանիմ, վոր յեթե սույն նյութը Ովքա-  
տիոս<sup>2)</sup> առներ, յերգիծանք մը կը շիներ, և

<sup>1)</sup> Լե ֆաշեո («Անտանելիները») և Միզաներով  
(«Մարդատյացը») ֆրանսական հոչակավոր զրամա-  
տուրգ Մոլյերի յերկու կատակերգության վերնագրերն  
են։ Առաջին գրվածքը թեթև կատակերգության բա-  
լետ է, վորի մեջ հեղինակը կարեւոր տեղ է հատկաց-  
րել պարիս։ յերգին ու յերաժշտությունը, մասմաք գըր-  
ված է կուղովիկոս ԽV-ի պատվերով, զրական խոշոր  
արժեք չի ներկայացնում։ Իսկ յերկրորդը Մոլյերի  
հանձարի լավագույն գործերից մեկն է, այն միայն  
կատակերգություններից, վորոնց մեջ ավելի զրամա-  
տիկմն ե ուժեղ, քան թե զավեշտը։ «Միզանտրոպը»  
լուրջ քննադատությունն է տալիս ԽVII դարի ֆրան-  
սական արիստոկրատիալի։

Պարոնյանն ուղում է ասել, վոր բովանդակու-  
թյամբ և վորոշվում ձեզ, և ալդ յերկու զրվածքի տար-  
բեր բովանդակությունների համեմատ՝ պետք է տար-  
բեր ձեւ ունենան նրանք։

<sup>2)</sup> Ովքատիոս—Հորացիոս (65 թ.—8 թ. Ք. ա.)

յեթե Մոլցեր ձեռք անցուներ, կատակերգություն մը կը հորիներ. բայց մենք, վոր ապրելու պետք ունինք, ստիպված ենք ժամանակին հարմարիլ, շատ անդամ բանթալոնեն բաճ կոն և յերգիծանքեն վեպ շինելով։ Այս համառոտ բացարութենեն յետքը դառնանք Արեսողոմ աղային։

Արիսողոմ աղան, ինչպես կը հիշե ընթերցողն, տուն դարձափ՝ շարունակելով յուր բարկությունն զոր զգացած եր ճաշարանի մեջ ունեցած ինքնահրավեր սեղանակիցներուն վրա։ Տուն դառնալուն պես իմաց արվեցավ, վոր քանի չափ նամակներ զրկված ելին իրեն։ Վեր յելավ, նամակները մեկիկ մեկիկ բացավ, կարդաց, պատռեց և գետինը նետեց։ Սենյակին մեջ քանի մը անդամ դառնալեն յետքը հանկարծ կանգ առավ և պոռաց։

— Ասոնք զիս քթես բոնելով կողոպտե՞լ կուզեն։ Սա քաղաքը գալես ի վեր վայրկյան մը ինք իր գլխուս չմնացի. հազիվ մեկը կերթա, մյուսը կուզա, ստակ կուզե. յես աս տեղ ամենուն ստա՞կ տալու համար յեկա։ Ի՞նչ աներես մարդեր են... այսչափ աներեսություն վոչ լսված բան ե, վոչ ալ տեսնըված։ Յեթե վորոնտեմ ըսես, վո՞ր մեկը վոնտելու յե, վո՞ր

համաշխարհային հոչակ վայելող հոռոնեական բանասեղծ, գրել ե ներբողներ, նամակներ, յերգիծական բանասատեղծություններ, վորոնց մեջ վարպետությունը հասցըրել ե բարձր կատարելության։

մեկուն հասնելու յե. որականով չորս հինգ հոգի վարձելու յե, վոր ուրիշ գործ չունենան, միայն յեկողները վոնտեն. Յեթե վոնտելու յելնես, այն ատեն ալ բոլոր քաղաքին մեջ պիտի բամբասեն զիս՝ ըսելով, թե անքաղաքավար մարդ ե, թե ստակ չունի։ Չեմ ալ ուզեր, վոր վրաս գեշ խոսվի. Աս ի՞նչ փորձանք յեկավ գլխուս, տեր աստված. . . Բարով խերով վոտք չկոխելի սա քաղաքը։ Գլուխ յելնելու բան չե, շուտով աղջիկ մը գտնելու յե, շողենավ մտնելու և փախչելու յե. ասոնք պիտի սընանկացնեն մարդը. . . Քաշվելու բան չե աս. . . ճաթելու բան ե։ Աշխատե, արյուն քրտինք թափե, քիչ մը ստակ վաստակե՛ և հոս յեկուը վարժապետներուն բաներուն ցրվե. ո՞ւր լըսված բան ե աս. . .

— Կարծեմ այս իրիկուն բարկացած եք, ըստակ Մանուկ աղան սենյակին դուռն կամացուկ մը բանալով և ներս մտնելով։

— Բարկությունն ալ խո՞սք ե. իմ տեղս յեթե ուրիշ մը ըլլար, մինչեւ հիմա բարկութենե ճաթած եր։

— Ի՞նչ յեղավ, հոգի՞ս։

— Ի՞նչ կուզես, վոր ըլլա. վայրկյան մը հանգիստ չեն թողուր. տուն կը նստիմ, վրաս կը թափվին, ստակ կուզեն. փողոց կելնեմ, կը կողմս կը պաշարեն, ստակ կուզեն. ճաչորս կողմս կը պաշարեն, ստակ կուզեն. ճաշրան կերթամ, բոլորտիքս կը շարպին, ստակ կուզեն, և յես ասոնց ձեռքեն խալսելու

Համար տունեն փողոց, փողոցէն տուն կը վագեմ: Կաղաչեմ, ասոնց ձեռքէն խալսելու համար վո՞ր ծակը մտնեմ, բայ' ինձի:

— Իրավունք ունիս. յես չե՞մ հասկնար. ինձի ալ թող տվի՞ն, վոր սա թաղականին դործը պատմեմ:

— Քսան նամակ գեռ հիմա պատեցի: — Ի՞նչ ըսած եյին այդ նամակներուն մեջ: — Բած եյին, թե հետո դալ կուզեյին տանս մեջ վարժապետություն ընելու համար, թե գիրք մը ինձի պիտի նվիրեն յեղեր, և ասոր համար քան վոսկի տալու յեմ յեղեր, թե լրագրի յերկու բաժանորդ գրվելու յեմ յեղեր, թե... ի՞նչ գիտնամ, վո՞ր մեկը համրեմ, վոր մեկն ըսեմ, դիմանալու բան չե: — Անոնք ալ աղքատ են խեղճերն, ի՞նչ ընեն:

— Ապրելու համար թող ուրիշ դործ մը փնտռեն, արհեստ մը սորվին, վերջապես ընեն, ինչ վոր կուզեն. յես ի՞նչ հանցանք ունիմ, վոր կուզան դլուխս կը թափվին, յեղբա՛յր ունեցածս չունեցածս հանեմ, անո՞նց տամ:

— Ինչո՞ւ անոնց տաս:

— Մարդս քիչ մ' ալ ամչնալու յե... չճանչած մարդուս յերթամ և բարե, աստծու բարին, ինձի ստակ տուր, ըսեմ... դուն կը նա՞ս ըտել:

— Աստված ան որը չը ցցունե,

Սենյակին դուռը նորեն բացվեցավ, և քը-

սանըհինդ տարեկանի մոտ միջահասակ պատանի մը դողդոջուն քայլերով ներս մտավ և նամակ մը հանձնեց Արիսողոմ աղային, վո՞ր նամակը չբանալով հարցուց բարկությամբ.

— Ի՞նչ կուզես, մա՛րդ:

— Մեջը գրված ե, պատասխանեց պատանին թոթովելով:

— Դուրս մեջը քեզի ըլլա, ի՞նչ կուզես, բայ' :

— Վաղը իրիկուն ներկայացում մը պիտի տամ իմ հաշվույս համար, և ձեր ազնիության ոթյակի մը տոմսակ բերի:

— Յես չեմ ուզնիր, պատասխանեց Արիսողոմ աղան՝ նամակն պատանվույն յերեսը նետելով:

— Բոնությամբ դործ ալ չըլլար, ըսավ Մանուկ աղան:

— Տաօը տարիե ի վեր, ըսավ պատանին, թատերական բեմին վրա կը քալեմ...

— Թո՞ղ նստեյիր, պոռաց Արիսողոմ աղան:

— Յեվ ազգին ծառայություն կընեմ:

— Աղայություն ընեյիր թո՞ղ, ինչո՞ւս պետք իմին, ատոնք պարապ խոսքեր են:

— Իրավունք ունի, ատոնք պարապ խոսքեր են, կընեց Մանուկ աղան:

— Տաօը տարիե ի վեր ե, վոր բարոյական դպրոցի մը մեջ ազգին վարժապետություն կընեմ:

— Ի՞նչ փույթ ինձի:  
— Ի՞նչ փույթ անոր, արձագանդ տվալ ։  
Մանուկ աղան:

— Յեվ իրավունք ունիմ, կարծեմ, ինձի  
համար տրվելիք ներկայացման ձեզի պես աղ-  
նիլ մեկն ալ հրավիրել:

— Յես պետք չունիմ:

— Ան պետք չունի, կրկնեց Մանուկ ա-  
ղան:

— Յեթե դուք ոթյակ մը չեք ընդունիր,  
վորո՞ւ ուրեմն տամ ոթյակի տոմսակներն:

— Ուր ուղես, հոն տար. առ իմ խառնվե-  
լու բանս չե:

— Առ իր խառնվելու բանը չե՛, տղա՛ս,  
ըստ Մանուկ աղան:

— Կաղաչեմ, մի՛ մերժեք այս տոմսակն.  
յեթե մերժելու ըլլաք, զիս փողոցներու մեջ  
խայտառակ ընելու պատճառ պիտի տաք:

— Գնա՛ բանըդ, յես ձանձրացա այդ տե-  
սակ խոսքեր մտիկ ընելե:

— Ան ձանձրացավ այդ տեսակ խոսքեր  
մտիկ ընելե, հարեց Մանուկ աղան:

— Ա՛ս, յեթե ասկից ձեռնունայն յետ  
դառնամ, իմ մահս պիտի տեսնեմ:

— Քեզ մտիկ ընելու ժամանակ չունիմ:  
— Քեզ մտիկ ընելու ժամանակ չունի

ըստ Մանուկ աղան:

— Մեկ վոսկիի բան ե, ընդունեցե՛ք

զայն, կաղաչեմ, մեծ հուսով յեկած եմ հոս,  
պարապ յետ մի դարձունեք զիս:

— Դուրս յե՛լ, գնա՛, ասովածդդ սիրես,  
քե՞զ մտիկ պիտի ընենք հոս:

Սենյակին դուռը նորեն բացվեցավ, և մա-  
զերու մեջ ճերմակ ինկած՝ հիսունը անցած  
մարդ մը ներս մտավ հանկարծ և յուր խոսքերն  
Արխողոմ աղային ուղղելով՝

— Զ՞ես խպնիր դուն, հարցուց:

— Ինչո՞ւ պիտի խպնիմ, պատասխանեց  
Արխողոմ աղան շվարելով:

— Ի՞նչու խեղճ տղան յերկու ժամե ի վեր  
հոս կսպասցունես:

— Ո՞վ կսպասցունե, ո՞վ կուզե, վոր  
սպասե, կը վոնտեմ, չերթար:

— Կը վոնտես, բայց առանց մի վոսկի  
պարտքդ տալու:

— Ո՞վ պարտք ունի անոր:

— Դուն ունիս. և յեթե ան չըսեր ինձի, թէ  
քեզմե առնելիքն այս իրիկուն պիտի առներ և  
ինձի պիտի տար. յես չեյի տաքիր այդ տոմսակ-  
ներն և ներկայացման աղդերը: Յերկու ժամ  
ե, վոր վարը դռան առջե կսպասեմ, վոր իջնա  
և պարտքը տա, և դռն հոս կը խաղցունես  
խեղճը:

— Աս ի՞նչ ե, յես անոր պարտք ունե-  
նա՞մ... ամենեին...

— Ամենին, ըստ Մանուկ աղան:

— Յես անպատճառ առնելիք ունիմ չըսկի

քեզի, պարոն տպարանապետ, ըսավ դերասանը, այլ ըսի, թե ոթյակի տոմսակ մը պիտի տամ, վոսկի մը պիտի առնեմ:

— Ինչո՞ւ ուրեմն խաբեցիր զիս, ստախո՛ս:

— Վորպեսզի ծանուցումները յետ չմնան:

— Յես քու խաղալի՞կդ եմ:

— Ան քու խաղալի՞կդ է, ըսավ Մանուկ տղան:

— Ինչո՞ւ խաղալիկս ըլլաս:

— Թշվառակա՞ն, խայտառա՞կ, անամոթ, աներե՞ս...

— Ատոնց ամենն ալ դու յես:

— Դո՛ւ յես:

— Յես չեմ, դու յես:

Յես չեմ, դու յեսի վրա ծեծկվուք մը կը ծագի դերասանին և տպարանապետին մեջաւել, Արիսողոմ ու Մանուկ աղաները մեծ դըժ վարությամբ կը հաջողին զանոնք իրարմերաժնել:

— Վա՛ր իջեք, պոռաց Արիսողոմ աղան զանոնք զատելեն յետքը, վար իջեք և հոն կովեցե՞ք:

— Դուն մեր կովույն խառնըվելու ի՞նչ իրավունք ունիս. դուն զիս չես կրնար վոնտել. յես առնելիքս կուզեմ և ինձի պարտական յեղողն ուր վոր գտնեմ, հոն կրնամ մտնել:

— Դուն վար իջի՛ր, ըսավ դերասանին Արիսողոմ աղան:

— Ի՞նչպես իջնամ, տեսար, վոր աչքիդ առջեւ ինչեր ըրավի:

— Մինչև վոր ան չիջնա, յես քայլ մը չեմ առներ, կրկնեց տպարանապետը:

— Մինչև վոր ան չհեռանա, յես չեմ կըբնար փողոց յելնել, ըսավ դերասանը:

— Մենք իջնանք ուրեմն, Մանուկ աղա, ըսավ Արիսողոմ աղան:

Դերասանը Արիսողոմ աղային ծունկերուն փաթթըվելով աղաչեց, վոր վոսկի մը փոխաց գոնե: Արիսողոմ աղան շատ ընդդիմացավ, ուրաց հետո տեսնելով, վոր անոնց ձեռքեն ուրիշ կերպով փրկվելու ճար չկա, ակուայները դիմումով հանեց բարկությամբ, փոսկի մը կըճամնելով հանեց բարկությամբ, փոսկի մը կըավագ տպարանապետին, վոր ընորհակարություն հայտնելով դուրս յելավ: Դերասանն ալ ներումն ինդրելով վար իջավ և գնաց:

— Ասոր ի՞նչ կըսես, Մանուկ աղա:

— Հսելիք չմնաց, Արիսողոմ աղա:

— Հրամանքդ վար իջիր, դուռն դոցե և ապսալրե, վոր չբանան դուռն:

— Շատ լավ:

— Վորպեսզի այս գիշերը դոնե հանգիստ անցունենք և մեր ի՞նչ ընելիքին վրա խորհինք:

— Իրավունք ունիս:

— Շուտ ըրեք, վասնզի հիմա մեկիկմեկի կուղան:

— Հիմա կերթամ:

— Մանուկ աղան վար գնաց իրեն տրված

Հրամանները կատարելու, և Արիսողոմ աղանդուին բարձի մը վրա դրավ քիչ մը հանդստանալու համար:

ԺԱ.

Արիսողոմ աղան քանի մը ժամ քնացավ բազմոցի վրա: Սակայն դատելով այն ձայներեն զորս կը բառնար քունին մեջ՝ կը հասկցվեր, թե խմբագիրներն, բանաստեղծներն և դասառուներն քունի մեջ ալ հանդիստ չեյին թողուր զինքն, վոր կը պոռար մերթ ընդ մերթ. «գացե՛ք, կորսրվեցե՛ք, ստակ չունիմ ա՛լ տալու»: Յերեք ժամու չափ այսպես հուզված մրափելեն յետքը մեկեն ի մեկ աչերը բացավ ահ գոչելով: Կարծես խմբագիր մը անոր կոկորդեն սիմելով խղղել կսպառնար զինքն, յեթե չբարեհաճեր յուր թերթին բաժանորդ դրվելու: «Տեր վողոր մյա, տեր վողորմյա», պոռաց աչերը շփելով, հանդիստ քուն մ' ալ չունինք»:

Հետո վոտք յելնելով կազը վառեց և կանչեց Մանուկ աղան, վորուն քիչ մը կերակուր տպսպրեց: Քառորդե մը բերվեցավ կերակուրն, վորուն հաջորդեց խահվեն, վորուն յետմեն յեկավ քունը: Հանվեցավ Արիսողոմ աղան և անկողինը մտավ քնանալու համար: Հարկ չեկրկնել, թե նույն գիշերն հանդարտ քուն մը չունեցավ: Առավոտուն կանուխ յելավ և շիտակ պ. Դերենիկին դործատունը գնաց լուսա-

նկար պատկերը քաշել տալու համար: Գործատունը դեռ բացված չեր, և Արիսողոմ աղան Բերայի փողոցներուն մեջ կը շրջեր, վորպեսզի ժամանակ անցնի, և գործատունը բացվի: Ժամը չորսին (ըստ տաճկաց) բացվեցավ գործատունը, և Արիսողոմ աղան սանդուկին մը վեր յելնելով մտավ սենյակը մը, վոր լուսանկար պատկերներով զարդարված եր և ուր պ. Դերենիկ նստած կը կարդար:

— Բարի յեկաք, Արիսողոմ աղա, սանիկ հրամմեցեք, լսավ պ. Դերենիկ, սեղանի վրա դնելով լրագիրն:

Յեվ հետո գրագրին դառնալով նշանացի Հրամայեց անոր, վոր խահվե բերեն:

— Ժամ առաջ քաշենք սա պատկերս, վորովհետեւ ստիպողական դործէր ունիմ, քանի մը մեծ մարդոց այցելություն պիտի ընեմ:

— Շատ լավ:

— Կուզեմ, վոր պատկերս փառավոր կերպով քաշվի: Կուզեմ թիկնաթոռի մ' վրա նստիլ, առջես ունենալ յերկու սպասավոր, մեկ աղախին. այնպես ըրեք, վորպես թե ագարակի մը մեջ ըլլամ, ասդին վարուցան, անդին կովերեն կաթ կթեն, ասդին վոչխարներն արածեն, ասդին ցանեն, անդին քաղեն, ասդին հերկեն, անդին մածուն շինեն, ասդին ձմերուկ փրցունեն, անդին կարագ շինեն, ասդին սագերը ծովու մեջ լողան, անդին անտառին մեջ պայտ կտրեն, ասդին սայլերով ցորյան փոխա-

դրեն, անդին վերջապես ինչ վոր կըլլա ա-  
գարակի մը մեջ, տեսնվի պատկերիս մեջ:  
— Այդ ամենը կարելի չե կատարել.  
միայն թե քանի մը սպասալորներ կրնամ  
կայնեցնել քովդ:  
— Ինչու ըլլար:  
— Վորովհետեւ անկարելի յե:  
— Մեծ մարդոց համար ինչպե՞ս կընեք:  
— Անոնք աթոռի վրա նստած կամ վուաքէ  
վրա քաշել կուտան իրենց կենդանագիրը:  
— Ի՞նչպես ուրեմն կը հասկցվի անոնց մեծ  
մարդ ըլլալը:  
— Պատկերը մեծկակ ու փայլուն կըլլա:  
— Իմի՞նս ալ անանկ պիտի ըլլա ուրեմն:  
— Այո՛:  
— Վոտքի՞ վրա, թե նստած:  
— Ինչպես վոր կուզեք:  
— Դուք ի՞նչպես կուզեք. ի՞նչպես հանեմ  
նե, աղեկ կըլլա:  
— Զեղի համար վոտքի վրա կը վայլե:  
— Շատ աղեկ. սպասալորներն ալ դեմու:  
— Այո՛:  
— Յես զանոնք չախելու պես կըլլամ,  
անոնք ալ առջենին կը նային:  
— Սքանչելի:  
— Ծեծելու պես կըլլամ զանոնք, և վերջը  
բարկությունս իջած կրլլա:  
— Աղեկ խորհած եք:  
— Հադուստներս ի՞նչպես են:

— Բնտիր:  
— Ուրիշ ժամացույց մ' ալ ունիմ, անիկա  
ալ կընա՞նք մեկ կողմերնիս կախել:  
— Մեկ ժամացույցը բավական ե, ավելին  
ավելորդ ե:  
— Այս հագուստներուս համար հիսուն  
վոսկի տված եմ. անոնց խումաշին աղեկ և  
ընտիր ըլլալն ի՞նչպես պիտի հասկցվի պատ-  
կերես:  
— Հոգ մի՛ ըներ, կը հասկցվի:  
— Ընտո՞ր պիտի ցուցնես:  
— Հանդիստ յեղե՞ք:  
— Զկարծվի սակայն, թե յերկու վոսկի-  
նոց հագուստ ե հագածու:  
— Այդ մասին անհոգ յեղե՞ք:  
— Շատ լավ:  
— Յես կերթամ անդիի սենյակն նախնա-  
կան պատրաստություններս ընելու, քանի մը  
վայրկենեն հրամանքնիդ ալ հրամմեցեք:  
— Շատ աղեկ:  
— Յեթէ կուզեք, մինչև վոր անդի  
սրահը մտնեք, սափրիչ մը կանչել տանք, վոր  
դա մազերդ ու պեխերդ սանտրե, շոկե ու շըտ-  
կուտե:  
— Աղեկ:  
Գործատան պաշտոնյաներեն մին վազե-  
լով կերթա սափրիչ մը բերելու:  
Քանի մը վայրկենեն կուզա սափրիչն,  
վոր գլուխին ծռելով և յետ-յետ յերթալով

Հարդանքներ կը մատուցանե Արիսողոմ աղաղին:

— Յեկուր սա մազերս չտկե, նայինք,  
կըսե Արիսողոմ աղան:

— Պարտքերնիս ե, կը պատասխանե սափ-  
րիչը:

— Աղեկ մը չտկե, վորովհետև պատկերս  
հանել պիտի տամ

— Գլխուս վրա: Ա՛ր...

— Յես շատ կարեռություն կուտամ  
դլիուս:

— Ինչու չտաք, վաճառպատիվ տեր...  
Ա՛ր... յեթե դուք չտաք, ո՞վ տա: Ա՛ր...  
յերանի թե յես ալ ուրիշ մտմտուք չունե-  
նայի և...

— Ծտկուտէ նայինք:

— Դիտեմ, վոր յես հանցավոր եմ ձեզի  
բարի յեկաֆի չգալուս համար, բայց ի՞նչ  
ընեմ... պարագայները թող չտվին, վոր  
կարենայի կատարել այդ պարտականությունն  
և այսոր յերես ունենայի աղաչելու ձեր վսե-  
մության, վոր...

— Վէրջը կը խոսինք, սա մազերս սանտ-  
րե... մարդը կսպասե ինձի:

— Վնաս չունի, անիկա կսպասե: Աղաչե-  
լու ձեր վսեմության, յեթե կարելի յե, հիսուն  
վաթսուն վոսկի մը... յես ալ ազգային սափ-  
րիչ մ' եմ:

— Ի՞նչ ըսել ե հիսուն վաթսուն վոսկի...

— Կը խնդրեմ, մի բարկանաք, հիսուն  
վաթսուն վոսկի փոխատվություն մ' ընելիք  
ինձ, վորպեսզի այդ գումարն Բարիզ զրկելի  
տղուս, վոր այդ գումարով պարտքերը տար  
ու բժշկության վկայական առներ, գար ու  
քանի մը տարիյեն վաստկեր ու տոկոսովն ձեզի  
հատուցաներ: Բայց ի՞նչ ոգուտ, վոր այսոր  
յերես չունիմ ասանկ առաջարկություն մը ձե-  
զի ընելու, վորովհետև բարի յեկաֆի չեկա-  
ձեզի: Յեթե բարի յեկաֆի յեկած ըլլայի ձե-  
զի, համարձակություն կունենայի ձեզի աղա-  
չելու, վոր սա պղտիկ խնդիրքս կատարելիք,  
բայց քանի վոր բարի յեկաֆի չեկա ձեզի,  
դուք ալ իրավունք ունիք խնդիրքս մերժելու,  
թեև ազգային արհեստավոր մ' ըլլամ:

— Հիմա ատանկ խոսքեր մտիկ ընելու  
ժամանակ չունիմ, ինչ վոր պիտի ընես նե,  
ըրե... Աս ի՞նչ տարորինակ քաղաք ե. բարե,  
աստծու բարին, բարա տուր... Մեկու մը  
բարեվ տալու չե... Տեր վողորմյա... տեր  
աստված, մեղա... Ամեն բան սահման մ' ու-  
նի, եֆենտիմ... Հասկցա... ժամ առաջ փախ-  
չելու յե այս քաղաքեն...

— Կերեկի թե եֆենտին բարկացուցած են,  
ըսակ՝ ներս մտնելով տարիքը հիսունին և  
վաթսունին մեջ կորաված քահանա մը:

— Աս չքաշվիր, տեր հայր:

— Վողջույն, որհնած. թեպետ և . դուք  
պիս չեք ճանչնար, բայց յես ձերին ով ըլլալն

շատ աղեկ գիտեմ... ի՞նչպես ե, պատվական  
քեֆերնիդ աղե՞կ ե:

— Շիտակը՝ աղեկ չե:

— Աստված չընե. աստուծով քիչ ատենեն  
ավելի աղեկ կըլլա: Ձեզի հետ քիչ մը առան-  
ձին մնալ կուզեյի: (Սափրիչին) Քիչ մը դուրս  
կելլա՞ք: Յես քեզի համար ալ կը խոսիմ, ե-  
թենտիեն կը հասկնամ ինդիրքդ և յես ալ կբա-  
րեխոսեմ, վորի նպաստ քեզի բան մ' ընե: Ե-  
ֆենտի, սափրիչնիս ալ, զիտեք ա', աղգա-  
յիններեն ե, անոր ալ յերակներուն մեջ Հայ-  
կա արյունը կ'եռա, անտես ընելու չե զանոնք-  
ալ... (սափրիչը կերթա): Ձեզի հետ մասնա-  
վոր և առանձին տեսակցություն մ' ընել ու-  
զելուս պատճառն սա յե, վոր հրամանքնիդ  
կարգվիլ կուզեք յեղեր... և ինչո՞ւ չկարգ-  
վիք: Իմացա նե, շատ ուրախացա, և ինչո՞ւ  
չուրախանայի: Ձեզիպեսներն կարգվելու յեն,  
վոր աղգերնուս մեջ հարուստ տղայք շատնան:  
Աղվոր աղջիկ կը փնտռեք կոր յեղեր... և ին-  
չո՞ւ չփնտռեք. յես ալ ձեր տեղն ըլլայի նե,  
յես ալ կը փնտռեյի: Ստակ ալ կուզեք կոր  
յեղեր քիչ մը... ինչո՞ւ չուզեք, առանց ստա-  
կի կարգվիլն ալ, շիտակը, աղեկ բան մը չե:  
Արդ յես իմ ձեռքիս տակն ունիմ անանկ աղ-  
ջիկներ, վոր թե աղվոր են և թե հարուստ:

— Շնորհակալ եմ, որ մը կը նայինք,  
աչքե կանցունենք զանոնք: Յեթե կուզեք, քիչ  
մը սպասեցեք, սա պատկերս քաշել տամ ու

յերթանք: Շիտակը խոսելով՝ յես ուրիշ գործ  
չունիմ հոս, աղջիկ փնտռելու յեկած եմ. քա-  
նի մ' որ պիտի մնամ. յեթե կրցի գտնել, կարդ  
վիմ պիտի հետն ու առնեմ, պիտի յերթամ,  
յեթե չգտնեմ, դարձյալ պիտի յերթամ, վո-  
րովհետեւ հոս հանգիստ չեն թողուր զիս վայր-  
կյան մը. ալ ձանձրացա:

— Իրավունք ունիք, ժամանակներն ալ  
գեշ են, եֆենտիս, դրամական տաղնապ, տագ  
նապ դրամական ամենուրեք կը տիրե, ազգին  
աղքատները շատ են: Ինչ վոր ե, կսպասեմ  
ձեզի ու ի միասին կերթանք:

— Սա անպիտանն ալ մազերս շտկելու  
համար յեկավ ու...

Այս միջոցին պ. Դերենիկ ներս կմտնե ու  
Հրամմեցե՞ք, կըսե, սրահը:

— Բայց մազերս...

— Հոդ չե, յես կը սանտրեմ:

— Բայց պեխերս...

— Վնաս չունի յես կը շտկեմ:

Պ. Դերենիկ Աբիսողոմ աղային կառաջ-  
նորդե լուսանկարի սրահը:

Քահանայն առանձին կը մնա և կսկսի մըտ  
քովը հետևյալ խորհրդածություններն ընել:  
Բայց ի՞նչպես կըսանք մտքով յեղած խորհր-  
դածություններն գուշակել. դեմքեն անշուշտ.  
դեմքերը շատ անգամ կը խոսին. ինչպես հա-  
րուստներուն, նույնպես նաև աղքատներուն

բեզուն շատ անգամ անոնց դեմքին վրա յե: Մե կու մը նայելով կրնանք ըսել՝

— Այս մարդն իզմե ստակ ուզելու յեկած է, կամ այս մարդն ինձի ստակ տալու յեկած է: Քահանային դեմքն ալ կըսեր. «Ինչ ճանքա բռնեմ, վոր սա ձմեռվան ածուխիս ու փայտիս ստակն սա մարդեն փրցնեմ»:

Քահանայն այս խորհրդածությանց մեջ եր, յերբ սափրիչն ներս մտավ նորեն ու քահանային ըսավ.

— Տեր հայր, դործս ավրեցիր. յեթե ներս չմտնեյիր, քանի մ' ոսկի պիտի փրցնեյի այս մարդեն. տվող ե՝ կըսեն կոր, տվող. բոլոր խմբագիրներուն և դասատուներուն ստակ տվեր ե:

— Յեղբայր, անոնք չե՞ն մի, վոր պատճառ կըլլան կոր, վոր մեզի պես աղքատները չեն կրնար կոր ստարականներե ստակ փրցնել: Հյուր մը յեկա՞վ մի, բոլոր խմբագիրներն ու դասատուները վրան կը թափին կոր... անիշխալ գարչելիներ... .

— Ի՞նչ պիտի ընենք հիմա:

— Յես քեզի համար կըսրեխոսեմ, դուն ալ ինձի համար միջնորդե, գոնե մեյմեկ կտոր բան փրցնենք սա մարդեն:

— Շատ աղեկ:

— Հիմա հոս պիտի գա, յես անոր ականջըն ի վար կըսեմ, վոր այս սափրիչը դուհ ըրե,

վորովհետեւ շատ հարուստ տուներ կը մտնե, կերնե և կրնա, յեթե ուզե գործդդ ավրել:

— Գործը ի՞նչ ե:

— Հարուստ աղջիկ մը կը փնտռե կոր:

— Աղեկ: Յես ալ կըսեմ, վոր քահանայեն զատ մեկու մը մի՛ վատա՞իր:

— Շատ աղեկ:

— Աս աղեկ ճամբա յե:

— Միամիտին մեկն ե:

— Այո՛, դյուրահավան ե, բայց կողոպտեր են մենք շատ ուշ հասանք:

Աբիսողոմ աղան զվարթ դեմքով կը դառնա սենյակն, ուր քահանայն սափրիչին հետ կիսուել:

— Ներեցե՛ք, Աբիսողոմ աղա, կըսե սափրիչն, ձեզի այդ խնդիրքն ընելուս համար. սակայն յես կարծեցի, թե կրնայի իմ կողմեա յես ալ ծառայություն մ' ընել ձեզ:

— Աբիսողոմ աղա, պետք ե գիտնալ, վոր, կըսե քահանայն, մեր սափրիչ եֆենտին դրեթե մայրաքաղաքիս բոլոր հարուստ տուները կը մտնե, բոլոր աղջիկները կճանչնա:

— Ի՞նչ կըսեք:

— Այո՛, ինքն ալ բարի մարդ մ' ե, կատարեցեք խնդիրքը, մեղք ե:

— Աբժանապատիվ հորեն մի զատվիք, յեթե անանկ միտք մ' ունիք. տեր հոր ձեռամբ կարգված յերիտասարդներն միշտ գոհ մնա-

ցած են: Ուրախ եմ, վոր ձեր գործը տեր հոր  
պես բանիքուն և գործունյա քահանայի մը  
ձեռքն ինկած ե. վստահ յեղեք, վոր յերջանիկ  
ոլիտի ըլլաք ձեր ամուսնության մեջ:

— Բայց դուք ալ պիտի ողնեք ինձի, տեր  
սափրիչ, կը հարե քահանայի:

— Յես ի՞նչ բանի կարող եմ...

— Ձեր աջակցությունն ալ պետք ե...

— Կընեմ, ինչ վոր կարող եմ ընել:

— Շնորհակալ եմ: Արիսողոմ աղան ո-  
տարական չե, ազգային ե, կարգվելու համար  
յեկած ե հոս. մեր պարտքն ե ողնել իրեն:

— Հարկավ: Արիսողոմ աղային հետ  
ատելություն մը չունիմ յես, մանավանդ թե  
ինքը շատ բարի ու առաքինի մարդ մ' ե:

— Յերեսին խոսիլ չըլլա, ընտիր մարդ  
մ' ե:

— Պատվական մարդ ե:

— Վրան նայես նե, կըսես, վոր քիպա-  
րությունը վրայեն կը վազե կոր:

— Ո՞վ կը պիդե հակառակը, յես անոր  
թշնամին չեմ:

— Այսինքն թե վոր քեզի ալ հարցվի նե,  
բարի վկայություն տաս:

— Անչուշտ:

— Արիսողոմ աղան չի մարդ չե, քեզի  
կվարձատրե վերջը:

— Գլխուս վրա, գլխուս վրա: Ա՛խ, տը-  
ղուս վկայականն առնվեր անզամ մը:

— Հինգ որեն յետքը, Արիսողոմ աղա,  
Հինգ որեն յետքը պատրաստ են պատկերներդ,  
ըսալ պ. Դերենիկ ներս մտնելով:

— Շատ աղեկ, պատասխանեց Արիսողոմ  
աղան ու գործատունեն վար իջավ ընկերակ-  
ցությամբ քահանային ու սափրիչին:

## ՓԲ

Տիկին Շուշան, վոր ընթերցողն մոռցած  
չե անշուշտ, Արիսողոմ աղային տունեն տե-  
ղեկացած եր, թե... քահանային Արիսողոմ  
աղային դըտնելու համար պ. Դերենիկի գոր-  
ծատունն զնացած եր: Ուստի վորսն քահանա-  
յին հափշտակել չտալու համար՝ հետավոր կը  
վազեր գեպ ի պ. Դերենիկի գործատունը, ուր  
կը հասներ ճիշտ այն վայրկենին, վորում  
քահանային սափրիչն վարպետությամբ ճան-  
բեկ հետո՝ Արիսողոմ աղային կրարեխոսե  
հետեյալ կերպով. «Ներեցեք, վոր քիչ մ' ու-  
շացա ճշմարտությունն ձեզի հայտնելու սափ-  
րիչի մասին: Այս սափրիչը աներես մարդ մ'  
ե, բոլոր Պոլիս յեկողներուն ոձիքեն կրոնե և  
անոնցմե ստակ կորպելու կաշխատի: Անպիտա-  
նին մեկն ե: Իմ պարտքս ե, վորպես խոստո-  
վանահայր, զգուշացնել զձեզ այս կարգի մար-  
դերեն, վորք միմիայն քանի մը վոսկի հափշ  
տակելու նպատակով կը մոտենան հարուստ-  
ներուն: Վորքա՞ն կատեմ այդ մարդերը»:

— Շնորհակալ եմ ձեր բարեսրտութենեն,  
և մարդասիրութենեն:

— Յերես մի' տաք այդ մարդոց:

— Վո՞չ,

— Տեր պապա, դու ի՞նչ գործ ունիս  
Արիսողոմ աղային հետ, կը հարցնե տիկին  
Շուշանն, վոր, ինչպես ըսինք, հեալով հասած  
եր:

— Պզտիկ գործ մը:

— Վո՞չ, բնալ գործ պիտի չունենաս դուն-  
անոր հետը. դուք ձեր պարտքը կատարեցեք և  
թող տվեք, վոր մենք ալ մերինը կատարենք.  
ալ խպնեցեք քիչ մը: Յերթանք, Արիսողոմ  
աղա:

— Վո՞չ, դուք խպնեցեք քիչ մը, մենք  
Արիսողոմ աղային հետ պզտիկ գործ մ' ու-  
նինք. յերթանք, Արիսողոմ աղա:

Յեկ քահանայն Արիսողոմ աղային ձախ-  
թեն կը քաշե:

— Տեր պապայի մը չվայլեր ըրածդ:

— Լուե՛:

— Զպիտի լուեմ:

— Թող ամե՛ք թեերս:

— Թող չեմ տար, կը պատասխանե տի-  
կին Շուշան, իմ իրավունքս ե:

— Վո՞չ, իմ իրավունքս ե:

— Քանի մը հարյուր զահեկան առնելու  
համար կուզես, վոր խեղճ մարդը թշվառ  
նես. դուն աղջիկ չես ճանչնար:

— Մի՛ պոռար. պիտի թողում, վոր կո-  
ղոպտեք այս ազնիվ մարդն, այնպես չե՞:

— Ինչո՞ւ կոիվ կընեք, ամոթ չե՞... յես  
չեմ ուզեր աղջիկ:

— Զըլլար, կը պատասխանե տիկին Շու-  
շան, մենք քեզի աղջիկ մը պիտի գտնենք.  
բայց թե վոր տեր պապային ձեռքով աղջիկ  
փնտուս, գիտցած յեղիք, վոր պատիվդ մեկ  
սուրկի կըլլա:

— Բնդհակառակին, քահանայի ձեռամբ աղ  
ջիկ փնտուղն ե պատվավորը: Յերթանք, Ա-  
րիսողոմ աղա:

— Թող չեմ տար:

— Յերթանք, Արիսողոմ աղա:

— Թող չեմ տար, վոր յերթա. յես անոր  
աղջիկներ պատրաստած եմ, աղջիկտեսի պի-  
տի յերթանք:

Եյս տեսարան տեղի կունենար պ. Դերե-  
նիկի գործատան առջեւ, և անցնողներեն պըզ-  
տիկ խումբ մը հանդիսականի պաշտոն կը վա-  
րեր անդ, յերբ Մանուկ աղան ստիպված Արիսո-  
ղոմ աղան անպատճառ գտնելու՝ յեկավ հոն, տե-  
սավ Արիսողոմ աղան, վորուն մեկ թեեն քա-  
հանայն և մյուս թեեն տիկին Շուշան կը քա-  
շեր, և մեկդի քաշելով զայն՝ քանի մը ծանր  
չեր, և մեկդի քաշելով զայն՝ քանի մը ծանր  
խոսքեր ուզեց քահանային և տիկին Շուշա-  
նին և հեռացուց գանոնք:

— Ա՞չ, ըսակ Մանուկ աղան Արիսողոմ  
աղայի դառնալով, հանցանքը ձերն ե, ամենուն

յերես կուտաք. ասոնք միմիայն քեզմե ոգտը-  
վելու համար կը մոտենան քովդ:

— Իրա՞վ կըսեք:

— Ինչո՞ւ սուս պիտի զրուցեմ: Կարգվիլ  
կուղես, լավ. յես դանեմ քեզի աղջիկներ,  
ընտրե և ուզածդ առ:

— Աղեկ ըսիր:

— Պատվավոր ընտանիքե աղջիկներ ցուց-  
նել տամ քեզի:

— Ցուցուր:

— Միջնորդով աղջիկ փնտոելու ժամա-  
նակը անցած ե հիմա:

— Այլպե՞ս ե:

— Մինչև անդամ ամոթ ե:

— Ամոթ ե նե, չուզեր:

— Յես քեզի աղջիկ կը հավնեցնեմ:

— Շնորհակալ եմ:

— Տուր ինձի դուն սրկեց հիսուն վոսկի:

— Աս ի՞նչ ըսել ե:

— Տուր դուն ինձի հիսուն վոսկի:

— Ի՞նչու տամ:

— Ալլահ, ալլահ, տուր կըսեմ կոր նե,  
հարկավ բան մը գիտեմ կոր. անք վողորմյա,  
պիտի առնեմ, չպիտի փախչիմ յա' :

— Զպիտի փախչիս, բայց . . .

— Կը վախնա՞ս կոր ինձի հիսուն վոսկի  
տալու, արդեն այնքան գումար մը պահանջող  
եմ յես քեզմե, ձեզի համար այնքան ծախքեր  
ըրած եմ:

— Այնքան ծախքե՛ր . . . ի՞նչ ծախքեր են  
անոնք . . .

— Մեկիկ մէկիկ չպիտի գրենք ա՛, տիկի-  
նը գիտե: Բայց թողունք այդ խնդիրը հիմա:

— Վո՞չ չթողունք այս խնդիրը. հիսուն  
վոսկի . . . քա՞նի որ յեղավ վոր . . .

— Մեկու մը պարտք ունեյի, այսոր յե-  
կավ, նեղը խոթեց զիս, և յեթե այդ գումարը  
չլմարեմ, տունեն պիտի հանեն մեզի: Ասիկա  
ինձի համար ամոթ ե, քեզի համար ալ պատ-  
վարեր բան մը չե: Տուր սա հիսուն վոսկին,  
հաշիվը կը կարգադրենք վերջը:

— Ի՞նչ խայտառակություն ե աս . . .

— Աղջիկ գտնամ նե, միջնորդեք չպիտի  
ուզեմ յես քեզմե. տուր սա հիսուն վոսկին:

— Ինչո՞ւ տամ . . . ի՞նչ ըրի յես քեզի . . .

— Կցավիմ վոր խոսք չեք հասկանար կոր.  
քեզի ինչ կըսեմ կոր նե, ան ըրե. ինչո՞ւ չես  
տար կոր սա հիսուն վոսկին:

— Զեմ տար, տունեդ ալ կելնեմ, կեր-  
թամ:

Յեվ խոսելով դեպ ի տուն կը քալեյին:

— Հիսուն վոսկին ալ մեծ բան մ' ըլլար,  
վոր չեք ուզեր կոր տալ: Իրավ վոր յես ձեզմէ  
չեյի հուսար:

— Չուսացե՞ք:

— Զեր քիպարությանը չեյի ձգեր, վոր  
հիսուն վոսկիի խոսքն ընեք:

— Սնտուկներս կառնեմ, կերթամ յես:

— Կրնաք յերթալ, բայց հիսուն վոսկին  
տալին յետքը:

— Զեմ տար:

— Կուտաք:

Կհասնին Ծաղկի փողոց, ուր յեկած եյին  
նաև քահանայն, սափրիչն ու տիկին Շուշան:

— Գնացեք, մեկդի գացեք, յերեսնիդ  
տեսնել չեմ ուզեր, պոռաց Արիսողոմ աղան  
տեսնելով զանոնք:

Հետո դուռը զարկավ, ներս մտավ և ըս-  
կըսավ սնտուկները կապել ի զարմացումն տան  
տիկնոջ:

— Ինչո՞ւ կը ժողվըմիք կոր, Արիսողոմ՝  
աղա, հարցուց տան տիկինը:

— Յերթամ պիտի, պիտի յերթամ: Միտ-  
քըս փոխեցի. չըպիտի կարգվիմ:

— Բարկացուցի՞ն ձեղի:

— Վո՞չ:

— Ինչո՞ւ ուրեմն բարկացած եք:

— Բարկացած չեմ:

— Քուզում Արիսողոմ աղա, Մանուկ աղան  
հիսուն վոսկի պիտի ուզեր քեզմե, ուզե՞ց:

— Ուզեց:

— Սխալմունք մ՞ն յեղեր:

— Սխալմունք ե յեղեր:

— Այո՛, հիսուն վոսկի չպիտի ըլլա, այլ  
հարյուր հիսուն վոսկի: Սա բարությունն ըրե՛  
մեզի: Դուն քիպար մարդ ես: Մենք ալ քու սա-  
յեյնդ պարտքե կազատինք:

Արիսողոմ աղան սնտուկները կապելն, փո-  
ղոց ցատկելն , յերեք բեռնակիր բերելն ու  
սնտուկները դուրս հանելն մեկ կընե:

Սափրիչը քահանայն, տիկին Շուշան և  
Մանուկ աղան կհետեւին իրեն մինչև... հյու-  
րանոցին դուռը: Ուսկից կը մտնե Արիսողոմ ա-  
ղան, և կը հետանան իրեն հետեւողները: Բաց ի  
Մանուկ աղայեն, վորը կընկերանա Արիսողոմ  
աղային հաշիվները կարգադրելու համար:

Այն որեն իվեր Արիսողոմ աղան տեսնող  
չեղավ. միայն թե քանի մը շաբաթներ նույն  
չյուրանոցին դռան առջև կտեսնը վեյին խմբա-  
գիրք, հեղինակք, բանաստեղծք՝ իրենց թե՛  
տակը թղթյա ծրաբներ ունենալով:

Այն որեն իվեր Արիսողոմ աղան տեսնող  
Պոլիս յեկողն աղջիկ մ' իսկ տեսնելու ժամա-  
նակ չունեցավ և, ինչպես կըսեն, բուրդ ու  
բապուն փախալ մայրաքաղաքես: Բայց  
անջնջէլի հիշատակ մը թողուց գրական  
մարդոց մտքին մեջ:

Յերբ յերկու յերեք հեղինակք մեկտեղին,  
«ինտոր փախուցինք սա Արիսողոմ աղան» կը-  
սեն ու կը խնդան քիչ մը:

Իսկ յերբ գրամական տագնապի մեջ գըտ-  
նվին, «աստված, Արիսողոմ աղա մը խրկե  
մեզի» կըսեն և իրենց մտքով ալ կը հավելուն.  
«ինդրեցիք զԱրիսողոմ աղան, և ամենայն ինչ  
հավելցի ձեզ»:

Մեծատուններն ալ կհիշեն Արիսողոմ ա-

ղան, յերբ գրական մարդ մը անոնց մեկենասությունը խնդրե:

Արիսողոմ աղա չենք մենք, կըսեն:

Իսկ մենք, վոր ներկայացած չենք Արիսողոմ աղային, կը կհրատարակենք սույն գործն՝ վոչ այնքան մեղադրելու նպատակով ազգային խմբագիրներն, հեղինակներն, բանաստեղծներն և այլն, վորքան ներկայացնելու համար ապագա սերնդյան՝ ժամանակիս գրական մարդոց վողբալի կացությունն և զրականության մասին ազգային մեծատուններու սարսափելի անտարբերությունը:

Կ. 1  
Գ. 2



ՀՀ Ազգային գրադարան



NL0362207

50174

Գրե 75 Կ.  
ԿԱԶՄ 35 Կ.

ՀԱՐՄ.  
Հ2-1055

Ա. ԼԱՐՈՆՅԱՆ  
Высокочтимые  
попрошайки

Գև. ССР Армении, Еревань, 1934.